ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳՅՈՒՄՐԻ
2002

Հրատարակության հովանավորն է

Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Տեր- Ներսեսյանը՝

Առաջնորդ Կաթողիկե հայոց

Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի,

անդամ Սբ Ղազարի Հայկական ակադեմիայի

Խմբագրական հանձնախումբ՝

Սերգո Հայրապետյան (խմբագիր)

Արամ Քալանթարյան

Համազասպ Խաչատրյան

Գրիգոր Աղանյան

@ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի 2002թ.

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ (ՀԱԻ)

ՀԱՌԻՃԻ ՎԱՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1989-1991թթ.)

Հառիճ գյուղը Շիրակի մարզի այն հայտնի բնակավայրն է, որի հարավային կողմում, 12 հա մակերես ընդգրկող դարավանդների վրա տեղակայված են մ.թ.ա. III-I հազ. բրոնզիդարյան ամրոց-բնակատեղին, դամբարանադաշտը և վաղ միջնադարյան ամրոցը:

Գյուղի հարավային մասի մյուս համալիրը VII-XIII դդ. թվագրվող վանքն է, որի հոգևոր կառույցներն են՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը, երկհարկ աղոթասրահները, Ս. Աստվածածին եկեղեցին, գավիթը և այլն: Շինությունները կառուցվել են միակտոր բնական ժայռի վրա: Տարբեր ժամանակների այս բնակավայրերը իրարից բաժանված են նեղ ձորակով:

1987-91թ.թ. հուշարձանների պահպանության գլխավոր վարչությունը ձեռնամուխ է եղել Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում XVII-XVIII դդ. կառուցված պարսպի վերաշարմանը: Նույն տեղում ՀԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատը զուգահեռաբար պեղումներ է կատարել եկեղեցու բակում: Աշխատանքների ընթացքում բնական ժայռի փորվածքի մեջ բացվել են մեծ և փոքր չափերի տարբեր խորության փոսորակներ, զոհարաններ, հեղման հարթակներ-առվակներ և այլ մանրամասներ: Շրջանաձև, ուղղանկյուն փոսորակներից մի քանիսը մնացել են միջնադարյան կառույցների հիմնապատերի տակ, մի քանիսը մինչև վերջին ժամանակները օգտագործվել են իբրև տնտեսական հորեր: Նույն արևմտյան պարսպին կից պեղումներով բացվել է բնական տուֆի ժայռի մեջ փորված մեկ ուրիշ շրջանաձև մեծ շինություն (տրամագիծը՝ 5.10մ, խորությունը՝ 2.5մ): Հատակին հայտնաբերվել են կենդանու ոսկորներ և քարե կուռք:

Պարսպի շարունակությունն է կազմում ժայռի եզրին բացված քարանձավը, որի տանիքի ծածկի քարերը իրենցից ներկայացնում են կողք-կողքի շարված մարդակերպ, կենդանակերպ, ֆալոսաձև տուֆե կերտվածքներ:

Քարե կուռք է հայտնաբերվել Հառիճի վաղ բրոնզեդարյան համապատասխան շերտում, որը թվագրվում է մ.թ.ա. III հազ. (Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ер., 1975, стр. 75):

Սա հիմք է տալիս հնագետ Աշոտ Փիլիպոսյանին ենթադրելու, որ կոթողների մի մասը ըստ ամենայնի վերաբերում է նույն ժամանակաշրջանին և հետագայում օգտագործվել է միջնադարում: III հազ. են թվագրվում ուղղանկյուն, երկարաձիգ, ուղղահայաց դիրք ունեցող հրաբխային տուֆից կերտվածքները, որոնց համաժամանակյա զուգահեռները հանդիպում են Շենգավիթում:

Ինքնատիպ է ֆալատիպ կառուցվածք ունեցող կոթողը, որը հավանաբար տեղադրված է եղել տուֆե հարթակի փոսորակներից մեկի մեջ, ներկայանալով իբրև պտղաբերության խորհրդանիշ:

Վերջին մարդակերտ կոթողը կիսանդրու տպավորություն է թողնում: Դիմային հատվածը լավ չի պահպանվել. նկատելի է ճակատը երիզող ատամնավոր վերջույթներով գլխազարդը: Նման արձաններ հայտնի են Դվինի, Գառնիի, Տոլքի (Երևանի արվարձան) հնավայրերից և հիմնականում վերաբերում են մ.թ.ա. I հազ. I կեսին:

Վերը ներկայացված փոտոդակների գոյությունը չի բացառում մ.թ.ա. III-I հազ. դրանց օգտագործման փաստը: Ըստ որում դրանք կարող էին ոչ միայն ծիսական, այլև կենցաղային դեր ունենալ: Նման կառույցներ այսօր հայտնի են Տիրաշենի, Ազարակի, Վերին Գետաշենի, Արմավիրի հնավայրերից: Սա մեկ անգամ ևս մատնանշում է վերջիններիս լայն կիրառության փաստը և երկարատև օգտագործման հանգամանքը:

Քննարկվող հնագիտական գտածոները որքան մեկնաբանելի են, այնքան էլ իրենց խորքում բազմաթիվ անհայտներ են պարունակում:

Այս առումով համանման յուրաքանչյուր գտածո լրացնում է ոչ միայն Շիրակի, այլև Պատմական Հայաստանի նյութական և հոգևոր հնագույն մշակույթի մեզ համար տակավին անհայտ շերտեր:

ԼԱՐԻՍԱ ԵԳԱՆՅԱՆ (ՇԵԹ, ՇՀՀԿ)

ՍԱՐԱՏԱԿԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Արթիկի շրջանի Սարատակ գյուղում 2000թ. հուլիսին բացվեց քարարկղային թաղում: Տարիներ առաջ ջրագծի համար փորված և չշահագործված խրամատի մեջ, դամբարանի տեղում փորվել է ջրագծի խողովակաշարի խրամատ: Խրամատը փորելիս դամբարանի հյուսիսային կողմն ավերվել է:

Դամբարանի պահպանված մասը հյուսիս-հարավ ձգվածությամբ ուղղանկյուն էր՝ 250սմ երկարությամբ, 130սմ լայնությամբ և 84սմ խորությամբ: Պատերը եղել են երկշարք՝ կառուցված կոպտատաշ քարերով: Հարավային պատը պահպանված էր ամբողջությամբ, իսկ արևմտյան և արևելյան պատերը՝ մասամբ:

Կոպտատաշ տուֆից երկու հսկա սալաքարեր ծառայել էին որպես ծածկասալեր, որոնցից մեկը տեղում էր, մյուսը ջարդոտվել և հեռացվել էր խրամատը փորելիս: Դամբարանի հյուսիսային կողմում, խրամատից հանված հողակույտի մեջ, պահպանված ծածկասալի կողքին հայտնաբերվեց 70սմ բարձրությամբ, հատած կոնի ձև ունեցող մի ստելլա: Պեղման ընթացքում նույնպիսի մի ստելլա հայտնաբերվեց դամբարանի հարավ-արևմտյան անկյունում:

Շշահագործված խրամատը հետագայում վերածվել է ոռոգման առվի, և ջուրը քայքայել է ինչպես կմախքը, այնպես էլ ուղեկցող նյութերը: Ճահճի վերածված դամբարանափոսում ննջեցյալի ունեցած կողմնորոշումն ու դիրքն անհայտ են: Հյուսիսային կողասալի մոտ պահպանվել են ալյուրի վերածված ոսկորների մնացորդներ, մարդու և ձիու ատամներ: Մինչ ծածկասալերը դնելը դամբարանը մոտ 30սմ լցվել էր միջին մեծության գլաքարերով՝ բեկորների վերածելով ուղեկցող խեցեղենը, որի մեջ կան անկանք, փքված իրանով, երկկանքանի և փոքր, գնդաձև իրանով, կեղծ ելուստավոր ունկերով անոթների մասեր:

Արևմտյան պատի տակ գտնվեց 7սմ տրամագծով զանգվածեղ, ծայրերում աստիճանաբար բարակող մի օղակ, որն հավանաբար ձիու լծասարքի մաս է: Դամբարանի այս հատվածում գտնվել են նաև գլխիկները դեպի հյուսիս, երկու շարքով՝ յուրաքանչյուրում կողք-կողքի դրված չորսական նետասլաք և առաջին քառյակին ուղղահայաց՝ գլխիկներն արևմուտք ևս երկուսը:

Տասը նետասլաքներից յոթը սովորական են, երեքը՝ սկյութական տիպի պոչուկավոր:

Արևելյան պատին կիպ գտնվեց ուղիղ, աստիճանաբար նեղացող շեղբով երկաթե դաշույն: Շեղբի երկարությունը 19,5սմ է, հիմքի մոտ լայնությունը 3սմ, կոթի մասը կոտրատված է, բեկորների ընդհանուր երկարությունը՝ 12-13սմ:

Հյուսիսային անկյունում գտնվեցին սարդիոնից 3մմ-15մմ տրամագծով, կլորավուն և սեղմված գնդի ձև ունեցող բազմաթիվ ուլունքներ և ուլունքաշարի բրոնզյա ութ բաժանարարներ: Սրանք 12մմ երկարությամբ, 5մմ լայնությամբ ուղղանկյուն հիմքով, 1սմ բարձրությամբ, ներճկված կողերով բուրգի ձև ունեն, որոնց վերին մասում զուգահեռ արված են երկու միջանցիկ անցքեր: Բացառությամբ սրանց, մետաղյա մնացած իրերը խիստ քայքայված և կոտրատված են:

Դամբարանը, ըստ Հայաստանի և հարակից շրջանների համանման համալիրների ուղեկցող նյութերի համադրության տվյալների, նախապես թվագրվում է մ. թ. ա. 8–6-րդ դարերով:

ЖОРЕС ХАЧАТРЯН, АСМИК МАРКАРЯН (ИАЭ)

ЭРЕБУНИЙСКИЙ КЛАД РИТОНОВ

Найденный на территории городских кварталов Эребуни и дошедший до нас в количестве четырех серебрянных предметов клад, является коллекцией единых по культовому содержанию и различных по времени и стилю уникальных сосудов-ритонов.

1. Ритон со скульптурной протомой в виде всадника типологически и стилистически заметно выделяется не только среди остальных предметов самого клада, но и среди изделий ахеменидской торевтики, к которой он несомненно принадлежит. По единодушному мнению ряда ученых (Б. Аракелян, Г. Тирацян и др.) ритон относится к послеурартскому времени (Vв. до.н.э.).

Проведенный детальный иконографический и стилистический анализ скульптурной части ритона, сопоставление его с известными произведениями ахеменидской монументальной и мелкой пластики с изделиями торевтики и образцами глиптики V-IVвв. до. н. э. показали, что эребунийский ритон может быть датирован первой половиной IV. до. н. э. Об этом свидетельствуют такие детали оформления раструба сосуда, как его совершенно гладкие стенки, сильно вытянутая и удлиненная форма кубка, а также гнезда на сгибах передних ног коня, предназначенных для инкрустации цветными камнями или эмалями. О принадлежности к художественному стилю северо-западных областей Ирана и сопредельных центров древней Армении с живущими традициями урартской металлической пластики свидетельствует мотив сидящей в ритуальной позе лошади с божественным наездником. Древневосточная условно-статичная поза, заметное нарушение пропорций между отдельными частями фигуры человека и коня, эклектичность форма ритона,выражающаяся в соединении цельной скульптурной группы коня и наездника с длинным

кубком, а также некоторые другие детали позволяют считать его изделием провинциальной художественной мастерской позднеахеменидского времени (I половина IVвв. до.н.э).

2.Ритон с протомой коня по своему мотиву наиболее близок к первому и хорошо известен по персепольским рельефам. Прекрасная пластическая манера, сочетающая в себе явные реалистические черты, как-то обобщенная моделировка мускулатуры, легкий динамичный поворот головы, приоткрытая пасть животного вместе с условностью позы, стилизацией отдельных мышц на ногах линейным рисунком в виде "подковок", симметричное расположение отдельных прядей гривы, тщательная передача деталей конского снаряжения-позволяют причислить сосуд к изделиям греко-персидского круга IVвв. до.н.э. Гармоничные пропорции, оформление стенок кубка вертикальными канелюрами и плавное завершение раструба гладким фризом сближают его с произведениями малоазийских мастеров.

3.Третий ритон в форме кубка с соскообразным отверстием на дне и окаймлением розеткой также относится к группе ритуальных сосудов. Общие пропорции сосуда- округлое тулово, широкое высокое горлышко и слегка отогнутый венчик, а также пояс из стилизованных листьев на гладких плечиках и орнаментация тулова плотным рядом вертикальных канелюр свидетельствуют о его принадлежности к ахеменидскому искусству (прямые аналоги имеются в Аму-Дарьинском и Ахалгорийском кладах). Несколько расплывчатые контуры и архаичный облик сближают его с аналогичными предметами из ахеменидских кладов и позволяют отнести его к чисто ахеменидскому стилю и датировать V-IVвв. до.н.э.

4. Ритон с протомой в виде головы бычка и сюжетной сценой на стенках короткого кубка наиболее ярко сочетает в себе черты греческого и восточного искусства в эпоху предэллинизма. Скульптурное исполнение головы бычка, композиция из четырех фигур на стенках кубка с изображением погребального пира, полное соответствие центральной мужской фигуры с иконографией древнегреческго бога врачевания Асклепия, женские фигуры в греческих нарядах, их прически, музыкальные инструменты, детали мебели, а также живописное и гармоничное сочетание восточных и греческих элементов в деталях одежды, что особенно четко прослеживается в изображении женщины с фиалой, яркие восточные образы в эллиннизированной художественной манере позволяют отнести этот ритон к наиболее интересным произведениям греко-персидского стиля, характерного для малоазийских культурных центров IV-ачала IIIв.до. н. э.

Обнаруженные во время раскопок цитадели города Эребуни в храме огня у алтаря две серебрянные милетские монеты, датируемые временем не ранее 478 года. до.н.э., вместе с другими серебряными и железными предметами и украшениями различного происхождения и времени (V- IVвв. до.н.э.) считаются священными преподношениями храму (Г.Саргсян).

Эребунийский клад серебряных ритуальных сосудов-ритонов, разных по времени и происхождению, также можно считать священным приношением в сокровищницу храма сатрапского центра - города Эребуни.

ФЕЛИКС ТЕР-МАРТИРОСОВ (ИАЭ)

О ЗЕМЛЕТРЯСЕНИИ III В. ДО Н. Э. В АРМЕНИИ.

С 1989 года экспедиция института археологии и этнографии АН Арм ССР совместно с краеведческим музеем Ширака при помощи французской археологической миссии проводит раскопки поселения и некрополя V в. до н.э.- III в. н. э, около с.Бениамин. Открыты дворцовые и хозяйственные комплексы, большой некрополь. Результатом работ является завершение исследований дворца и прилегающей к нему с юга территории. Проведенные на центральном холме исследования и раскрытие хозяйственного комплекса в западной части памятника позволили уточнить характер и периодизацию перестроек дворца, и выявить одно из природных явлений-землетрясение, происшедшее в Древней Армении. Этот вопрос являются темой нашего доклада.

Основание на холме большого дворца прямоугольной формы размерами 30 х 25м относится к V–IVвв. до н. э.. Основания стен дворца каменные. Фундамент был нивелирован слоем глины. На нем возвышались стены из сырцового кирпича. На втором этапе первого периода происходит ряд перестроек. Было проведено расширение каменной стены в восточной части и возведение двух новых стен сырцовыми кирпичами без каменного основания.

В конце IV в. до н.э. дворец подвергся перестройке. Происходит изменение внешнего вида и перестройка восточной части здания. Снаружи к стенам были пристроены плоские пилястры. Стены этого периода сооружаются в технике, сочетающей деревянный каркас и прессованную глину. Внутренние стены были украшены рельефами. Был засыпан каменный настил хлева. Судя по находкам в этом слое курильницы с протомами птиц, произошло изменение характера культа. В культовой части здания найдены большие торовидные базы.

Более радикальное изменение планировки дворца происходит на следующем этапе. В культовой части были возведены новые стены и перестроено помещение служившее дарохранилищем. Здесь найдены две целые базы и два обломка баз. Интерес представляет база, напоминающая персепольские, однако отличающаяся от них по форме. Она имеет низкий квадратный плинт, над которым возвышается большой, округлый тор с поверхностью, украшенной рельефно высеченными, крупными лепестками стилизованного растения. Над ним расположен еще один тор с возвышающейся в центре небольшой площадкой под основание колонны. Данная база представляет продукт воздействия культур Малой Азии и ахеменидского Ирана. Рельефно выступающие в виде гладкого жгута края

лепестков орнамента базы характерны для персепольских баз построек Артаксеркса I (середины V века до н.э.), что является датирующим для здания элементом. Отделенная стеной западная часть дворца имела светское назначение. Здесь найдена база персепольского типа лотосовидной формы с канелюрами. Общее число баз было 8. Базы изготовлены из черного туфа, колонны были деревянные. При перестройке дворца, происходит уничтожение ряда древних торовидных баз и использование их в качестве строительного материала при возведении новых стен.

Судя по поспешности перестроек и характеру используемого для строительства новых каменных стен материала, можно предположить, что причиной перестройки послужило стихийное бедствие–землетрясение. Судя по характеру расположения упавших остатков стен, можно предположить, что толчок землетрясения имел направление с востока на запад. Картина перестройки дворца сопоставима с картиной перестройки колонного сооружения в Армавире. Как представляется данное стихийное бедствие датируется IIIв. до н.э. и должно связываться с упоминанием Мовсесам Хоренаци (II,39) об изменении русла реки и холодных зимах. Указание об изменении русла реки Аракс позволяет говорить, что землетрясение было очень сильным и последствия его отразились на многих северных регионах северной части исторической Армении. Исходя из того, что события этого времени отразились в исторической памяти как связанные с древним Армавиром, вероятно следует это землетрясение именовать Армавирским.

Во II в. до н. э., при царе Арташесе, о чем можно судить по найденной здесь стелле царя, дворец подвергся радикальной перестройке. В конце II в. до н.э.- начале I в. до н.э., на его месте сооружен новый дворец с основаниями из огромных нетесанных глыб. Судя по неровности линий основания дворца строители были мало знакомы с техникой возведения стен из камня. В конце I в. до н.э., как можно судить по монетам императора Августа, этот дворец разрушается и его территория приходит в запустение. Центр памятника в эллинистическое время переносится на восток к реке Каркачан, где был возведен дворец нового типа и располагались жилые и хозяйственные комплексы. С середины IIв. поселение переносится еще далее на восток, куда уходит отступающая река Каркачан. При этом территория бывшего поселения превращается в некрополь в I-IVвв..

ՀԱՄԱԶԱՍՊ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՇԵԹ, ՇՀՀԿ)

ԲԵՆԻԱՄԻՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ 2002 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2002 թվականին Բենիամինի դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի հիմնական պեղավայրում, որը համապատասխանում է հուշարձանի առաջին տեղամասին, հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի աշխատանքների ընթացքում պեղումներ չեն կատարվել: Այստեղ իրականացվել

են միայն պահպանական միջոցառումներ՝ մաքրվել է բուսածածկույթը, կոնսերվացվել են փլուզման ենթակա մի քանի պատեր և շերտեր, պեղավայրի չափագրված և հետագա պեղումների համար ոչ հեռանկարային որոշ հատվածներ վերստին ծածկվել են հողով:

Պեղման աշխատանքները հիմնականում ծավալվել են դեռևս ապրիլին, պեղավայրից մոտ 200մ արևելք՝ Գյումրի-Երևան ավտոմայրուղու կողքին, որտեղով ճանապարհին զուգահեռ նախատեսվում էր անցկացնել Գյումրի-Մարալիկ ջրագծի 1-ին պեղավայրը շրջանցող հատվածը: Ջրագծի շրջանցող հատվածը այս մասում մոտ 170մ անցնում է հուշարձանի տարածքով և փրկարարական պեղումներ կազմակերպելու պատճառ հանդիսացավ: Շիրակի երկրագիտական թանգարանի արշավախմբի կողմից փորվեց և պեղվեց 165մ երկարությամբ և 1մ լայնությամբ խրամատ, որի խորությունը ըստ մշակութային շերտի հզորության, տարբեր հատվածներում տատանվում է 1,5 մ-3,2 մ: Որոշ հատվածներում ըստ անհրաժեշտության խրամատը լայնացվեց մինչև 5մ:

Պեղումների արդյունքում պարզվեց տվյալ հատվածի հստակ շերտագրությունը. հայտնաբերվեցին տարբեր շերտերին վերաբերող կառույցների պատեր, կենցաղային հորեր, քարից, երկաթից, ոսկրից պատրաստված աշխատանքային գործիքներ և մեծ թվով խեցեղեն:

Տեղանքն իրենից ներկայացնում է պայտաձև, հարթ դաշտ, որը յուրատեսակ գոգավորություն է արևմուտքից, հյուսիսից և հարավից եզրագծող բլրաշարի միջև: Դաշտը տարիներ շարունակ մշակվել է և մշակութային շերտը դուրս է եկել մակերես: Բարակ սևահողային ծածկույթ կա միայն հարավային ծայրում:

Հուշարձանի շերտագրությունն այստեղ նույնն է, ինչ մոտ 200մ դեպի արևմուտք գտնվող 1-ին տեղամասում, սակայն կառուցապատման սկզբունքի տեսակետից այն փոքր-ինչ տարբեր է: Եթե 1-ին տեղամասի մոտ 3000մ^2 պեղված տարածքում կառույցները շատ մոտ, կամ միահյուսված են, ապա այստեղ հայտնաբերված կառույցների միջև կան 15մ-30մ ազատ հատվածներ, որոնք ամենայն հավանականության եղել են բակեր: Այս հատվածներում վերին մոխրանման շերտին հաջորդում է բնակավայրի կենսագործունեության ժամանակաշրջանին վերաբերող սևահողի շերտ, որի մեջ խեցեղենի կամ այլ առարկաների բեկորներ չկային:

Վերին և ստորին շերտերը հստակ անջրպետված չեն, և դրանց տարանջատման սահման են հանդիսանում վերին շերտին վերաբերող պատերի հիմքերի և հայտնաբերված փոքր հորի բերանի մակարդակները: Վերին շերտը սկսվում է միջինը 1մ-1,2մ խորությունից:

Ստորին շերտը տարբեր հատվածներում ունի 0,5մ-1,5մ հզորություն: Այստեղ պահպանվել են որոշ կառույցների պատեր, որոնց մի մասը ինչպես և 1-ին տեղամասի պարագայում, ավերվել են անհայտ աղետի, կամ մեծ հրդեհի հետևանքով, իսկ որոշ հատվածներ վերակառուցվել և օգտագործվել են նաև երկրորդ շրջանում: Շինարարական տեխնիկան նույնն է: Պատերը երկշարք են՝ շարված կոպտատաշ բազալտով:

Վերին շերտից հայտնաբերված նյութերից ուշագրավ են որձաքարից պատրաստված երկանքի վերին քարը, որի անցքը դեռևս փորված չէ, սրաքարերը, կոկիչները: Երկաթյա առարկաների մեջ կան դանակների բեկորներ, մեկ

պայտ: Առանձնահատուկ ուշադրության են արժանի ներքևում ուղղանկյունաձև, վերևի կողմում կող, 4,5 սմ երկարությամբ և 3 սմ լայնությամբ երկաթյա 4 բարակ թիթեղներ, որոնց կողմնային մասերում կան 2-ական, իսկ վերին մասում 1 փոքր անցք: Անցքերն երևի արված են թիթեղները հագուստին ամրացնելու համար: Այս առարկաները զրահի մասեր լինելու համար բավականին բարակ են և կարող են ուրբաթարուրներ լինել:

Խեցեղենը հանդես է գալիս համարյա բոլոր տարատեսակներով՝ մեծ կարասների, կճուճների, քրեղանների, թասերի բեկորներով:

Գունազարդ խեցեղենը հիմնականում կիսագնդաձև կամ փոքր թասերի և պուլիկների բեկորներ է, որոնց մի մասն ունի կարմիր դաշտի վրա սևով արված նախշազարդում:

Համեմատած հիմնական պեղավայրի նյութերի հետ, զգալիորեն պակաս են տափաշշերի բեկորները: Խեցեղենի մեջ առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում չթրծված կարասի և կճուճի բեկորները, ինչպես նաև մեկ ամբողջական, եռանկյունաձև ձիթաճրագ:

Ստորին շերտում հայտնաբերվեցին երեք կենցաղային հորեր, որոնցից առաջինը գտնվում էր խրամատի կենտրոնական հատվածում, մյուս երկուսը՝ ծայր հարավային մասում, որը, մեր կարծիքով, բնակավայրի տվյալ ժամանակահատվածի հարավային սահմանն է: Առաջին հորը փորված էր ինչ-որ կառույցի արևելք-արևմուտք պատի արտաքին կողմում: Հորի բերանի վրա կար 10-15սմ հաստությամբ մոխրաշերտ, որը ծածկված էր միջին չափի սալով: Հորը լցված էր մոխրախառն և փայտածխի մնացորդներ պարունակող հողով: Այստեղից հայտնաբերվեցին կենդանու (երևի կով), ոսկորներ, երկաթյա մեկ դանակ, ամբողջական, կարմիր գունազարդմամբ, հարթ նստուկով մեկ թաս: Տպավորությունն այն է, որ այստեղ զետեղված էին զոհաբերված կենդանու ոսկորները, դանակը և հեղման թասը: Դրանք փոսում տեղադրելուց հետո հորի բերանին պատրաստվել էր մաքրագործման խարույկ և այնուհետև ծածկվել սալաքարով:

Բնակավայրի ծայրամասում հայտնաբերված փոսերը հիմնականում լցված էին խեցեղենի բեկորներով, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում խոհանոցային, կրակից քայքայված և մրի հաստ շերտով պատված տարբեր չափի կճուճները, պուլիկները և թասերը: Սրանց հետ միասին կային նաև կարմիր գունազարդմամբ կիսագնդաձև, հարթ նստուկով թասեր, կճուճներ և պուլիկներ: Գունազարդ ամանների ընդհանուր թվի մեջ խիստ սակավ էր նախշազարդ խեցեղենը: Հիմնականում դրանք կարմիր դաշտի վրա սևով և աստառի վրա միայն կարմիրով արված զարդանախշեր են: Գոտածոների մեջ առանձնանում են կարմիր գունազարդմամբ, համարյա ամբողջական կիլիկը, բաց -շագանակագույն աստառի վրա ներքին սև ցանցկեն զարդանախշի համադրությամբ այծի պատկերներով ափսեն:

Հայտնաբերված նյութերով ստորին շերտը թվագրվում է մ.թ.ա. 1-ին դարի երկրորդ կեսով և մ.թ. 1-ին դարի սկզբով, վերին շերտը՝ մ.թ. 1-ին դարով և մ.թ. 2-դ դարի սկզբով:

Այս թվագրման օգտին են խոսում նաև հարավային ծայրում, մակերեսին պահպանված ինչ-որ շարվածքների հետքերը և բարակ սևահողային շերտի միջից հայտնաբերված սև և մոխրագույն սանրաքաշ խեցեղենի նյութերը:

2002թ. հիմնական պեղավայրից մոտ 200մ արևելք կատարված պեղումների արդյունքները խոսում են ժամանակի ընթացքում բնակավայրի աստիճանաբար դեպի արևելք տարածվելու վարկածի օգտին:

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ (ՀԱԻ)

ՍԱՍԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ»

1. Հայաստանի Պատմության պետական թանգարանում կնիքների անհատական հավաքածոյի N 409–ի տակ պահվում է խալցեղոնից օվալաձև սասանյան մի կնիք, որը փորագրված է դեմքով դեպի ձախ իշխանավորի դիմանկարով և թանգարանում է հայտնվել Գյումրուց:

Պատկերն աչքի է ընկնում կատարյալ հղկվածությամբ՝ կանոնավոր մշակված դիմագծեր, սրածայր մորուք: Քուղով փաթաթված մազերը ստեղծել են գլանաթմբիկ, իսկ հագուստը պատկերված է դեպի ուսերը հասնող հորիզոնական գծազարդերով:

Դիմանկարը շրջբոլորող պահլավերեն արձանագրությունը (ընթերցվել է Ա. Զոհրաբյանի կողմից) հետևյալն է. SM SPYP (Nam-Veh), որը նշանակում է «Քարի անուն» այսինքն (Աստծոյ անուն): Նմանատիպ կնիքները աշխարհի տարբեր թանգարաններում հազվագյուտ չեն, բայց տվյալ դեպքում կնիքը գիտական շրջանառության մեջ է մտնում առաջին անգամ և լրացուցիչ փաստարկ է Շիրակի V-VIդդ. պատմամշակութային փուլի հետազոտման գործում:

2. Ն. Մառի կողմից Անիի պեղումների ժամանակ հայտնաբերվել է սերդոլիկից սասանյան մոնոգրամայով մի գողտրիկ ուլունք, որը համաժամանակյա է վերոհիշյալ կնիքին:

3. 1908 թվականին Անիի հերթական պեղումների ժամանակ բացվել է մի փոքրիկ եկեղեցի, որի նախնական հատակագիծը ըստ մասնագետների (Ն. Մառ, Ստ. Մնացականյան) կրում էր ինչ-որ սասանյան հոգևոր շինության առանձնահատկությունները:

4. Եթե այս ամենին ավելացնենք V-VIIդդ. բավականին լավ հետազոտված Շիրակի վաղ միջնադարյան մեմորիալ կոթողները, ապա կարելի է որոշակի գաղափար կազմել Հայաստանի այդ տարածաշրջանի մշակութային կյանքի մասին:

Բացառված չէ, որ մեր կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող 409 թվահամարի կնիքը լինի Անիից:

ԱՐՄԵՆ ՆԱԽՇՔԱՐՅԱՆ (ՇՇՀԿ, ՀԱԻ)

ԹՌՉՆԱԶԱՐԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆՈՒՄ

Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի ուսումնասիրության բնագավառում կենդանական զարդապատկերները և վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող թռչնազարդը ցարդ ներկայացվել են ընդհա-

նուր հատկանշական գծերով և առանձին ուսումնասիրության առարկա չեն եղել:

Թռչնազարդ պատկերները (թվով11) հանդիպում են երեք առանձին սյուժետային հորինվածքով՝ եռամաս (երկու թռչուն և կենաց ծառ), թռչներամ, ինչպես նաև առանձին թռչնազարդ և վերջինիս հետ ուղեկցվող սրտաձև զարդապատկեր:

Թռչնազարդ անոթների գունազարդման պարագայում օգտագործվել է բավականին հարուստ ներկապանակ: Միագույն օրինակների դեպքում կարմիր ֆոնը գունազարդվել է սևով, իսկ դարչնագույնը՝սև և կարմիր երանգներով: Բազմագույնի պարագայում դարչնագույն մակերեսը գունազարդվել է սևով և կարմրով, դեղնավունը՝ կարմիր և մուգ շագանակագույն ներկերով, սպիտակավուն դաշտը գունազարդվել է կարմիր և սև գույներով: Թռչնազարդը ուղեկցվում է նաև կենաց ծառ հիշեցնող, ալիքաձև, գոտենման, շղթայաձև, զիգզագաձև, աստղաձև, սրտաձև և շեղանկյունաձև զարդապատկերներով: Ըստ երևույթին, բոլոր ուղեկցվող զարդապատկերները ունեցել են որոշակի իմաստաբանական նշանակություն:

Չևակազմական առումով թռչնազարդը հանդիպում է թե՛ փակ և թե՛ բաց տիպի անոթներում՝զարդարելով վերջիններիս տարբեր մասերը:

Բաց անոթներից հիմնականում հանդիպում են կիսագնդաձև թասեր և պնակներ, փակ անոթներից՝տափաշշեր, օյնոխոյաներ և պուլիկներ:

Թռչնազարդում հանդիպող մյուս հետաքրքիր առանձնահատկությունը թռչունների պատկերագրության գծային եղանակն է: Վերջինս հայտնի է դեռևս վաղ հայկական ժամանակաշրջանից (եղջերուների պատկերագրություն, Արմավիր): Շատ հնարավոր է, որ հելլենիստական ժամանակաշրջանում տեղի է ունեցել անցում գծային փորագիր եղանակից դեպի գունազարդ գծային եղանակը: Քննվող սյուժետային հորինվածքները որոշակի աղերս ունեն Մինգեչաուրի, Սամաղլոյի և Իրանի «արդաբիլյան» ոճի գունազարդ խեցեղենի համանման օրինակների հետ:

Թռչնազարդ պատկերներով գունազարդ խեցեղենն ըստ երևույթին ունեցել է պաշտամունքային նշանակություն: Ընդ որում, պատկերված թռչուններից մի քանիսը (բադ, կարապ) հին հավատալիքներում խորհրդանշել են տարբեր աստվածություններ: Իհարկե, դժվար է ասել, թե պատկերված թռչունները կոնկրետ ի՞նչ աստվածություններ են խորհրդանշել, սակայն թռչնազարդի և նրա հետ ուղեկցվող զարդապատկերների մանրազնին և հետագա բազմակողմանի քննությունները կարող են թռչնազարդ անոթների պաշտպամունքային դերին վերաբերող բազում հարցեր պարզել:

Թռչնազարդ պատկերներով գունազարդ խեցեղենը արժեքավոր է ոչ միայն գեղարվեստական տեսանկյունից, այլև մեծ նշանակություն կարող է ունենալ աղբյուրագիտական առումով՝ հելլենիստական Հայաստանի հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրության համար:

ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ (ՀԱԻ)

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍՊԱՍՔԻ ԵԶԱԿԻ ՆՍՈՒՇ ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԻՑ

1. *Իրանական գեղարվեստական մետաղի և կիրառական արվեստի եզակի նմուշներից է 1980-ականների սկզբներին Արթիկ-Լենինական ճանապարհահատվածում պատահաբար գտնված թասը: Այն այժմ ՀՀ ազգագրության թանգարանի (Սարդարապատ) սեփականությունն է:*
2. *Թասը բրոնզից է՝ պատրաստված ձուլելու և փորագրության հնարանքով: Ունի շրջանաձև լայն բերան (տր. 14.3սմ), ոչ բարձր իրան (բարձ. 4.6սմ), մի փոքր ուռուցիկ նստուկ, հատակին՝ պարսկերեն արձանագրություն: Անոթը, շնորհիվ իրանը ներքուստ և արտաքուստ հարդարող զարդանկարների, արժանի է առանձնահատուկ ուշադրության: Այն կերտող վարպետը գործադրել է իր ողջ հմտությունն ու վարպետությունը, գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ արարելու գեղագիտական բացառիկ մի գործ, բացառիկ ոչ միայն կերտվածքի կատարելությամբ, այլև զարդապատկերների բազմազանությամբ ու հարուստ բովանդակությամբ:*

Թասն արտաքուստ հարդարում են ձվածիր շրջանակները՝ թփակալած շիվերով, երգող թռչունների, տարաբաժան դիմապատկերների ու զանազան կենդանիների (քարայծ, եղնիկ, նապաստակ) պատկերներով: Մի փոքր այլ բովանդակություն ունեն շրջանակների զարդապատկերները. խեղկատակներ, ծաղրածուներ՝ առյուծի, փղի, արջի և աքաղաղի դիմակներով, թագավորական ընտանիքի անդամներ՝ անձը և սոցիալական աստիճանը շեշտող նշանակներով՝ թագեր, շքեղ գլխանոցներ և այլն:

Հատակին՝ ծաղկե շղթաների պերճ դաշտում, արտասովոր տեսարան է. առասպելական կենդանին՝ սֆինքսը (առյուծի պատկերով)՝ վիզը հսկա վիշապի երախում: Օձագալարները պատել են կենդանու ողջ մարմինը, թակարդել՝ ոչ մի կերպ թույլ չտալով նրան դուրս պրծնելու անսովոր վանդակից: Գնում է ահարկու պայքար, պայքար չարի և բարու, ուժի և զորության, երկրայինի և երկնայինի միջև:
3. *Մի փոքր այլ է թասի ներքին հարդարանքը, թեև զարդապատկերները կրկնվում են: Հատակին դարձյալ ծաղկալից վարդն է, կենտրոնում՝ առասպելական սֆինքսը՝ դաժան մրցապայքարում «զույգված» վիշապի հետ: Պատկերը գոտևորում են շրջանակներ. դրանցից յուրաքանչյուրում մեկական մարդկային կերպարանք՝ թագերով ու շքեղ գլխանոցներով կամ կենդանի (եղնիկ, քարայծ, նապաստակ և այլն), որոնցից վեր կրկին ձվածիր շրջանակների շարք է՝ դիմակավորված խեղկատակ- ծաղրածուների, երաժիշտների, երգող թռչունների, քեֆ անող բարձրաստիճան այրերի պատկերներով:*
4. *Ողջ պատկերաշարը կարծես մի բաց գիրք է արևելյան արքունական կենցաղի, տիրող վարք ու բարքի, գործող գրված ու չգրված օրենքների վերաբերյալ: Այն շքեղ խնջույքի ուրախ մի տեսարան է՝ համեմված երգ երաժշտությամբ, երբեմն դիպուկ, սրամիտ, երբեմն էլ կոպիտ ու գռեհիկ կատակող ծաղրածուներով, արքունիքում տիրող մեղկ բարքերով և այլն:*
5. *Անոթն իր գեղագիտական կերտվածքով, զարդապատկերների ինքնատիպ բովանդակությամբ (եվրոպական հարդարատարրերի առկայություն) վերաբերում է XIX դ. իրանական գեղագիտական դպրոցին և չունի իր զուգահեռը մեզանում:*

ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆ (ՀԱԻ)

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՄԲԵՐԴԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամբերդի նորոգչական աշխատանքները սկսվել են դեռևս անցյալ դարի 30- ական թվականներին, երբ Հովսեփ Օրբելու գլխավորած հնագիտական արշավախմբի աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ ամրացնել ճարտարապետական հուշարձանը՝ ապահովելով նրա երկարակեցությունը: 1963 թվականից, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի ծավալուն պեղումներ կատարելու հետ կապված կարիք զգացվեց նորոգել Կաթողիկե եկեղեցին, բաղնիքը, պարիսպները և միջնաբերդ-դղյակը: Այդ նպատակով կազմվեց հանձնաժողով (մասնակցությամբ նաև տողերիս հեղինակի), որը պիտի զբաղվեր միջնաբերդ-դղյակի նորոգման և ամրացման աշխատանքների իրականացմամբ: Նախատեսվում էր երկաթբետոնե օղակների միջոցով ամրացնել հուշարձանը, նաև՝ հետագա փլուզումներից ապահովելու նպատակով: Այդ ծրագրերից իրականացվեց միայն եկեղեցու նորոգումը: Հաջողվեց տեղադրել եկեղեցու երեսպատ քարերը, բացել հյուսիսային մուտքը: Սակայն կարճ ժամանակ անց նորոգման մեջ տեղ գտած լուրջ թերությունների պատճառով ջուրը նորից սկսեց ներծծվել և խոնավացնել հուշարձանը:Անավարտ մնացին նաև բաղնիքի նորոգման աշխատանքները:

Երերույքի տաճարի նորոգման աշխատանքները սկսվել էին դեռևս Նիկողայոս Մառի՝ Անի մայրաքաղաքում և Շիրակում ծավալուն պեղումներ կատարելու ընթացքում: Ավելի ուշ հայ ճարտարապետության հանգուցային օղակներից մեկի ուսումնասիրման աշխատանքներին ձեռնամուխ եղավ Ալ. Սահինյանը: 1987-88 թվականներին այնտեղ նախ հետախուզական, այնուհետև նաև մասնագիտական պեղումներ կազմակերպեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Շիրակի արշավախումբը: Դրա շնորհիվ բացվեց վանքի պաշտպանական համակարգը, Բագրատունյաց թագավորության Անի մայրաքաղաքի պաշտպանական մոտավոր արևելյան շղթայի մեջ Երերույքի օղակը բացահայտվեց իր բնական և արհեստական պաշտպանական կառույցներով: Դրանից հետո XX դարավերջին հուշարձանների պահպանության մարմինների միջոցով կատարվեց ամրացման աշխատանք: Կատարված աշխատանքը բոլորովին բավարար չէ, նրա հիմնական մասը դեռ առջևում է: Կանխելու համար տաճարի պատերի նոր ճեղքերն ու փլուզումները, հրամայական անհրաժեշտություն է կատարել հիմնական նորոգչական աշխատանք: Ինչ վերաբերում է մեր կողմից բացված պաշտպանական համակարգի առանձին հատվածների, նաև ջրամբարի արգելապատերի ամրացմանը, ապա ամրացման աշխատանքները պետք է շարունակել պեղման հետ միաժամանակ:

70-ական թվականներից մինչև այսօր Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Շիրակի արշավախումբը պարբերաբար պեղումներ է կատարել Երազգավորում, Ախուրյանում, Մարմաշենի վանական համալիրում, Տիրաշենում, Դպրեվանքում, Աշոցքում, Կարմրաքարում, Մայիսյանում, Կումայրիում, Գետքում, Բայանդուրում և այլուր:

Արշավախումբը պեղել է հիմնականում քանդման, հարթեցման և ոչընչացման վտանգի տակ (բացառությամբ Մարմաշենի վանքի) գտնվող հուշարձանները. Տիրաշենի ամրոցի պեղումները ձեռնարկվեցին, երբ տուրիստական կազմակերպությունները ուզում էին հուշարձանում տեղադրել պիոներական ճամբար: 1957 –59 թվականների աշխատանքը Կումայրիի տարածքում արդյունավետ եղավ, բացվեցին 5,7,10-րդ դարերին պատկանող ճարտարապետական առաջնակարգ կոթողներ: 1970 թվականին նախագծվեց և սկսվեց իրագործվել Լենինականի տուրիստական հանգրվանը: Ծանր պայքարի գնով հաջողվեց փրկել Շիրակ- Կումայրի- Լենինական բնակավայրի անձնագիրը: Հանգրվանի տարածքի տակ մնացին տարբեր հազարամյակների պատկանող կրոնական, պաշտպանական, տնտեսական կառույցներ: Նախագծի վերանայմամբ և նորը գծվելով հնարավոր եղավ մասամբ փրկել Կումայրու կենտրոնական թաղամասի հիմնական կառույցները: Պեղման և մաքրման աշխատանքները իրականացվում էին մինչև 1988 թվականի դեկտեմբերի 7-ը:

Երազգավորում հիմնական աշխատանքները ծավալվեցին 70-80-ական թվերին: Բացված հնագիտական ու ճարտարապետական արժեքները (առանց հաշվի առնելու արշավախմբի բազում բողոքներն ու ահազանգերը) քանդվեցին և տեղափոխվեցին Ջրափիի մոտ գտնվող նորակառույց վանքի տարածք:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (ԳՊՄԻ)

ԿՈՒՄԱՅՐԻ-ԳՅՈՒՄՐԻՆ ԳՅՈՒ՞Ղ, ԹԵ՞ ՔԱՂԱՔ

Իր ավելի քան երկուսուկես հազարամյա պատմության ընթացքում, այս բնակավայրը պատմական աղբյուրներում ներկայանում է միանգամայն տարբեր, երբեմն իրար հակասող կարգավիճակներով:

Առաջին անգամ Կումայրին ուրարտական Իրդանիունի անվամբ հիշատակվում է Մարմաշենից ոչ հեռու գտնված մ.թ. ա. VIII դարի մի սեպագիր արձանագրության մեջ, որտեղ բավականին հստակ նշվում է նաև բնակավայրի կարգավիճակը՝ քաղաք (□. □□□□□□□□□□□□, □□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□, 1960): Այնուհետև, արդեն Կումայրի անվամբ՝ բնակավայրը հիշատակվում է մ.թ. VIII դարում Ղևոնդ Պատմիչի կողմից՝ 774թ. հակաարաբական ապստամբության առիթով («… հասաներ ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի», «Պատմութիւն», 1887):

Հայ մատենագրության մեջ Կումայրին (Կումրի ձևով) կրկին հիշվում է միայն 1209 թվականին, այս անգամ՝ իբրև գյուղաքաղաք: Մատենադարանում պահպանված մի ձեռագիր հիշատակարանում (թիվ 1886, 1 թերթ) ասվում է. «Ես մեղուցեալս և յետինս ի կրոնաւորս Ովասափս, որ էի ազգաւ և տոհմիւ ի մեծ գեաւղաքաղաքէն Կումիրոյ…»: Այսինքն, 1209 թվականին Կումայրին գյուղաքաղաք էր, այն էլ՝ մեծ: Եվ քանի որ հետայսու Կումայրի, Կումիրի կամ որևէ այլ անվանումով մինչև 19-րդ դարի սկիզբը նա չի հիշատակվում ո՛չ

Բագրատունիների շրջանի գյուղաքաղաքների մեջ և ո՛չ էլ Սիմեոն կաթողիկոսի կողմից կազմված «Ջամբռում», հետևաբար Մատենադարանի վերոհիշյալ ձեռագիրը ոմն Հովասափի մասին իրավամբ կարելի է համարել Կումայրու, որպես գյուղաքաղաքի, միակ վկայագիրը հայ պատմագրության մեջ:

Այնուհետև բնակավայրը կրկին հիշատակվում է միայն 19-րդ դարասկզբին, այս անգամ արդեն Գյումրի կամ Գումրի ձևով՝ կապված իշխան Յիցիանովի առաջին Երևանյան արշավանքի հետ (տե՛ս □. □□□□□□□□□, □□□□□□□□□□□ □□□□□, □□□□□□□□ □ □□□□□, 1901):

Թեև պատմական գրականության մեջ այն կարծիքը կա, որ մինչև 1837-40թթ. Գյումրին գյուղ է եղել, սակայն կան նաև հեղինակներ, որոնք այս հարցում ունեցել են իրենց միանգամայն հակառակ կարծիքը, ըստ որի՝ այն քաղաք է եղել արդեն 19-րդ դարի առաջին տասնամյակից սկսած: Ժամանակագրական առումով նրանցից առաջինը Գյումրին քաղաք է անվանում Ֆրեյգանը, որ 1812թ. Թավրիզ մեկնելիս անցել է Գյումրիով, տեսել նրա հին բերդը: Իր ուղեգրություններում Գյումրին որպես քաղաք է հիշում նաև անգլիացի նշանավոր նկարիչ և ճանապարհորդ Ռոբերտ Փորտրը՝ մասնավորապես ընդգծելով այնտեղ «ամայացված հին բերդի և բավականին մեծաթիվ պահակազորի» առկայության փաստը (տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, 1934): Իր նախորդներից մի փոքր տարբերվող, սակայն ընդհանուր առմամբ նույնանման կարծիք ունի նաև Լեոն, երբ գրում է, թե «19-րդ դարի սկզբներին Գյումրին հայաբնակ քաղաք էր և գյուղի վերածվեց միայն 1826 թվականին՝ Հյուսեին Ղուլի խանի արշավանքից հետո (Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, 1984):

Համոզված ենք, որ ինչպես ամրոցի (Ֆրեյգան), այնպես էլ մաքսատան (Կ. Գան) առկայությունը դեռևս բավարար հիմքեր չեն պնդելու , թե 19-րդ դարասկզբին Գյումրին քաղաք էր:Ավելին, գավառի ժողովրդագրական դրությունը փաստող տվյալները վկայում են, որ դարասկզբին անհնարին էր Շորագյալում որևիցէ, նույնիսկ փոքր, քաղաքի գոյությունը, երբ ամբողջ գավառում հաշվվում էր ընդամենը 2000 մարդ կամ 450 ընտանիք: Անընդունելի է նաև Փորտրի տեսակետը. բնակավայրում բավականին մեծաթիվ պահակազորի առկայությունը դեռևս վկայություն չէ նրա՝ քաղաք լինելու մասին: Անբացատրելի է մնում, թե ինչպես կարող էր Լոնդոնում ծնված ու մեծացած եվրոպացին քաղաք համարել 1817 թվականի Գյումրին, երբ այդ ժամանակ ամբողջ Շորագյալի գավառում ժողովրդագրական վիճակը հասել էր իր աղետալի սահմանագծին՝ ընդամենը 174 ընտանիք կամ 870 մարդ: Վերոհիշյալ նկատառումներով չի կարելի ճիշտ համարել նաև Լեոյի կարծիքը:

Բնակավայրի կարգավիճակի անորոշության պահպանման մեջ քիչ նշանակություն չուներ նաև ռուսական իշխանությունների բռնած տարօրինակ դիրքը: Բավական է նշել, որ թեև 1804 թվականից Գյումրին ռուսական տարածք էր, այնուամենայնիվ մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակի վերջը պետական պաշտոնական փաստաթղթերում շարունակում էր նշվել ոչ թե որպես գյուղ կամ քաղաք, այլ ուղղակի՝ բնակավայր (□□□□□, □. 2, □□□□□□□, 1868): Ամենայն հավանականությամբ՝ բնակավայրը մեծ է եղել գյուղ համարվելու և փոքր՝ քաղաք կոչվելու համար: Թերևս այս կերպ կարելի է բացատրել ռուսների վերոհիշյալ վարքագիծը:

Հարցը համեմատաբար որոշակիացավ 1812-17 թվականներին, երբ ժողովրդագրական վիճակի աղետալի անկումը Գյումրին իրոք վերածեց ընդամենը 50-70 տնից բաղկացած մի անշուք գյուղի: Ու թեև 1829-31 թվականներին բուռն ներգաղթի շնորհիվ Գյումրու բնակչությունը կտրուկ աճ ունեցավ (1350 ընտանիք), այնուամենայնիվ մինչև 1837 թվականը՝ մինչև Նիկոլայ Ա կայսեր հանրահայտ անդրկովկասյան ճանապարհորդությունը, այն ռուսական պաշտոնական փաստաթղթերում համարվում էր գյուղ և միայն նոր բերդի շինարարության ավարտից հետո ստացավ ազգաբնակչության կողմից երկար սպասված քաղաքի կարգավիճակ՝ արդեն Ալեքսանդրապոլ անունով:

ՆԱՏԱԼՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ (ԵՃՇԻ)

ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԴԵՐԸ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի Շիրակի գավառը ճարտարապետական հուշարձաններով ամենահարուստ շրջաններից է:

Դեռ վաղ միջնադարից այն դարձել է հայոց իշխանների նստավայր, որոնք այն վեր են ածել հուշարձան-կոթողներով զարդարված երկրամասի: Ամենաբազմազան կառուցվածք ու նշանակություն ունեցող շինություններ են կերտվել դարերի ընթացքում պատմական այս տարածքում, որոնց մասին շատ աղոտ տեղեկություններ է ունեցել աշխարհը, այն էլ շնորհիվ մի քանի եվրոպացի ճարտարապետների: Իսկ նրանք էլ, լինելով Հայաստանում շատ կարճ ժամանակով և ձեռքի տակ ունենալով հակիրճ տեղեկություններ հուշարձանների մասին, բոլորովին թյուր կարծիք էին տարածել մասնագետների շրջանում հայկական ճարտարապետության, նրա ծագման ու առանձնահատկությունների մասին:

Ուղիղ մեկ դար առաջ Թորոս Թորամանյանը ոտք է դրել Հայաստանի միջնադարյան ծաղկուն մայրաքաղաք Անիի հողին և իր կյանքը մինչև վերջ կապել հայկական ճարտարապետական հուշարձանների հետազոտման և դրանց տեղը համաշխարհային ճարտարապետության մեջ պարզաբանելու դժվարին գործին:

Մեծ հայագետ Ն. Մառի հետ համագործակցության ընթացքում կատարված մանրակրկիտ չափագրությունների արդյունքում ստեղծվել էր հուշարձանների մասին ամենարժեքավոր տեղեկություններով հարուստ շտեմարանը: Այն ընդգրկել էր ոչ միայն Անիի ամենանշանավոր շինությունները (Կաթողիկե, Տիգրան Հոնեցի, Ս. Փրկիչ, Գագկաշենի, Ապուղամրենց, Ս. Առաքելոց եկեղեցիները), այլև դեռ քիչ ուսումնասիրված բազմաթիվ մեծ ու փոքր եկեղեցիներ, մատուռներ, պալատական ու աշխարհիկ շինությունները, վաճառատունը, ամրոց-բերդերը, կամուրջները:

Այս հուշարձանների բացահայտումը նոր լույս սփռեց մինչ այդ անհայտ ճարտարապետության ոճական շատ առանձնահատկությունների վրա: Թ. Թորամանյանի պատկերացումները այս տարածաշրջանի ճարտարապետության և ընդհանրապես շինարվեստի վերաբերյալ: Այս գործընթացին շատ են

նպաստել նաև մեծ հետազոտողի բազմակողմանի ուսումնասիրության շրջանակները, որոնք չէին սահմանափակվում միայն փոքր տարածքներով ու ժամանակաշրջանով:

Ալեքսանդրապոլում բնակվելու տարիներին, տառապանքներով ու զրկանքներով լի պայմաններում, նա ոչ միայն չի դադարեցրել, այլև ընդլայնել է իր հետազոտությունների աշխարհագրական տարածքը՝ ներառելով Շիրակ գավառի պատմական և ճարտարապետական հուշարձանները (Բագնայր, Բագարան, Հոռոմոս- Խծկոնք, Մարմաշեն, Շիրակավան): Առաջին անգամ մասնագետի կողմից չափագրվել ու թղթին են հանձնվել ինչպես հուշարձանների ծավալատարածական պատկերներ, այնպես էլ դրանց շատ արժեքավոր մանրամասներ՝ քանդակազարդ եզրագոտիներ, քիվեր, բուսական և կենդանական զարդանախշերով հարուստ բարավորներ, կամարներ, վարդյակներ ու խորշեր: Մանրակրկիտ ուսումնասիրության էր ենթարկվում դարավոր հողի շերտի տակից դուրս եկած յուրաքանչյուր բեկոր: Այդ տեղեկությունները կարող են լիարժեք լրացումներ լինեն այդ շրջանի ճարտարապետական դպրոցի առանձնահատկությունների բացահայտման գործում:

Այս աշխատանքների մասին 1908թ. Ռուսական Կայսրական գիտությունների ակադեմիայի նշանավոր ակադեմիկոսներ Ն. Սուլթանովի և Մ. Պրեոբրաժենսկու կողմից ստորագրված փաստաթղթերում նշվում է, որ Թ. Թորամանյանի կատարած չափագրություններն ուգծագրերը պարունակում են հնագիտական հարուստ նյութ, որը մինչ այդ եղել է անհայտ և այդ պատճառով դրանց շարունակումը մեծ նշանակություն ունի ապագայի համար:

Ցավոք, մեծ ճարտարապետը ինքն անձամբ չի կարողացել ամբողջացնել իր արժեքավոր հետազոտումները, այլ միայն հրատարակվել առանձին հուշարձանների ժողովածուների և վերլուծական հոդվածների տեսքով՝ 1905-1911թթ.: Առաջնոր ունենալով այժմ պահպանված գծագրերը, պետք է ցավով նշենք, որ դրանք շատ փոքր պատառիկներ են այն հսկայական ծավալով գրաֆիկական աշխատանքների, որ կատարվել էին բազմաշարչար ճարտարապետի կողմից:

Մեծ արվեստագետի փորձն անհրաժեշտ եղավ նաև 1923թ. դեկտեմբերին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի ստեղծման գործում, որի սկզբնական գաղափարը տվել է հենց ինքը դեռ 1919թ.՝ այն ժամանակ լուսավորության նախարարին գրած իր առաջարկությամբ: Առաջին անգամ պետական հովանավորության ներքո փորձ է կատարվում պահպանության տակ առնել դարավոր ժառանգությունը, դասակարգելով ու ցուցակագրելով ճարտարապետական հուշարձաններ, որի ընթացքում հատուկ ուշադրություն էր դարձվելու նրանց տեղադրման, կառուցման ժամանակաշրջանի, կառուցողի, ծավալատարածական կառուցվածքի ու ներկա վիճակի վրա: Նման սկզբունքով հաշվառում են առաջին 80 հուշարձանները և դրանց հիմնական մասը նույնպես Շիրակի տարածքի կառույցներ էին:

Սա եղել է ազգանվեր այն գործունեության սկիզբը, որ մինչ օրս կատարում է հուշարձանների պահպանության գլխավոր վարչությունը՝ չնայած իր տարեցտարի փոփոխման ենթարկվող աշխատառոճով և անվանումով, սակայն հիմքում պահպանելով ականավոր ճարտարապետի ոգու և մտքի լուսավոր երազանքը:

ՍՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ (ԱԻ)

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊ ԳՅՈՒՂԻ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սարակապ գյուղի կենտրոնում գտնվող, իր հորինվածքով հայկական ճարտարապետության մեջ եզակի, Սբ Աստվածածին եկեղեցու հիմքերը պատահաբար բացվել են XIXդ. երկրորդ կեսում՝ հողային աշխատանքների ժամանակ: 1885-87թթ. նրա որմնախարսխի վրա նույն հատակագծով նոր եկեղեցի է կառուցվել: Նախնական շենքից պահպանված է եղել Հայաստանի վաղ քրիստոնեական ճարտարապետությանը բնորոշ երկաստիճան լայն որմնախարիսխը՝ շարված սև տուֆի սրբատաշ խոշոր քարերով: Եկեղեցին վերակառուցվել է մինչև գմբեթի թմբուկի ստորին մասը և ծածկվել փայտով:

Սարակապի Սբ Աստվածածին եկեղեցին ունի քառախորան հորինվածք, խորանի միջև լրացուցիչ եռանկյունաձև ծավալներով, որոնք դրսից շեշտված են: Արևելյան այդ ծավալներից մուտք կա դեպի Ավագ խորանի երկու կողմերում տեղադրված ավանդատները, իսկ արևմտյանները փակուղի են:
Սարակապի Սբ Աստվածածին կենտրոնագմբեթ եկեղեցին իր հորինվածքով առնչվում է հայկական ճարտարապետության մշակած «հռիփսիմեատիպ» եկեղեցիների այն տարբերակին, որն արևմտյան կողմում ավանդատներ չունի (Զորադիրի Սբ Էջմիածին, VI-VIIդդ.): Ընդհանրություն կա այս երկու հուշարձանների միջև՝ կենտրոնագմբեթ քառախորան հորինվածք, խորանների անկյուններում լրացուցիչ ծավալներով, դրսից շեշտված աբսիդներով: Սակայն կա և էական տարբերություն՝ Զորադիրում անկյունների ծավալները երեք քառորդ շրջանագծի ձև ունեն, իսկ Սարակապում նրանք եռանկյունաձև են, և այս տիպը փաստորեն փակուղային եղավ ու հետագա կիրառում և զարգացում չունեցավ: Լինելով քառախորան հուշարձաններից դեպի «հռիփսիմեատիպ» եկեղեցիները տանող անցումային ձևերից մեկը, Սարակապի Սբ Աստվածածին եկեղեցու հորինվածքի թվագրումը VIդ. երկրորդ կեսով միանգամայն հավանական է և համապատասխանում է կառույցի ճարտարապետության առանձնահատկություններին:

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՃԱԹԻ)

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԻԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔՈՒՄ

Անին և նրան հարող շրջանները Հայաստանի հնագույն ժամանակաշրջաններից բնակեցված տարածքներից են (դոլմեններ, մենհիրներ, կիկլոպյան կառույցներ, «քարտուններ», գերեզմանոցներ, Անահիտ աստվածուհուն նվիրված տաճար, բնակավայրեր, բերդեր, ամրոցներ, քաղաքներ և այլն): Բուն Անիի տարածքում դրանք նույնպես շատ են եղել, սակայն մեզ հետաքրքրողը Անիի քրիստոնեական շրջանին վերաբերող հուշարձաններն են: Հնագույններից է Գրիգոր Լուսավորչի անմիջական մասնակցությամբ քրիստոնեական եկեղեցու վերածված Աղջկաբերդի հեթանոսական տաճարը:

Այստեղից հետևում է, որ քրիստոնեական եկեղեցիներ կառուցողները քաջատեղյակ էին հայ հեթանոսական շրջանի հոգևոր պաշտամունքային կառույցներին, նրանց տիպաբանական, հորինվածքային, շինարարական և այլ առանձնահատկություններին: Այսինքն, քրիստոնեական շրջանի հուշարձաններում, նրանց հորինվածքային ելակետերում չէին կարող չկրկնվել, չկիրառվել ավելի վաղ ժամանակաշրջաններում լայն տարածում գտած աշխարհընկալման, ապրելակերպի, պաշտամունքային, կառուցողական և մշակութային մտաբմբռնումները:

Հետազոտությունները թույլ են տալիս հաստատել, որ Անիի քրիստոնեական շրջանի ճարտարպետական հուշարձաններն իրենց վրա կրում են Անիի և Հայաստանի մինչքրիստոնեական աշխարհընկալման և մշակույթի և մասնավորապես երկիր-երկինք, մարդ-երկիր-տիեզերք և այլ խորհրդանշանային մտածողության արդյունք հանդիսացող խորհուրդների ազդեցությունը: Դրանցից շատերը կիրառվել են ուղղակիորեն, իսկ շատ շատերը կրել քրիստոնեական ազդեցություններ, վերափոխվել և վերաիմաստավորվել: Դրանցից են.

ա) Արևելք ուղղվածության պահպանումը պաշտամունքային կառույցների հատակագծային և ծավալատարածական հորինվածքներում: բ) Ուղղանկյուն և կլոր լուծումները՝ հատակագծային հորինվածքներում: գ) Քառակողմ և եռաբաժան համակարգերի կիրառումը հատակագծային և ծավալատարածական հորինվածքներում: դ) Զարդանախշի, նյութի և գույնի խորհրդանշանային կիրառումը հոգևոր-պաշտամունքային և հասարարակական կառույցների ներքին և արտաքին տարածքների կազմակերպման գործընթացում: ե) Խորհրդանշանային մտածողության կիրառումը «փոքր» ճարտարապետական հորինվածքներում, դեկորատիվ-կիրառական արվեստներում, մանրանկարչությունում և այլն: զ) Աշխարհի քառակողմ բաժանման համակարգի կիրառումը Անիի քաղաքաշինական հորինվածքում և այլն:

Անիի ճարտարապետական կառույցները, ըստ հատակագծային լուծումների, հիմնականում բաժանվում են երկու խմբի՝ կլոր և ուղղանկյուն: Այս պատկերային ձևերը, որ հանդիպում են կառույցների նախ հատակագծային և ապա ծավալատարածական հորինվածքներում, հայտնի խորհուրդներ ունեն: Այսպես՝ ուղղանկյունը, որպես հորիզոնական առանցք, երկիր, իգական սկիզբ, նախաստեղծ մայր աստծո պատկեր և այլն և կլորը՝ որպես երկինք-տիեզերք, արև-աստղ, արական սկիզբ, նախաստեղծ հայր աստծո պատկեր, հավերժ և այլն (Տես՝ □□□□□□□□□□□□□ □□□□□□□□□, □□□□□□□, □□□□-□□□, □. 2000; Խորանների մեկնություններ, Եր., 1995):

Ուղղանկյուն հատակագծային լուծումներով հորինվածքներ են Մայր Տաճարը, Պալատի եկեղեցին, ս.Գրիգորը (Տիգրան Հոնենցի), ս.Առաքելոցը:

Կլոր հատակագծային լուծումներ ունեն ս.Փրկիչը, ս.Գրիգորը (Գագիկաշեն), ս.Գրիգորը (Աբուղամրենց),Հովվի եկեղեցին, Փոքրիկ եկեղեցին:

Բացի հատակագծային և ծավալատարածական լուծումներում հանդիպող կլոր և ուղղանկյուն (քառակուսի) հորինվածքներից, Անիի ճարտարապետական կառույցներում հանդիպում ենք այլ պատկերների և լուծումների, որոնցում առկա են այս կամ այն տիպի խորհրդանշանային մեկնությունները: Դրանցից են՝ ա) բուսական ծագում ունեցող (նոնենիներ և նոներ, խաղող, կենաց ծառ,

ծաղիկ, բողբոջ, սերմ, պտուղ և այլն), բ) կենդանական ծագում ունեցող (առյուծ,հովազ, շուն, արծիվ, բազե, ցուլ, այծ, խոյ), գ) տարբեր երկրաչափական պատկերներ (ուղղանկյուն, քառակուսի, կլոր, եռանկյունի, խաչը և այլն):

Ասվածը ավելի պատկերավոր է դիտվում Անիի Մայր տաճարի հորինվածքում: Մայր Տաճարը (Անիի Կաթողիկե ս. Աստվածածին եկեղեցի) կառուցվել է 989-1001թթ թ. հ.: Հիմնադիրն է Հայոց թագավոր Սմբատ Բ.Տիեզերակալը: Հեղինակն է ճարտարապետ Տրդատը: Իր հորինվածքով այն հատակագծում ուղղանկյուն, քառամույթ գմբեթավոր կառույց է 24.7 x 34.3 մ չափերով: Անիի մայր տաճարը խորհրդանշել է վերածնված Հայկական պետության հզորությունը: Տաճարի ավագ խորանը ուղղված է դեպի արևելք, ունի երեք դուռ, հարավից, արևմուտքից և հյուսիսից: Բացի արևմտյան ճակատներից մնացած ճակատներում կան երկուական «հայկական խորշեր» (Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Եր.,2002, էջ 63): Խորհրդանշանային մեկնության տեսանկյունից մայր տաճարի հորինվածքը հետևյալն է՝

** Ուղղանկյուն հատակագծային լուծում, խորան՝ «գլուխ»-ընդգծված նախաստեղծ մայր աստծո պատկեր (տե՛ս Գեղամա լեռների ժայռապատկերները), նույն լուծումով ավագ խորանից աջ և ձախ տեղադրված ավանդատները:*

** Հատակագծային ուղղվածությունը դեպի արևելք, և շեշտված դռների տեղադրությունը՝աշխարհի քառակողմ բաժանման համակարգի դրսևորում:*

** Չորս մույթեր, չորս տարբեր, դրախտից սերվող չորս գետեր, կենաց ծառեր, երկինք -տիեզերքը պահպանող սյուներ, Աստծո տունը և հաստատությունը պահպանող չորս ավետարանիչներ (չորս կենդանիներ՝մարդը, առյուծը, եզը, արծիվը, որոնք խորհրդանշում են չորս ավետարանիչները՝ Մաթևոս, Մարկոս,Ղուկաս, Հովհաննես):*

** Չորս մույթ կամարների վրա հենված և բարձրացող թմբուկ-գմբեթ-կլոր հատակագծով-արական սկիզբ, նախաստեղծ հայր աստծո խորհրդանիշ-երկնային սահման:*

** Ընդհանուր գունային լուծում՝դեղին-արև աստված, աստվածածին և այլն:*

** Ուղղահայաց առանցքում եռամաս բաժանման համակարգ, որից առաջին հատվածը (երկնային մաս) կլոր թմբուկ և գմբեթ, ծայրին հանգչող «մարդահասակ արծաթե խաչը» -արև-արական սկիզբ-արեգակ-աստված, երկրորդ մաս (երկնային մաս) աստծո տուն - եկեղեցի, ուղղանկյուն հորինվածք (ուղղանկյուն խորանարդ) - երկիրը, իգական սկիզբ, երրորդ շերտ-անդր աշխարհ, ընդգծված ցոկոլային մաս մուտքի մոտ՝7 աստիճանով, պատերի երկայնքով՝5 աստիճանով :*

** Հատակագծում երեք մաս, ըստ լայնության և երեք մաս ըստ երկարության, երեք դասեր, եռաղասության համակարգ (տե՛ս Խորանների մեկնություններ, էջ 103):*

Նմանատիպ լուծումներ ունեն ճակատները, թմբուկը, գմբեթը և մանրամասները, որտեղ խորհրդանշանների կիրառումը կասկած չի հարուցում: Օրինակ՝ճակատներում առկա «հայկական խորշերը»: Նրանք խորհրդանշում են վերից վար տիեզերական (աստվածային) լույսը, ծագող և մայր մտնող արեգակի ճառագայթները:

Այսպիսով, Մայր տաճարի ծավալային (ճակատային) և հատակագծային լուծումներում առկա է քառաբաժան և եռաշերտ (եռադաս) համակարգի կիրառումը: Ողջ հորինվածքը բարձրացված է հողի մակերևույթից (երրորդ շերտ), որի վրա ամբողջանում է երկնային մասը՝ (երրորդ շերտ) Աստծո երկնային տունը: Այս հատվածի պատերի հարթությունների վրա որմնասյուն-կամարներով լուծումները կենաց ծառ-սյուներն են, որոնց խորհրդով մայր հողից կյանքի առաջացումը ձգտում է դեպի երկնային հարստության իմաստության- անմահության սահմանները: Եվ այստեղ ցածից վեր բուսած արմավենին է, որը մեզ բացահայտում է Դավթի խոսքը՝ ճշմարտությունը երկրից բուսավ, արդարությունը երկնքից երևաց:

Երկթեք տանիք (թռչուն)- երկինք, կամար-երկնակամար, կլոր՝ արև-աստված -հավերժ, ուղղանկյուն՝ երկիր, արծիվ՝ թռչուն երկինք և այլ հորինվածքները, դրանց կիրառումը կառույցի ներքին և արտաքին հարթություններում, ծավալներում, միջավայրի կազմակերպման ողջ գործընթացում, հաստատում են խորհրդանշանային մտածողության դրսևորումների կիրառումը Անիի Մայր տաճարի ընդհանուր ճարտարապետական համակարգում:

Այս և նման մոտեցումները նկատելի են նաև Անիի մյուս ճարտարապետական հորինվածքներում, առանց բացառության :

Նշանակում է՝ խորհրդանշանային աշխարհընկալման գաղտնիքները հաստ էին թե՛ պատվիրատուներին, թե՛ նախագծողներին, թե՛ կառուցապատողներին և հասկանալի՝ քաղաքացիներին: Դրանք իրենց մեջ ունեցել են խորին խորհուրդներ և անհայտ իմաստներ և ծածուկ գիտելիքներ, և դրանք երբեք չպետք է զանց առնել:

Հետևաբար դրանց կիրառման անհրաժեշտությունը, գաղտնիքները և ձևագոյացումները նույնքան կարևոր պետք է լինեն նաև մեզ համար:

ՔՐԻՍՏԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ (ԱԻ)

ՀԱՌԻՃԱՎԱՆՔԻ ԹՌՉՆԱԿԵՐՊ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Հառիճավանքը միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքային համալիրներից է: Գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկի շրջանի Հառիճ գյուղում և իր բարձրադիր տեղադրությամբ և ծավալատարածական ուրվանկարով իշխում է գեղատեսիլ բնության համայնապատկերում:

Վանքային համալիրը բաղկացած է երկու՝ Ս.Գրիգոր (7-րդ դ.) և Ս. Աստվածածին (1201թ.) եկեղեցիներից, գավիթներից, մատուռից, միաբանության բնակելի և օժանդակ շենքերից:

Հառիճավանքի համալիրում բացառիկ հարուստ ձևերով է լուծված Ս. Աստվածածին եկեղեցին: Այստեղ պլաստիկ միջոցները կիրառություն են գտել պատերի հարթությունների, գմբեթի թմբուկի, Ավագ խորանի բեմապատի մշակման մեջ: Սույն պատկերագրական համակարգում խիստ ուշագրավ են թռչնակերպ զարդաքանդակները, որոնք բացառապես աղավնակերպ են: Աղավնակերպ քանդակները Հայաստանում 13-րդ դ. հանդիպում են այլ վանքերում ևս (Խորանաշատ, Մակարավանք և այլն):

Աղավնակերպ զարդաքանդակները տարբեր դարաշրջաններում տարբեր իմաստ և դեր են ունեցել:

Քրիստոնեական պատկերագրության մեջ աղավնին ունի մի քանի սիմվոլիկ նշանակություն ա) Սուրբ Հոգու խորհրդանիշ, բ) Սուրբ Հոգին ընկալողների խորհրդանիշ, գ) գարնան և պտղաբերության ավետաբերի խորհրդանիշ:

Հառիճավանքի աղավնակերպ պատկերաքանդակները չորսն են: Նրանցից երկուսը գտնվում են Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի ճակտոնի անկյուններում: Թռչունները պատկերված են դեմ-դիմաց, հանգիստ վիճակում, քանդակված բավականին իրապաշտական, մանրամասների բարձրարվեստ դրվագումով: Երկրորդ աղավնազույգը գտնվում է նույն՝ հյուսիսային ճակատի որմնախորշի վերնամասում՝ դեմ առ դեմ: Վերջիններս ունեն առավել պարզ և ոճավորված մշակում՝ գծավոր դրվագված իրան և պոչ: Նրանք աչքի են ընկնում դինամիկ ուրվագծով: Ըստ Վ. Ղազարյանի՝ դեմ-դիմաց պատկերված աղավնազույգերը հանդիսանում են Սուրբ Հոգին ընկալողների խորհրդանիշ, հետևաբար Հառիճավանքի աղավնիները ունեն այս նույն նշանակությունը: Ուշագրավ է, որ այս երկու աղավնազույգերը բավականին տարբեր են իրենց կատարմամբ, ինչը, հավանաբար, վկայում է Ս.Աստվածածին եկեղեցու զարդաքանդակման աշխատանքներում տարբեր վարպետների մասնակցության մասին:

Խորհրդանշական բնույթ կրող այս քանդակները նաև արտացոլում են 13-րդ դ. Շիրակի կերպարվեստի նվաճումները, ստեղծագործական մտքի որոնումների արդյունքում ձեռք բերված բարձր կատարողական վարպետությունը:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՀԱԻ)

ՀԱՅՈՑ ԱՆԳԵՂ ԱՍՏՎԱԾԸ

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ միջագետքյան Ներգալ, հուն. թարգմանության մեջ՝ Ergel դիցանունը ներկայացված է որպես Անգեղ: Այս դիցանունը հանդիպում է նաև Տորք Անգեղեայ հերոսի անվան մեջ և տեղանուններում՝ Անգ(ե)ղ, Անգեղտուն, Անգեղակոթ:

Ներգալը հայտնի է արդեն շումերական դարաշրջանից, որպես անդրաշխարհի և պատերազմի մի աստված: Կարծիք կա նաև, որ Ներգալը ոչ թե մի առանձին աստծո, այլ անդրաշխարհի մի շարք աստվածների դասային ընդհանուր անվանումն է: Անգեղի և անդրաշխարհի կապն ի հայտ է գալիս այն փաստում, որ Անգեղտան, Անգղ ամրոցը հին հայ արքաների գերեզմանոցն է եղել: Ներգալը նաև Մարս մոլորակի անձնավորումն էր: Հայ անվանաբանության մեջ Մարս մոլորակը կոչվել է Հայկի անունով, և կարելի է կարծել, որ Հայկը համադրվել է Ներգալին, և ուրեմն՝ նաև Անգեղին:

Որոշ հանգամանքներ կարծես հաստատում են այս համադրությունը: Ներգալը գնում է անդրաշխարհ և վերադառնում այնտեղից Էրրա անվամբ, այսինքն Էրրան Ներգալի անվանումներից մեկն էր: Միջագետքում Էրրայի հետ է առնչվել Բազումք աստղակատակը, որը բազմաթիվ ավանդույթներում ինչ-որ կերպ կապվում կամ հակադրվում է Օրիոն համաստեղությանը: Ավելին, այս աստղախմբերը նույնիսկ կարող են կոչվել միևնույն անունով (հմմտ.

բուլղար. ԹՍՈՐՌՅպ «Օրիոն», «Բազումք»): Ասվածին համահունչ է Օրիոնի հայ. Հայկն անվանումը: Վանա լճի ավազանի Անգղ գետը հոսում է ոչ հեռու այն շրջանից, ուր տեղի է ունեցել Հայկի և Բելի ճակատամարտը: Հետաքրքիր է նաև, որ Անգեղտունն ասորիներն անվանել են Հայնի:

Հայաստանի դիցարանի առաջին աստվածները ներկայացված են U.GUR և INANNA գաղափարագրերով. հաջորդ տողը բաց է թողնված, շեշտելու համար այս զույգի առաջատար դիրքը: Առաջինը Ներգալի մի համապատասանությունն է, իսկ երկրորդը նշանակում է մայր աստվածություն (աքադ. Իշթար): Այս աստվածների պաշտամունքի վայրերը գտնվել են այնտեղ, որտեղ հետագայում կենտրոնացված էին հայ հեթանոսական աստվածների մեհյանները (Եկեղյաց գավառում և շրջակայքում), և կարելի է կարծել, որ նրանք հնագույն նախատիպերն էին հետագա Արամազդի և նրա կին Անահիտի: U. GUR – Ներգալ-Արամազդ համապատասխանության մասին է խոսում այն փաստը, որ հայ արքաների մյուս գերեզմանոցը գտնվում էր Արամազդի պաշտամունքի կենտրոն Անի-Կամախում: Ընդ որում, Կամախ/Կեմախ տեղանունը հանգեցվում է աքադ. Kima (h) hu (m) «գերեզման» (<շումեր. ki-mah) բառին, որից՝ հայ. կմախք (Աճառյան, Ջահուկյան), որը նորից շեշտում է Արամազդի պաշտամունքի հինմիջագետքյան կապերը: U. GUR-ը, որպես Ներգալի անվանումներից մեկը, համադրելի է Հայկին, և սա կարող է հանգեցնել Արամազդի հնագույն նախատիպի և Հայկի նույնացմանը:

Վեցերորդ դարի մի սիրիական աղբյուրի համաձայն Անգեղտան Անգղ ավանը կոչվել է Ասորեստանի «Սենեքերիմ արքայի քաղաք»: Այս արքան «Սասնա ծռերում» հանդես է գալիս որպես Սանասար և Բաղդասար երկվորյակների (խորթ) հայր: Հատկանշական է, որ Հայկի հաջորդ նահապետների՝ Արամանյակի և Արամայիսի կերպարները ևս կարող են ծագած լինել նախնական երկվորյակներից (հմմտ. նրանց անունների նմանությունը և Արամայիսի կողմից քաղաքի հիմնադրումը): Կարելի է կարծել, որ Անգեղ աստվածը հետագայում վիպականացել է որպես Սենեքերիմ:

*Անգեղ անվան Խորենացու «տգեղ» մեկնաբանությունը համարվում է ժողովրդական ստուգաբանություն: Բայց հայ. գեղ - արմատը հանդես է գալիս դիցանուններում՝ հմմտ. Գեղամ և Արա Գեղեցիկ, որը Տորք Անգեղայի ուղղակի հակոտնյան է: Գեղ-ը ծագում է հնդեվրոպական *wel- «տեսնել» արմատից (տեսքոտ = գեղեցիկ): Ավելին, ըստ հնդեվրոպական «հիմնական առասպելի», *wel- էր կոչվում նաև ամպրոպի աստծո հակառակորդը, մահվան աշխարհի տիրակալը, որը համահունչ է անգեղի և անդրաշխարհի աստված Ներգալի նույնացմանը: «Տեսնել» արմատի հետ է կապվում նաև հուն. անդրաշխարհի աստված Հադեսի անունը՝ *n-wid կամ *sm-wid նախաձևերից, «անտես» կամ «տեսություն (մեռյալների հետ)» նշանակություններով (հմմտ. *wid- «տեսնել»): Միևնույն կերպ կարող է մեկնաբանվել նաև Անգեղը այն տարբերությամբ, որ *wid –ի փոխարեն հանդես է գալիս նույնիմաստ *wel-ը: Հատկանշական է, որ հիշյալ բուլղար. □□□□□□□□ «Օրիոն», «Բազումք» ձևը բխեցվում է սլավոնական □□□□□ (<*wel-) դիցանունից (հմմտ. ռուս. □□□□□□□□□□, □□□□□□□□□□□□ «Բազումք»), որը համահունչ է Անգեղի *wel- արմատից ստուգաբանությանը (հմմտ. Անգեղ = Հայկ = Օրիոն):*

ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ (ՀԱԻ)

ՀԱՅԿՅԱՆ ՇԱՐԱՆ ԵՎ ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

Հայ միջնադարյան սկզբնաղբյուրներում (Մովսես Խորենացի, Ասողիկ) և ժողովրդական բանավոր զրույցներում («Բանձրել քարանձավների մասին առասպելը») Շարան հայոց ազգածին նահապետ Հայկի ծոռն է, Արամայիսի որդին, Ամասիայի ավագ եղբայրը և Գուշար ու թերևս Երաստ նահապետների հայրը: Նրա անունով են կոչվել Շիրակի դաշտն ու Շարայի լեռը (Կոլգաթ): Բազմազավակ է («զյոլովածին») և շատակեր, հացահատիկի մեծ շտեմարաններ («ամբարք») ունի, ահա թե ինչու հնուց ի վեր ասում են. «թե քո Շարայի որկորն է՝ մեր Շիրակայ ամբարքն չեն»: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Շարան, ըստ ամենայնի, երկրագործությունը (Շիրակի դաշտ, աշորա-վայրի ցորեն, աշորա-հաճար, աճարա-աճորա-եղնջի հունդ, Երաստ-Երասխ), հարստությունը («Շիրակայ ամբարք») և ագահությունը («զյոլովածին և շատակեր») անձնավորող կերպար է, որ հայ սկզբնաղբյուրներում տոհմածին և անվանադիր նահապետի կարգավիճակ է ձեռք բերել:

*Հանրահայտ այս փաստերից զատ կան այլ կողմնակի տվյալներ, որոնք մեր կարծիքով կարող են համալրել Շարայի կերպարն ու վարքը նոր մանրամասներով: Այդ առումով ուշագրավ են հայերենում պահպանված «շարապայ», «շառ», «շառավ», «շառագլուխ», «շիռ», «շարավանդ» և «շարագահ» բառերը: Հր. Աճառյանի կարծիքով «շարապայ» նշանակում է «հորթագլուխ կուռք»: Ամեն դեպքում վերջինիս հիմքում առկա են «շարա-» և «-պայ» բաղադրիչները, որոնցից առաջինը կարող է առնչվել Շարայի, իսկ երկրորդը՝ հայ առասպելաբանության մեջ հանդիպող «պայ», «Պայ-Ապիս-Քաղյա» իրանական՝ «պայրիկ» և նույնանուն այլ մարդակենդանակերպ (մարդ -ցուլ, մարդ- այծ) էակների հետ: «Շառ», «շառատ» և «շառագլուխ» բառերի հիմքը «շառ» արմատն է, որ ունի «ամբոխ, բազմություն» իմաստը: ՈՒստի «շառագլուխ» պետք է նշանակի «բազմության առաջնորդ, ավագ, նահապետ» և, ըստ այդմ քննարկվող բառերը կազմությամբ կարող են համադրվել Շարայի անվան, իսկ իմաստով՝ նրա բազմազավակության հետ: «*Շիռ» բառն անջատ չի գործածվում, սակայն հանդիպում է «արբշիռ, արբշռություն» արտահայտություններում «շվայտ, ագահ, շատակեր, որկրամոլ, գինեմոլ» իմաստներով, դրանով իսկ դարձյալ և՛ կազմությամբ (Շարա- Շիրակ- *շիռ), և՛ բովանդակությամբ համադրվելով Շարային: «Շարավանդ» ըստ Հր. Աճառյանի նշանակում է «ոտքի կամ կոշիկի կապ» և մեր կարծիքով կարծես թե մատնանշում է Շարայի կողմնակի առնչությունը ոտքի և կոշիկի (իշխանության և հարստության խորհրդանիշ) պաշտամունքի հետ: Վերջին «շարագահ» բառն ուղղակի նշանակում է «շտեմարան», դրանով իսկ ներկայացնելով և քննարկվող կերպարի անունը և նրա խորհրդանշաններից մեկը:*

Մեպագիր և հիերոգլիֆային տեքստերի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկյան Շարան զուտ տեղական երևույթ չէ, այլ և՛ անվանական, և՛ վարքագծային առումներով իր զուգահեռներն ունի հին արևելյան դյուցազնավեպերում: Այսպես. շումերական տեքստերում Շարան (Շարու) Ումմա քաղաքի պահապանն է, Ինաննա (աքադական՝ Իշթար) դիցուհու որդին կամ տարփածուն, ինչպես նաև հարստության աստվածը: Ըստ որում ինքը՝

Իհարկե, այդ պարագայում տաճարական շտեմարանների հովանավորն է: Անվանապես Շարայի հետ կարող են համադրվել նաև շումերական առասպելաբանության ավագ սերնդի աստվածներ Անշարը և Կիշարը (հմմտ. հայոց Շարա- Գուշար զույգին): Խուռիների մոտ Շարային անվանապես կարող են մերձենալ մայրամուտի ցլակերպ Շերի- Շերյան (հմմտ. հայերեն «շարապայ»-ին) և բնության հովանավոր աստված Աշերան: Սրանք երկուսն էլ մ.թ.ա. II հազ. կեսերից ներգրավվել են խեթական դիցարան, ուր Շարա անվան մեկ այլ դրսևորում կարող է լինել նաև Շարրուման (Շարմա): Վերջինիս հիերոգլիֆ գաղափարագիրը մարդկային զույգ ոտքերի տեսք ունի, որով ևս խնդրո առարկա դիցը կարող է համադրվել Հայկյան Շարային մեր կողմից վերագրված ոտք-կոշիկի պաշտամունքին: Տեղին է անդրադառնալ նաև խեթական պետության մեջ գարնանը կատարվող «կիլամ» ծեսին, որի արարողակարգի ժամանակ մասնակիցներին «սարամա» («շարամա») տիպի 15 ծիսական հացեր էին բաժանվում: Ուգարիթիան դիցարանում Շարային անվանապես և վարքով կարող է համադրվել բնության հովանավոր Աշիրա դիցուհին: Արժե հիշատակել նաև հնդկական Շարվա, Ակշարա, և Շրի աստվածություններին, որոնցից վերջինը դարձյալ բնության հովանավոր դից էր: Ավելացնենք նաև, որ հնդկական առասպելաբանության մեջ Շարայու անունն է կրում այն գետը, որի մոտ իր մահկանացուն էր կնքել Ռաման (հմմտ. հայոց Շարա-Երաստ զույգին): Իրականում Ավեստայում էլ Շարան Չարի Ոգի Անհրո Մանյուի (Ահրիման) ստեղծած դաժան դևերից մեկն է: Չի բացառվում, որ Շարայի հետ առնչություն ունենա նաև հին արաբական (նաբաթեական) Դուշարա (զու-Շարա) աստվածությունը՝ դարձյալ երկրագործության և բուսականության հովանավորը: Վարքագծային առումով (շատակերություն, ագահություն, հարստություն) Շարային կարող են համադրվել նաև հույների ագահության և հարստության աստված Տանտալոսը (որն ամուսնացած էր ոսկերեր Պակթոլոս գետի աստծո դստեր հետ), հին հռոմեական Կոնսուս աստվածը (որը ցորենի շտեմարանների պահապանն էր), ինչպես նաև փռյուգական Միդաս թագավորի (ագահության խորհրդանիշ) ապօրինի որդի Լիդիերսը (որը հռչակված էր անհագ ախորժակով և հացահատիկի բերքահավաքի ժամանակ խոշտանգում ու սպանում էր անցորդներին): Այս համատեքստում տեղին է անդրադառնալ նաև «շարա» կոչվող, մոտ մեկ փութ տարողությամբ այն խորը կաթսային, որով հին դազախները ցորեն էին կշռում, և որին նվիրված էին երկրագործությանն առընչվող ծիսական արարողություններ:

Հինարևելյան (նաև հայոց) Շարայի մասին որոշակի տվյալներ են պարունակում նաև հնագիտական նյութերը: Մասնավորապես միջագետքյան Թել-Ագրաբ հնավայրի պեղումների ժամանակ բացվել է Շարա աստծուն վերաբերող տաճար, որի զոհասեղանի մերձակայքում հայտնաբերվել են մի քանի հարյուր քարե գուրզերի գնդաձև վերնամասեր: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ խնդրո առարկա զինատեսակը ևս առնչվել է Շարայի հետ: Մասնավորապես այդ է վկայում շումերա-աքադական տեքստերում հանդիպող «շարուր» (երբեմն նաև «^{D}Šar – ur$_4$») զենքը, որով Նինուրտան հաղթում էր բոլոր թշնամիներին: Միջագետքյան պատկերագրության մեջ այն գուրզի տեսք ունի: Ավելացնենք նաև, որ շումերական «Šar» նշանակում է «գունդ, շրջան» (հմմտ.

ռուս. «ՔՈՐ», հայերեն «շար, շուրջ, շրջան» բառերին): Շարայի և՛ անվանական, և՛ պաշտամունքային խորհրդանիշ «շարուրի» զուգահեռները կարող են հանդիսանալ ֆիննական «vašara-vasara»՝ «մուրճ», լապլանդական «væčer»՝ «մուրճ», սանսկրիտի «vnjra»՝ «Ինդրայի զենքը», Ավեստայի «vnzra»՝ «գուրզ» և հայկական «վազր»՝ «գուրզ» բառարմատները:

Թեականորեն Շարայի հետ առնչվող ոտք-կոշիկի պաշտամունքի մի ինքնատիպ դրսևորում էլ, մեր կարծիքով, կարող են հանդիսանալ կոշկաձև դամբարանային այն կառույցները՝ կատակոմբները, որոնք Հայաստանի տարածքում ամփոփ խմբով (640հատ) հանդիպում են միայն Շարայի անվանադիր տարածքում՝ Շիրակում, մ.թ.ա. XV-XIդդ. թվագրվող Արթիկի դամբարանադաշտում:

Այսպիսով, հինարևելյան Շարային ուղղակի կամ անուղղակի առնչվող առասպելաբանական,լեզվաբանական և հնագիտական տվյալների վրա արված մեկնաբանությունները առայժմ նախնական ենթադրությունների բնույթ ունեն, և նրանց խոր ու համակողմանի ուսումնասիրությունները, հնարավոր է, նոր, հիմնավոր մանրամասներ ավելացնեն նաև Հայկյան Շարային վերաբերող պատկերացումներին:

ԼՈՒՍԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՇՀՀԿ)

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ «ՔԱՋԵՐԸ»

«Վրաց պատմությունը» («Քարթլիս ցխովրեբա») վկայում է, որ Հայոց Երվանդ (Իարվանդ) թագավորը պատերազմ սկսելով վրացիների դեմ, «գրավեց Քարթլիի սահմանները՝ քաղաք Ծունդան և Արտահանը (Արտանը) մինչև Կուրը, և բնակեցրեց Ծունդայում գազանաբարո մարդիկ՝ դևերին ազգակից, և կոչեց Ծունդան [նոր] անունով Քաջատուն, որ թարգմանաբար նշանակում է «Դևերի տուն» (Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները…, I, 155):

Վրացի պատմիչը չի իմացել, որ հայերեն քաջ *բառը ոչ միայն «քաջք, դև» է նշանակում, այլև «կորովի, հզոր, զորավոր, ժիր», «դյուցազն» և այլն (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, II, 981): Բայց դա չէ էականը, այլ այն, որ Երվանդ Վերջինը (մ.թ.ա. III դարի վերջին տասնամյակներ), հյուսիսից եկող վտանգը կանխելու մտադրությամբ,* Քաջատուն *անունով ամրոց էր կառուցել Ջավախքի Ծունդա բնակավայրում՝ ներկայիս Ախալքալաքի մոտերքում (Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի,89), որտեղ և տեղակայվել էր «քաջերից» բաղկացած Երվանդի ընտիր զորամասերից մեկը: Սա այն նույն Երվանդն է, որի անվան հետ է կապվում Երվանդաշատ, Երվանդակերտ, Բագարան բնակավայրերի կառուցումը (Խորենացի,Բ,լթ-խբ):*

«Վրաց պատմության» մեջ, ինչպես տեսանք, ակնարկ կար նաև Արտահանի վերաբերյալ: Կարելի է կռահել, որ հյուսիսից եկող վտանգը սպառնում էր ոչ միայն Ջավախքին, այլև հարևան Արտահան գավառին: Վրացական աղբյուրները ներկայիս Արտահան քաղաքի մոտերքում հիշատակում են Քաջաց քաղաք *(Քաջքա-քալաքի) անունով մի բնակավայր (Երեմյան, նույնը, 89): Տեղանվան* քաղաք *(քալաքի) բաղադրիչն արդեն խոսում է այս բնակավայրում ամրոցի գոյության մասին (Հ. Աճառյան, Արմ. բառ., IV, 542),*

իսկ քաջաց բաղադրիչը վկայում է, որ Քաջատունի նման այն ունեցել է «քաջերից» բաղկացած կայազոր:

Մեր կարծիքով, նույն «քաջերի» պատճառով է Քաջքար (<Քաջաքար) կոչվել Տայք նահանգի արևմտյան սահմանին գտնվող Պարխար լեռնաշղթայի գագաթներից մեկը: Այս լեռնանունը ևս խոսում է Քաջքար լեռան շրջակայքում՝ Տայքի Արսեաց Փոր գավառում, «քաջերի» զորամասի երբեմնի գոյության մասին: Ի դեպ, Քաջքարը և Կաճկաքարը տարբեր լեռնագագաթներ են: Պարխարի այս գագաթներից առաջինն ունի 3937 մ. բարձրություն, իսկ երկրորդը գտնվում է նրանից հյուսիս-արևելք և ունի 3348 մ. բարձրություն:

Իսկ ի՞նչ վտանգ էր կախվել Հայաստանի հյուսիսային այդ շրջանների՝ Ջավախքի, Արտահանի և Տայքի վրա, որ Երվանդը անհրաժեշտ էր համարել զբաղվելու դրանց պաշտպանունակության ամրապնդման հարցով, երբ հարավում նա ուներ այնպիսի մի հզոր թշնամի, ինչպիսին Սելևկյան Անտիոքոս Մեծ (մ.թ.ա. 242-187թթ.) թագավորն էր: Վրաց աղբյուրների հավաստմամբ, մ.թ.ա. III դարի սկզբներին Փառնավազի գլխավորությամբ կազմավորված վրացական պետությունը (Քարթլի, Վիրք, Իբերիա) վայելում էր Սելևկյանների հովանավորությունը և դաշինքի մեջ էր Հյուսիսային Կովկասի սարմատական ու լեռնցի ցեղերի հետ (□□□□□□□□□□□□□, □ □□□□□□□□...,266-271): Նրա թագավորները բացահայտ թշնամական դիրք էին բռնել Հայաստանի նկատմամբ: Նրանց զորքերն ու դաշնակից հրոսակախմբերը պարբերական ասպատակություններ էին ենթարկում Հայաստանի հյուսիսային շրջանները: Երվանդ-Արտաշես հակամարտության տարիներին, օգտվելով երկրում տիրող խառը վիճակից, նրանք գրավեցին վերոհիշյալ հայկական շրջանները: Միայն տասնամյակներ անց Արտաշես I-ին (մ.թ.ա. 189-160 թթ.) հաջողվեց, ինչպես Ստրաբոնն է վկայում, գրավել «իբերներից Պարիադրեսի լեռնալանջերը, Խորզենեն և Գոգարենեն» (Strabo, XI, 14,5, թարգմ. Հ. Մանանդյանի, Քննական տեսություն..., I, 116): Սրանցից Գոգարենեն «Աշխարհացույցի» Գուգարք նահանգի արևելյան կեսն է (Ջավախքը ներառյալ), Խորզենեն՝ արևմտյան կեսն է (Արտահանը ներառյալ), իսկ «Պարիադրեսի լեռնալանջերը» գտնվում են հետագա Տայք նահանգում (Հ. Մանանդյան, նույնը, I, 117):

Վերադառնալով «քաջերի» հարցին՝ նշենք, որ նրանք Երվանդ թագավորի հուսալի հենարաններն են եղել ոչ միայն հյուսիսային թշնամիների դեմ նրա մղած պայքարում: Երվանդի և Արտաշեսի բանակների միջև մղված վճռական ճակատամարտի ժամանակ, «երկու ճակատներն իրար խառնվելիս, Արտաշեսի դեմ են գալիս Տավրոսցի քաջ մարդիկ, որոնք մահն աչքերն առած՝ Երվանդին խոստացել էին, թե Արտաշեսին կսպանեն» (Խորենացի, Բ, խզ): Գրաբար տեքստում նրանք կոչվում են արք քաջք տաւրացիք*: Բացատրության կարիք ունի միայն* տաւրացի *բառը, որի ընդհանրական իմաստը, մեր կարծիքով, այս դեպքում, «Հայաստանցի լեռնական» է:*

Մովսես Խորենացու աղբյուրի հեղինակը, ըստ երևույթին, Ստրաբոնի կամ մեկ ուրիշ անտիկ հեղինակի հետևությամբ,Հայկական լեռնաշխարհի բոլոր լեռնաշղթաները համարել է Տավրոսի ճյուղերը, իսկ նրանց լեռնցի բնակիչներին, բնականաբար, տավրացիներ (տավրոսցիներ): Օր., Ստրաբոնը, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի նկարագրությունը այնպես է շարունակում. «Մի քանի բազուկներ լեռնաշղթայից գնում են դեպի հարավ, որոնք

շրջապատում են Վրաստանը, որ նրանց միջև է գտնվում և միանում են Հայկական և Մոսքիկյան կոչված լեռներին, ինչպես և Սկյուդիսեսին և Պարիադրեսին: Այս բոլոր լեռները մասերն են Տավրոսի, որ ձևացնում է Հայաստանի հարավային կողմը, և բաժանվելով այնտեղից դեպի հյուսիս են ձգվում և հասնում մինչև Կովկաս և մինչև Եվքսինյան (սևծովյան – Լ. Պ.) ծովեզրը, որ ձգված է Կողքիսից Թեմիսկյուրա» (Strabo, XI, 2,15, Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Ամառյան, 27):

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՇՀՀԿ)

ՄՈՒՇԵՂ ԱՆՎԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ

Խեթագետ Օ.Ռ. Գարնիի բնորոշմամբ, հնագույն Փոքր Ասիան (Անատոլիա) լինելով «թուխպի և փոքորկի երկիր», որպես առաջնային ուներ ամպրոպհողմային աստվածների պաշտամունքը: Խեթերի Ամպրոպի աստվածը ռազմիկ աստված էր, «երկնքի թագավորը, Խաթթի երկրի տիրակալը» (Օ. □□□□□, □□□□□, □., 1987, □□□. 121,126): Փոքր Ասիայում խուռիական ազդեցության ուժեղացման հետևանքով խեթական ամպրոպի աստվածը նույնացվել էր խուռիների Թեշուբի հետ: Խեթ թագավոր Ուրխի-Թեշուբը (մ.թ.ա. 1296-1289թթ.), ինչպես անունն է ցույց տալիս, գտնվում էր Ամպրոպի աստծու հովանու տակ: Այսուհանդերձ, նա գահ բարձրացավ ոչ թե իր խուռիական այդ, այլ Մուրսիլի *անվամբ, դառնալով այս գահանունը կրած խեթ թագավորներից երրորդը: Բնականաբար, նրա գահանունը ևս առնչվելու էր իր հովանավոր Ամպրոպի աստծուն: Ըստ այսմ, կարծում ենք, որ* Մուրսիլի*-ն եղել է փոքրասիական Ամպրոպի աստծու, խեթ թագավորների կողմից սիրված, մականունը: Փորձենք մեր կարծիքը հիմնավորել նախ Mursili անվան ստուգաբանության միջոցով:*

*Այս անունը կարելի է տրոհել *mur- և *sil- բաղադրիչների և նրանցից երկրորդը տեսնել նաև ուրիշ երեք խեթ թագավորների կրած Hattusili անվան մեջ: Նույն այս բաղադրիչն է առկա նաև Piiasili անվան մեջ, որի կրողը խեթ թագավոր Սուպիլուլիումա I-ի (մ.թ.ա. 1380-1346թթ.) որդին էր՝ Կարքեմիշի թագավորը: Բերված անունների *-sil- բաղադրիչները, ամենայն հավանականությամբ, նշանակում են «նիզակ» և ծագում են հ.-ե. *k'el- «ցողուն, կոթուն, նետ» արմատից: Սրա տարբերակներն են ընկած ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում. հայ.* սաղարթ*, հին. հնդկ. s'ala' «եղեգն, ձող, նետ», հուն. κάλαμος «եղեգն», κήλον «նետ», լատին. culmus «ցողուն», միջ. իռլ. cail «նիզակ», պրուս. kelian «նիզակ» և այլն (□. □□□□□□□□, □□□□□□□, □□□. 180; Հ.Սուքիասյան, Ամականը հայերենում, էջ 218): Կարծում ենք, որ մեր* սլաք *և* սլանալ *բառերի արմատը նույն *k'el->** սիլ*-ն է (իմաստի տեսանկյունից հմմտ.հ.-ե. *nedo- «եղեգն» >* նետ *>* նետել*, ռուս □□□□□□ «նետ» > □□□□□□□□ «նետահարել» > «կրակել»):*

**Mursil- անվան առաջին բաղադրիչին ևս կարելի է հնդեվրոպական ծագում վերագրել, այն նույնացնելով հ.-ե. *mer արմատի *mor տարբերակի (միջին ձայնդարձ) հետ: Այն պարունակում էր թե՛ «բարկացնել, չարացնել,*

գրգռել», «խանգարել, խախտել», թե՛ «արհամարել,մոռանալ» իմաստները: Վերջին իմաստով այն առկա է մոռանալ *բառում (Արմ., 3, 346), իսկ առաջիններով՝* մոփալ *(<մուռ-փ) «բարկանալ, զայրանալ» (Ստ. Մալխասյանց, Բաց. բառ., 3, 368),* մուռտ *(<մուռ-տ) «աղմուկ, շփոթ, խռովություն, խառնակություն» և մռտել «ապստամբել», «զրդել, գրգռել,» (Արմ., 3, 361, ՆՀԲ, 2, 302) բառերում: Ըստ երևույթին, նույն արմատն են պարունակում մ.թ.ա. VIII դ. ուրարտական արձանագրությունների Murini, Murinu «թագավորական» անձնանունները (-in- վերջածանցի համար հմմտ.* Լուս-ին, վեր-ին, կարգ-ին *և այլն) և առասպելական Μύρίνη ամազոնի անունը: Հայտնի է, որ ամազոններն համարվում էին պատերազմի աստված Արեսի դուստրերը: Ոչ միայն իր murբաղադրիչով, այլև ամբողջությամբ ևս *Mursil- անունն առնչվում է Արեսին, որովհետև Լյուդիայի նույնանուն Μυρσίλος թագավորը (մ.թ.ա. VIIIդ.)՝ Հերակլեսի սերունդը, կոչվում էր նաև Κανδαύλης (Herod., I, 7, I, 14): Իսկ Κανδάων մականունն էր թրակյան Արես աստծու (В. Георгиев, Исследования, стр. 117):*

Արեսի ոչ միայն ռազմական, այլև հողմային բնույթի դրսևորումներն են ներկայացնում նրա մակդիրներից «կատաղին», «մոլեգինը», «անգութը», «դյուրագրգիռը», «դյուրափոփոխը» և «կործանարարը»: Արեսի հասարակական և տիեզերական ֆունկցիաների սերտաճման հետ ուղղակի կապի մեջ է նրա սիրած զինատեսակը և նրա առաջին խորհրդանիշը՝ նիզակը ("Мифологический словарь", М., 1991, стр. 58): Հայտնի է, որ «Նիզակը նաև պատերազմի խորհրդանիշ էր համարվում», իսկ «Նախապատմական Հայաստանում նիզակը տիրապետող և համատարած զենք է եղել՝ սկսած քարեդարյան ժամանակաշրջանից» (Խ. Սամուելյան, Հին Հ. կուլտուրան, հ. 2, էջ 65): Արեսի տիպի հնդեվրոպական աստվածների տարերային էության և նրանց նիզակի անխզելի կապի վկան կարող է լինել նաև մեր հեթանոսական հողմ-ամպրոպային բնույթի աստվածների քրիստոնեական ժառանգորդ Սուրբ Սարգիսը՝ իր նիզակով: Ժողովրդական հավատալիքների համաձայն, նրա «ձիու պնչերից ամպեր են ցայտում…, ոտների տրոփյունից աշխարհք թնդում, նիզակի *խաղացնելուց սաստիկ* քուք *բարձրանում» (Ե. Լալայան, Երկեր, հ. I, էջ 271):*

Հ. Աճառյանի կարծիքով, հայոց Մուշեղ *անձնանունը ծագում է «հայյան Muršili անունից… Ըստ այսմ հայերենի հին ձևն է **Մուրշեղ*, որ ապա* ր*-ի անկումով դարձել է* Մուշեղ*» (Անձն. բառ., 3, 455): Սակայն, այս անունը այնքան հեռավոր ժամանակներից է գալիս, որ արձանագրել է հնդեվրոպական նախալեզվից հայերենի ժառանգած բառերին հատուկ է հ.-ե.- rs - > -* րշ *-հնչյունափոխությունը (հմմտ. հ.-ե. tṛs->* քարշ*-ամ., Արմ., 2, 156): Բացառված չէ, որ Մամիկոնյան սպարապետական տոհմում սիրված* Մուշեղ *անձնանունը, լինելով* Սլկունի *(<* Սիլուկ-ունի) նախարարական տոհմանվան, անվանակիր տոհմում կիրառված* Սլաք *(< սլաք «նետ, աշտե» <* սիլ-աք) և* Սղուկ *(<* սիղուկ //*սիլ-ուկ) անձնանունների (Խոր., Բ, ը, Բ, ձդ) արմատակիցը, Սլկունիներից անցած լինի Մամիկոնյաններին, որոնք Տրդատ III-ի (298-330թթ.) օրոք էին ձեռք բերել «զգեօղս եւ զդաստակերտս եւ զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց» (Խոր., Բ, ձդ): Բոլոր Սլկունիները չէ, որ սրածվել էին Մամիկոն-*

յանների կողմից և «երկուք ոմանք փախստական անկան յաշխարհն Ծոփաց»: Ըստ երևույթին, այս երկուսի սերունդներից էր V-VI դարերի սահմանագլխին ծոփքի ինչ-որ մասում իշխած Մուշեղակը *(Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 235):*

**Mursil - անունն իր ամբողջության մեջ ունեցել է «Ցասման նիզակ» (կամ դրան մոտ) իմաստ, մանավանդ որ հակադարձ դրսևորումն է ներկայացնում այնպիսի երևույթների, ինչպիսիք են, «Ցասման խաչը», «Ցասման ժամը», և «Ցասման ճաշը»:* Ցասման խաչ *կոչվում էին այն խաչքարերը, որոնք կանգնեցվում էին մեղմելու համար ցասումը բնության աղետաբեր տարերային երևույթներ (տարաժամ ձյուն, կարկուտ, երաշտ, երկրաշարժ և այլն) առաքող Աստծու կամ Պատուհասիչ հրեշտակի (Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, էջ 80-81): Նույն նպատակին էին ծառայում «Ցասման ժամի» և «Ցասման ճաշի» արարողությունները: Ինչպես Մ. Աբեղյանն է նկատում, դրանք գալիս էին խոր հնադարից և «նույնիսկ քրիստոնեությունից առաջ դա կատարվել է շատ ազգերի կրոն ու հավատքի, կյանք ու կենցաղի մեջ» («Մասնա ծռեր», հ. Բ, մասն Բ, էջ 875): Հեթանոսական դարերում Ցասումնալից Աստծու և նրա Պատուհասիչ հրեշտակի փոխարեն հանդես էր գալու «Ցասման նիզակ» կրող հողմ-ամպրոպի աստվածը, իսկ աստվածային ցասումը մեղմող խաչը, ինչպես հայտնի է, խորհրդանշանն էր նրա երկվորյակի՝ հնդեվրոպական արևաստծու:*

*Այսպիսով, *Mursil- մականունը կրողները ինչպես հնագույն Փոքր Ասիայում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում եղել են հնդեվրոպական տեղաբնիկ ցեղերի ռազմիկ աստվածները: Հետագայում նրանց այս մականունը որպես գահանուններ և անձնանուններ կրել են փոքրասիական ժողովուրդների ու հին հայոց զինվորական դասի վերնախավի ներկայացուցիչները՝ և՛ թագավորների, և՛ զորավարների մակարդակով:*

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ (ԵՊՀ)

ԱՐԵՎԱՅԻՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԽՅԱԼ ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ

Շիրակի մարզի Անուշավան ամրոցի պեղումներից 1988 թվականին ի հայտ եկավ լավ պահպանված մի կավե արձանիկ (Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ս. Տեր-Մարգրյան,1989, էջ 58-59), որը վերագրվեց հայկական պանթեոնի Տիր աստվածությանը և թվագրվեց մ.թ.ա 1-ին-մ.թ.ա 2-րդ դարերով: Ավելի ուշ հեղինակներից մեկը հատուկ աշխատության մեջ թվագրությունը մանրամասնեց՝ բերելով մ.թ. 1-ին դար, իսկ արձանիկի նույնացման խնդրում ուշադրություն հրավիրեց դրա կեցվածքին, որն, իր կարծիքով «բնորոշ է հին հելլենիստական Եգիպտոսի արվեստում՝ դպիրներին, Հնդկաստանի և Միջին Ասիայի արվեստում՝ իմաստունների և Բուդդայի արձաններին» (Ֆ. Տեր-Մարտիրոսով, 1996, էջ 47): Այսպիսով, հավասարման նշան է դրվում մի կողմից իմաստության և դպրության, իսկ մյուսից՝ Տիր աստվածության միջև: Ցավոք նշված աշխատություններում չկան փաստարկներ և պատկերագրական վերլուծություն:

1996-ի ամռանը Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղից պատահաբար գտնվել էին երկու կավե արձանիկներ, որոնցից մեկը հար և նման է Շիրակի

վերոհիշյալ տերակոտային (Հակոբյան, Հմայակյան և այլոք, 1998, էջ 41): 102 մմ բարձրությամբ և 53 մմ առավելագույն լայնքով արձանիկը վնասված էր, ջարդված էր աջ ստորին հատվածը, որ գրավում էր ձախ ոտքը: Արձանիկը շատ ավելի լավ է ենթարկված երկրորդական մշակման, մասնավորապես դիմագծերը նրբորեն են արված: Արձանիկների զույգն, այսպիսով, թույլ է տալիս վերականգնել միմյանց խաչված ոտքերով, գահին կամ զոհասեղանին բազմած պատանու կերպարի ծագումն ու էությունը:

Պատանին կրում է գլխից դեպի ուսերն իջնող կալավ և դիադեմա, գլխազարդն ավարտվում է վերևում հատած կոնով: Աջ ձեռքը հենվում է վեր ու վար ձգված մի մարմնի, իսկ ձախ ձեռքը (Անուշավանի արձանիկի վրա) քիչ ավելի ցած է իջած՝ ձախ ծնկին: Ուսերն ու պորտը կազմում են հավասարակողմ եռանկյուն, դիմացից ստեղծելով հավասարակշռվածության պատրանք: Արձանիկն 90 աստիճան շրջելիս կայուն կշռվածությունը վերանում է, այս պատճառով էլ քանդակագործը սկզբնօրինակը կերտելիս փորձել է ստեղծել գահի բազուկների և հենակի թույլ ակնարկ: Իրականում Բուդդայի և եգիպտական դպիրների արձանները հակված են քիչ աջ, իսկ ոտքերը ներդաշնակ ծալապատիկ են, ծանրության կենտրոնը տեղափոխելով մարմնի առջև՝ ստորին մասը: Երևում է, որ հակասական հորինվածքով Անուշավան-Երանոսի տիպը պատվիրված է զանազան նախատիպերից և հատուկ նպատակով, փորձ է արված հելլենիստական հայտնի ձևերը հաշտեցնել Մերձավոր Արևելքի դիցաբանական պատկերացումների հետ:

Մեր արձանիկների նույնացման խնդրում կարևոր է հին հունական տերակոտաների թեկուզև սեղմ դիտարկումը: Հատկապես ուշագրավ են անդրաշխարհյան ոգի-կաբիրների արձանիկները, որոնց որոշ օրինակներ վերաբերում են մ.թ.ա. V-IV դդ: Սրանք նույն կերպ ծալած ոտքերով գետնին նստած մերկ երեխաներ են: Ձեռքերը հանգչում են ծնկներին, որոնցից մեկը գրեթե գետնին է, իսկ մյուսը գրեթե ուղղաձիգ (հին Օլվիա, Թերեզան և այլն): Այս նախատիպն էլ միջնորդված՝ հիմք է ծառայել Անուշավանի և Երանոսի արձանիկների հորինվածքի համար: Վերջիններիս ցարդ չլուծված խնդիրներից մեկը աջ ձեռքից ներքև եղած մարմնի ինչ լինելն է: Ճակատային մասից հավասարակշռված արձանիկը թույլ է տալիս ենթադրել հերալդիկ, ավելի ճիշտ, սիմետրիկ մի հորինվածքի գոյություն, որի կողմերը լրացնելու էին կենտրոնական կերպարի բովանդակությունը: Մեր արձանիկներից մեկի վրա, ուշադիր զննելիս, կարելի է տեսնել թռչունի՝ արծվի կամ ագռավի պրոֆիլ, որը ստանդարտ պատկերագրության միջավայրում զույգ պիտի կազմեր համապատասխանաբար առյուծի կամ խոյի հետ: Ուստի արձանիկների աջ ձեռքը հանգչում է առյուծի կամ խոյի գլխիկին: Սրանց պատկերման համար էլ նախատիպ է ծառայել հելլենիստական դարաշրջանի մի կավե արձանիկ, որը ներկայացնում էր ցածր նստած աղջնակին՝ աջ ձեռքով բռնած գառնուկին, իսկ ձախ ավելի ցածր ձեռքով՝ սագին (բրդոտ և փետրավոր կենդանիների զույգը): Հիշյալ նախատիպերի մշակումից ստացված պատանին՝ ընդգծելու համար նրա գերբնական էությունը, վեր է բարձրացվում զոհասեղանի վրա, որի հետևանքով ձախ ձեռքի տակ կանգնած թռչունը հայտնվում է օդում, իսկ սրա զույգ կենդանու մարմնի համար էլ տեղ չի բավարարում, և սրանից պահպանվում է միայն ընդհանուր գծերով տրված գլխիկը:

Ճակատային կողմից դիտելիս արձանիկը չի ակնարկում զույգ ուղեկիցների մասին, մինչդեռ հելլենիստական արևելքում ապրող պատվիրատուն չէր կարող հորինվածքն ընկալել առանց կենդանի զույգի: Վերջինս էականորեն լրացնում էր արձանիկի իմաստը՝ ընդգծելով կիսամերկ խտոնիկ պատանի աստվածության վերածնության գաղափարը: Զուգահեռ միքրայական համակարգում աստվածությունը ծնվում էր որպես ցուլ, հարություն առնում որպես առյուծ և համբարձվում որպես արծիվ: Նույն, վերածնության վերջին փուլի այս կենդանական զույգն ենք տեսնում նաև կավե արձանիկներին գրեթե համաժամանակյա Նեմրութ-դաղի նշանավոր մոնումենտալ հուշարձանում, որի դարավանդներում որպես հսկիչներ կանգնած են առյուծն ու արծիվը (խոյն ու ագռավն էլ սեմանտիկ առումով համազոր էին սրանց):

Այսպիսով, Անուշավանի և Երևանոսի արձանիկները ներկայացնում են արեգակնային Միհր-Տիր-Վահագն-Արա Գեղեցիկ շարքի աստվածության՝ ընդգծված խտոնիկ բովանդակություն: Ուշագրավ է, որ արձանիկները գտնված են հին խոշոր քաղաքներից դուրս, հավանաբար ոչ քաղաքային միջավայրում և, թերևս, բավարարելու էին բնակչության ավանդականորեն ձևավորված պահանջները:

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)

ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՎՍ ՀԱՅ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայ պատմագրաբանական գրականության մեջ արհեստավորական համքարությունների (էսնաֆությունների, եղբայրությունների) խնդիրը XIX դարից սկսած բազմիցս արծարծվել է մի շարք անվանի հետազոտողների աշխատություններում (Գ. Ախվերդով, Ս. Եղիազարյանց, Խ. Մառանկոզյան, Հ. Ասլանյան, Կ.Ղաֆադարյան, Լ.Խաչիկյան, Բ.Առաքելյան, Վ.Գրիգորյան, Վ.Աբրահամյան, Կ.Սեղբոսյան և այլք): Առաջին հայացքից թվում է, թե հայ ժողովրդի սոցիո-նորմատիվ մշակույթի այս կարևոր բաղկացուցիչի մասին ամեն ինչ ասված է: Սակայն, մեր խորին համոզմամբ հիմնախնդիրը բավականին տարորոշակ է և ժամանակակից գիտական մոտեցումների առումով կարոտ է լուսաբանման այլ դիտանկյունից:

Որոշ հետազոտողներ (Բ.Առաքելյան, Վ.Աբրահամյան), փոքր վերապահումներով հանդերձ, փորձում են Լ.Խաչիկյանի կողմից հրատարակված 1280թ. Երզնկայի «Եղբայրության» կանոնադրությունը վերագրել արհեստավորական համքարություններին: Այս մոտեցման միակ կռվանը «Եղբայրությունում» միավորված երիտասարդների արհեստավորի զավակ լինելն էր և նրանում արձանագրված կրոնա-բարոյական նորմերի նմանությունները ավելի ուշ՝ XVIII-XIX դդ., համքարային կազմակերպությունների նմանատիպ սկզբունքներին: Վ.Գրիգորյանի հրատարակած XVIդ. Պողոլիեի «Եղբարց քաջուրաց»-ի կանոնադրությունն իր կրոնա-գաղափարական և սոցիալ- նորմավորող դրույթներով նման էր Երզնկայի փաստաթղթին: Ակնհայտ է, որ այս երկու գրավոր հուշարձաններում խոսքը գնում է ոչ այնքան համքարությունների, որքան քաղաքաբնակ հայ երիտասարդների կիսառազմականացված հասակային խմբի ազգային- հասարակական կազմակերպության մասին*:*

Համքարությունները իրենցից ներկայացնում էին քաղաքային համայնքի կազմակերպման ձևեր, որոնք արևելյան հասարակություններում հանդես էին գալիս որպես միջնորդ օղակ պետության (իմմ. քաղավորի) և քաղաքային հասարակության միջև: Այստեղ արևմտաեվրոպական ցեխերի և արևելյան համքարությունների միջև առկա են գործառութային մի շարք տարբերություններ, որոնց արմատները թաքնված են հողի սեփականության երկու համակարգերի (արևմտյան և արևելյան) մեջ: Պետություն- քաղաքային համայնք, պետություն–քաղաքի բնակիչ *հարաբերությունների կարգավորման խնդիրները (հարկային պարտավորություններ, հասարակական աշխատանքներ, պատժիչ կամ դատավարական որոշ գործառույթներ և այլն) փոխադարձ համաձայնությամբ վերապահված էին համքարություններին, որոնք վճռական դերակատարում ունեին քաղաքային ինքնակառավարման գործում (օր. Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի, Երևանի բոլոր քաղաքագլուխներն ընտրվում էին համքարային ավագանու վճռական մասնակցությամբ): XIX դ. 60-ական թթ. Ռուսաստանում սկսված և 70-80թթ. խորացող ազատական բարեփոխումները (օր. 1867թ. հաստատված համքարությունների նոր կանոնագիրքը, քաղաքային ինքնակառավարման նոր օրենքները) խարխլեցին համքարությունների ոչ այնքան տնտեսական-կարգավորող հիմքերը, որքան նրանց հասարակական-կարգավորող ֆունկցիաները՝ զրկելով նրանց քաղաքային ինքնակառավարման և ներհամայնքային պոտեստար (իշխանական) լծակներից:* Քաղաքային համայնք-պետություն *փոխհարաբերություններում համքարությունների ղեկավարումը հասցվեց նվազագույնի, որն էլ XIXդ. վերջին առաջացրեց համքարների և հայ մտավորականության բողոքը:*

Գոռեիկ սոցոլոգիական խորհրդային պատմագրությանը հատուկ էր մի կաղապարային դրույթ, թե իբր կապիտալիզմի բուռն զարգացումը Ռուսաստանում և գործարանային էժան ապրանքների հոսքը Անդրկովկաս վճռական հարված հասցրեցին տնայնագործությանն ու արհեստներին՝ դրանով իսկ դուրս մղելով համքարություններին կամ նեղացնելով նրանց դերը: Հարկ է նշել, որ XXդ. I քառորդում համքարությունները զրկվեցին իրենց վճռական դերակատարումից՝ կորցնելով իրենց ոչ միայն տնտեսական, այլև սոցիալ-նորմավորող լծակները՝ դառնալով անախրոնիզմ վերափոխվող հասարակական կառույցներում: Իսկ խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո համքարությունները դարձան «ոչ պիտանի» օղակներ նոր հասարակական-քաղաքական հարաբերությունների շղթայում:

ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ (ՀԱԻ)

ԳՅՈՒՄՐՈՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում պահվում են պատմական Հայաստանի տարբեր գավառներին և առանձին բնակավայրերին նվիրված շուրջ 200 ձեռագիր աշխատություններ, որոնք արտացոլում են հայ ժողովրդի նյութական մշակույթը, տնտեսական կենցաղը, հոգևոր կյանքը, սովորույթները, ծեսերը, հավատալիքները, տոները և

այլն: Դրանք գրվել են տարբեր հեղինակների կողմից, տարբեր ժամանակներում: Հնագույն նյութը գրված է 1896 թ.: Նյութերը կարևորվում են նրանով, որ հեղինակները գրի են առել և նկարագրել իրենց բնակավայրերը, բնակչության առօրյա կյանքը, նիստուկացը, սովորույթները, բարքերն ու հավատալիքները:

Դրանց ուսումնասիրությունը առանձնահատուկ նշանակություն է ստանում այն առումով նաև, որ բազմաթիվ հարցերի պարզաբանման համար անարատ, հավաստի սկզբնաղբյուրներ են:

Գյումրի քաղաքին ու գյումրեցիների կենցաղին ու սովորություններին վերաբերող միակ աշխատանքը արխիվը ձեռք է բերել 1976 թ.: Հեղինակը Հեղինե Եղիշեի Գյոլեցյանն է, ծնված Գյումրի քաղաքում, 1899 թ.: 1918 թ. նա ավարտել է Արդության օրիորդաց դպրոցը, իսկ 1930 թ.՝ Երևանի պետհամալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը:

Աշխատանքից զգացվում է հեղինակի մեծ սերն ու հարգանքը իր քաղաքի, իր ժողովրդի ու նրա ավանդույթների նկատմամբ: Նա գրել է իր տեսածի ու ապրածի մասին, առանց խեղաթյուրման ու ավելորդ պաճուճանքների:

Գյումրու բնակչությունը. բնիկ հայեր, որ ապրում էին Գեղցոնց, Ջորի բողազ, Ջաբռռ, Ջայի մայլա թաղամասերում: Կարինից ու շրջակայքից ներգաղթած հայեր, այդ թվում նաև կաթոլիկներ՝ Կարմիր ախպրի, Փահաների թաղամասերում, այժմյան կայարանի տարածքում, Պրեղկայում: Գյումրիում ապրում էին նաև թուրքեր, հույներ, ուռումներ, հրեաներ:

Հայ լուսավորչականներն ունեին չորս եկեղեցի՝ Սբ Աստվածածնի, Սբ Փրկչի, Սբ Նշանի և Սբ Գրիգոր Լուսավորչի: Քաղաքում եղել է մեկ կաթոլիկ եկեղեցի, որն ավերվել է 1926 թ.՝ երկրաշարժից: Եղել է նաև հունական մեկ եկեղեցի՝ «ՈՒռումի ժամ» և մեկ մատուռ, եղել են ռուսական երեք մատուռներ՝ Կազաչի պոստում, զորանոցում և բերդում: Թուրքերն իրենց թաղում ջամի ունեին, իսկ հրեաները՝ սինագոգ:

Հ. Գյոլեցյանը գրում է, որ գյումրեցու պատկերացմամբ քաղաք արտահայտությունը նշանակում էր միայն Գյումրի, արհեստավորների և երկրագործների քաղաք, որի վարպետների հռչակը տարածված էր ամենուր:

Աշխատանքում թվարկված են արհեստներն ու զբաղմունքները, քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները՝ Հեքիմյանի մեխանիկական գործարան, ալրաղաց (կրակով ջաղաց), դարաղխանաներ, ձիթհաններ:

Ուշագրավ է քսաներորդ դարասկզբի քաղաքային բնակարանի (օդա, քուրսու տուն, քիլար, թոնրատուն, շվաք) ու նրա կահավորման նկարագրությունը:

Մանրամասնորեն նկարագրված են գյումրեցիների ճմռան պատրաստության՝ թաղարուքի եղանակներն ու ձևերը, Արփիաչայում և Չարքզի ձորում մեծ լվացքի գնալու, բաղնիք գնալու ծեսը, «մաճի էնելու» և այլ սովորություններ:

Աշխատանքում հատուկ տեղ են գրավում հարսանեկան ծեսի նկարագրությունը և տոնական արարողությունները Գյումրվա կենցաղում:

ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ (ՀԱԻ, ՀԱՊԹ)

ՆԵՐՔՆԱԶԳԵՍՏԸ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Հայոց տարազի համակարգը կազմված էր ներքնազգեստից, վերնազգեստից, գլխի հարդարանքից, զարդարանքից ու ագանելիքից:

Ներքնազգեստի առանձին մասերի վերաբերյալ նյութերը բավական սահմանափակ են, հաճախ պարզ թվարկման, առանց տեղական առանձնահատկությունների: Թե՛ գրավոր, թե՛ բանգարանային նյութերի սակավությունը, հավանաբար, պետք է բացատրել այն բանով, որ այս տարազամասերը կապված են թաքուցված ոլորտի հետ, դրանք առնչվում են ներսի հետ, ուր մուտք չունի օտար աչքը: Բանասացների հետ ներքնազգեստի տարրերի մասին զրույցը սկսելու առաջին իսկ պահից, նրանց արձագանքից պարզ է դառնում, որ խոսքը փակ համարվող թեմայի շուրջ է: Սա էթնիկ վայելչության ինքնատիպ դրսևորում է, տվյալ դեպքում հագուստի մասերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, գնահատանքի արտահայտություն:

2. Կանացի շապիկը կարել են կարմիր, սպիտակ կտավե, բամբակե, մետաքսե կտորներից: Գյուղական միջավայրում շապիկը երկարափեշ, երկարաթևք զգեստ էր: Տարեց կանանց շապիկը ևս երկար փեշեր ուներ և հասնում էր մինչև ոտքերի կոճերը: Քաղաքային կենցաղում ավելի վաղ է գործածության մեջ մտել կարճ թևքերով, մինչև ծնկները ծգվող շապիկը: XX դ. սկզբին Երևան, Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք և այլ քաղաքներում երիտասարդների տարազում մեծ տարածում ստացավ նորատիպ, փեշի մասում ծալաբոլորքով (աբռոկայով) շապիկը՝ առանց թևքերի, եզրերն ասեղնագործ կամ ժանեկագործ երիզներով: Զգեստի գույնի (կարմիր, սպիտակ) ընտրության հարցում նկատելի են գույնի նշանային գործառույթի դրսևորումները, գունամտածողության և ժողովրդական փորձի առանձնահատկությունները: Կապված ժողովրդական հավատալիքների հետ, վնասաբեր հմայությունից զերծ մնալու ակնկալիքով՝ շապիկը ձևելիս աշխատել են, որ ոչ մի կտոր չավելանա: Պաշտոնական գործառույթից բացի, այստեղ որոշակի դեր է ունեցել կտորի խնայողության խնդիրը: Շապիկը ունեցել է հմայական, գեղագիտական և էրոտիկ նշանակություն:

3. Տղամարդկանց ներքնազգեստի պարտադիր մաս կազմող շապիկը կարվել է սպիտակ կտավե, բամբակե կտորներից: Զգեստի գույնը ունեցել է առողջապահական նշանակություն: Տարազի արևմտահայկական համալիրում տղամարդկանց շապիկը առանձնացել է գեղազարդման արվեստով: Շապիկը եղել է առանց ուսակարերի, ուղիղ կամ թեք օձիքով: Չունևոր տղամարդիկ շապկի տպավորություն թողնելու նպատակով դրա փոխարեն կրել են սպիտակ կրծկալ: Անկախ սոցիալական դիրքից, տղամարդը պետք է ապահովեր ավանդական հագուստի նվազագույն համալիրը, թեկուզ թվացյալ ձևով:

4. Կանանց ներքնազգեստի տարր վարտիքը եղել է մի քանի տիպերի՝ խոնջանով, կապիչներով, կարճափողք: Այն կարել են կարմիր բամբակե, մետաքսե կտորներից: Գյուղական միջավայրում գործածվել է մինչև ոտքերի կոճերը ձգվող, ոլորուն հյուսածո քուղ-խոնջանով կապված, ճագով կամ առանց ճագի լայն վարտիք: Քայլելիս վարտիքի ասեղնագործ, ժանեկազարդ կամ թանկարժեք մետաքսե կտորից ժապավեն երիզն անպայման պիտի երևար. դա էին պահանջում վայելչության, վարքի նորմերը: Անբարոյական կանանց անվանել են «անվարտիք»: Անիծելիս՝ ասել են «կարմիր վարտիք չտեսնես», այսինքն՝ չամուսնանաս: Հարսանեկան վարտիքը պարտադիր կարմիր էր, լայնափողք, եզրերը շքեղ հարդարված և ուներ նշանային գործառույթ: Օժիտի մեջ պարտադիր դրվել են հատուկ այդ նպատակով պատրաստված մի քանի

զույգ շապիկ-վարտիք: Կնոջ, հատկապես զոքանչի վարտիքին վերագրվել է հմայական, բուժական նշանակություն:

19-րդ դ. –20-րդ դ. սկզբին, առաջին հերթին երիտասարդ աղջիկները, կանայք քաղաքներում գործածել են կարճ փողքերով, եզրերին գործարանային ժանյակե ժապավենով վարտիք: Հետը հագել են կարճ, կրծքամասն ասեղնագործած, մինչև ծնկները հասնող քաղաքային տիպի շապիկ:

5. Տղամարդկանց վարտիքը կարվել է սպիտակ կտավե, քաթանե, բամբակե կտորներից: Վարտիքն ունեցել է հյուսածո վարտեցկապ, լայն ճագ և լայն փողքեր: Գյուղական պայմաններում գործածել են համեմատաբար նեղ փողքերով տիպը: 19-րդ դ. վերջին երիտասարդ տղամարդիկ կրել են կապիչներով, լայնափողք վարտիքներ: 1910- ական թթ. սկսում են կիրառել կոճակավոր տարբերակը: Տղա երեխաներին հագցրել են առանց աղվեստակի-չաթալ վարտիք, որն ավելորդ էր դարձնում մանկան ներքնաշորը հաճախակի փոխելու անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ հին հայկական տարազը վարտիքի առկայությամբ է, որ տարբերվել է հունա-հռոմեական համալիրներից: Փաստ է, որ հին հայկական տարազում առկա էր երկար վարտիքը, և այս բառեզրի ստուգաբանությունն էլ կարևոր կռվան է այն թյուր տեսակետի դեմ, ըստ որի տարազի այս մասը քոչվորական ծագում ունի, որովհետև մինչև թուրքական ցեղերի Առաջավոր Ասիա գալը, հայերը կրել են վարտիք:

6. 20-րդ դ. սկզբին քաղաքային միջավայրում կանանց ներքնազգեստում սկսում են օգտագործել նոր տարր կրծկալ-լիվչիկ՝ սպիտակ բամբակե կտորից: Այն կոճկվել է թիկունքից և երկարությունը հասել է մինչև գոտկամաս:

20-րդ դ. առաջին կեսերից լայն տարածում են ստանում կանանց սպիտակեղենի նոր տարրերը, որպես կանացիության ցուցիչներ: Մինչ 1960-ական թթ. ֆեմինիստական շարժման նոր ալիքի ներկայացուցիչները մերժում էին կրծկալը, համարելով կնոջ ազատազրկման արտահայտություն, հայ կանանց հագուստում ներքնազգեստի այս մասը շարունակում էր մնալ որպես կանահության, կնոջ կերպարի կարևոր տարր: Ներկայումս, կապված նորաձևության նոր միտումների թելադրանքի հետ, երիտասարդ աղջիկների, կանանց հագուստում նկատվում է կառուցվածքային փոփոխություն. ներքնազգեստի տարերը դառնում են վերնազգեստ:

ԿԱՌԼ ՍԵՂԲՈՍՅԱՆ (ՀԱԻ)

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՇԻՐԱԿԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԵՎ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ

(19-րդ. դ. - 20-րդ. դ. 70- ական թթ.)

Հայոց կենցաղի և մշակույթի բնութագրության մեջ հատկանշական է ժողովրդի աշխույժ հետաքրքրությունն ու կապվածությունը իր պատմամշակութային ավանդույթներին, անցյալի դրական սովորույթներին: Ավանդույթությունը հայ ժողովրդի կենցաղի և մշակույթի առանձնահատկություններից մեկն է, որն էլ ավելի է հարստացնում ու գեղեցկացնում համընդհանուր մշակույթը: Պատմական իրադարձությունների բերումով ակնհայտորեն նկատելի է, որ հայոց մշակութային առաջընթացի ապրել է զարգացման երկվություն: Կյանքի

բոլոր բնագավառներում յուրատեսակ զարգացել ու պահպանվել է ավանդականը, իսկ մյուս կողմից բուռն առաջընթաց է ունեցել ժամանակակիցը, քաղաքատիպ կենցաղավարությունը, որը ոչ թե հակադրվել, այլ ներդաշնակ զուգորդվել է նախորդին: Շիրակում էլ այն արտահայտվել է ավանդականի և նորի զուգորդմամբ: Այդ երկվությունն իր ամբողջական արտահայտությունն է գտել հատկապես ավանների բնակարանային համալիրներում:

ՀՀ Շիրակի պատմազգագրական մարզի բնակարանային համալիրն ունի որոշակի պատկեր, որի ավանդութային կողմը, չնայած այդ համալիրի որոշ մասերի նկատելի փոփոխություններին, հարատևում է ցայսօր: Հետազոտելով շիրակցիների բնակարանային համալիրները, պարզորեն սահմանագծվում են դրա զարգացման հիմնական փուլերը. 19-րդ դ. կեսերը,19-րդ դ. վերջը և 20-րդ դ. սկիզբը, 20-րդ դ. 20-30-ական թթ. և բնակարանի զարգացման բուռն շրջանը՝ 50-ական թվականներից մինչև նույն դարի 80-ականների սկիզբը:Հիշյալ փուլերով Շիրակում բնակարանային համալիրի զարգացման համար կարևոր նշանակություն են ունեցել ինչպես բնակլիմայական պայմանները, սև՝ իսկ ավելի ուշ, բազմերանգ տուֆի առկայությունը, այնպես էլ տեխնիկատնտեսական առաջադիմությունը Շիրակի գյուղերում և դրանց հարակից արդյունաբերական ավանների կազմավորումը: Որոշակի էր այդ խնդրում նաև մարզի ավանների, շրջկենտրոնների և քաղաքների թաղամասերի պլանավորված հատակագծումների և բնակավայրերի միջև բարեկարգ նորակառույց ճանապարհների առկայությունը: Հատկանշական է առանձնապես Հայրենական Մեծ պատերազմից հետո բուռն թափ առած կառուցապատման փուլը, երբ արդյունաբերական ավաններում և որոշ գյուղերում կառուցված 2-3 և ավելի հարկերով տիպային շենքերին հատկացվում էին ավանդական օժանդակ կառույցներ, իսկ շենքի ներքին պլանավորումը ենթարկում կամային ձևափոխումների, և ընդհակառակը, գյուղերում հանդես եկան թիթեղածածկ մեկ կամ երկհարկանի, երբեմն պատշգամբավոր, կանոնավոր տներ, պահպանելով, սակայն, բակի ավանդական կառուցվածքը: Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում անպայման լինում էր մեծ կամ փոքր հողակտոր, ուր հիշյալ բնակիչներն ու նրանց ընտանիքի անդամները բանջարեղեն էին աճեցնում, իսկ օժանդակ կառույցներում պահում անասուն, հավեր և այլն:

Շիրակի մարզի էթնիկ, մանավանդ ազգագրական խմբերի (տարոնցիներ, բիթլիսցիներ, վանեցիներ,ալաշկերտցիներ, դարսեցիներ, էրզրումցիներ, բասենցիներ և այլն) փոխազդեցությունները երկար ժամանակ իրենց արտահայտություններն են ունեցել յուրաքանչյուր վայրի կենցաղի և մշակույթի վրա, առավելապես բնակարանի համալիրի ձևավորման վրա: Փոփոխվելով ու միաձուլվելով՝ դրանք հետագայում գրեթե հնարավոր չի եղել տարբերակել: Ավանդութային նմանատիպ, սակայն յուրովի առանձնահատկություններով արտահայտությունները, բնակարանի համալիրում ևս, հանդես են եկել համընդհանուր ձևով:

Բնակարանային համալիրների զարգացումները և ձևափոխություններն իրենց հետ ստեղծում էին գյուղի կամ բնակավայրի թաղերի ոչ միայն մեծացում ու նորերի առաջացում, այլև դրանց անվանումների դասազատում՝ հնի և նորի փոխկապակցվածության արտահայտմամբ: Օրինակ՝ «Հին թաղ», «Գործարանի թաղ», «Գեղամեջ», «Շրջկենտրոն», «Արտեր», «Բանավան», «Բոս-

տաններ», «Նոր շեն», «Հին գյուղ», «Կայարան», «Խառը թաղ», «Քաղաքամերձ», և այլն: Շիրակում բնակարանային շինարարության մեջ աշխատող վարպետ-բանվորները նախկինում եղել են մեծ մասամբ Ալեքսանդրապոլ-Լենինականի նշանավոր վարպետները: Հետագայում գրեթե բոլոր գյուղերում և ավաններում արդեն հանդես եկան տեղացի վարպետ -բանվորներ, որոնք առանձնատներ էին կառուցում մասնավոր պայմանավորվածությամբ: Այսպիսի դեպքերում սնագործ աշխատանքները իրենց վրա էին վերցնում շենքի տիրոջ տան անդամները, բարեկամները՝ հարևանների և համագյուղացիների համախակի օգնությամբ:

Վերակառուցվող բնակարանային համալիրներում, գյուղում և ավանում նորակառույց առանձնատներում գնալով աչքի էին ընկնում հնի և նորի զուգորդումները, ավանդույթների նորացումները, բնակիչների առտնին կենցա- ղին ու զբաղմունքներին սպասարկող հարմարությունները: Եվ չնայած դրանք կրում էին մոդայական ընդօրինակման բնույթ, այնուամենայնիվ համապատասխանում էին բնակիչների պահանջմունքներին:

Անհրաժեշտ է նշել նաև այն, որ Շիրակի գյուղական և ավանային բնակարանային համալիրների զարգացման համար վաղուց ի վեր օրինակ են ծառայել նաև Ալեքսանդրապոլ-Լենինականի բարեկարգ բնակարանները, որոնք տվյալ ժամանակներին համապատասխան լինելուց բացի, ներառել են իրենց մեջ ազգային ավանդական կառուցողական արվեստի այնպիսի տարրեր, որպիսիք համահունչ են եղել հարավկովկասյան ժողովուրդների, տվյալ դեպքում՝ շիրակցիների կենցաղավարությանը:

ԺԵՆՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՀԱԻ)

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ – ՏԸՐԸՆԴԵԶԻ ՇԻՐԱԿՅԱՆ ՄԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՇՈՒՐՋ

Տարեկան (տաղավար) տոներից Տըրընդեզը, անշարժ է և տեղի է ունենում ամեն տարի փետրվարի 13-ին: Այն իր հետ բերում է եղանակի բարեխառնություն, ունի գարնան ավետաբերի, ամառվա բերք ու բարիքի առատության, ամուսնական զույգերի պտղաբերություն ու բախտավորություն խոստանում: Այս գաղափարների շուրջ էլ ձևավորվել է տոնի արարողակարգը: Զեկուցման համար հիմք է ընդունվել 1999թ. Տըրընդեզին տեղի ունեցած արարողության մի տարբերակ: Ընտանիքները ծագումով Գյումրիում վաղուց բնակություն հաստատած դարսեցիների ժառանգներն են:

Այս տարբերակում առանձնահատուկ տեղ է հատկացվում նշանված, բայց դեռ չամուսնացած նորահարսի առաջին Տըրընդեզին: Չնայած ամուսնությունից հետո առաջին Տըրընդեզը ևս համարվել է կարևոր, սակայն մեծ շուքով նշվել է նշանադրությունից մինչև հարսանիք եղած առաջին Տըրընդեզը:

Տոնակատարության ընթացքում առանձնահատուկ շեշտը դրվել է՝

- *Նշանված հարսնացու և փեսացու զույգերի, նրանց կերպավորող տիկնիկների (հարս ու փեսա) վրա:*

- *Տրրընդեզի կրակը վառող ու պահպանող՝ տան փոքր տղայի և նրան կերպավորող ծիսական տիկնիկի վրա:*
- *Կրակի տերերին անձնավորող յոթ հարազատ կանանց (մորաքույր, հորաքույր, քավորակին…) վրա:*

Արարողակարգի գագաթնակետը՝ հանգույցը, ծիսական մոմերով պարն է՝ Գօվընդը, որն աստիճանաբար արագանալով փոխվում է Տրրընդեզին հատուկ ծիսական Վերվերիի: Պահպանվել են հարսանեկան մոմերով պարի բոլոր առանձնահատկությունները՝ հատկապես 7 պտույտը, վառվող մոմերը և այլ հատկանիշներ, բացի երկսեռ մասնակիցներից: Այս դեպքում մասնակիցները միայն երիտասարդ կանայք են՝ հարսնացած կամ հարսնացու:

- *Լավ պահպանվել է և տոնի մեջ առանձնահատուկ տեղ ունի ծիսական կերակուրը՝ աղանձը, որը համեմված է քաղցրավենիքով:*

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ (ՇՀՀԿ)

ՇԻՐԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Աղետալի երկրաշարժը, անցումը շուկայական հարաբերություններին և քաղաքական բարդ իրադրությունը խորացրեցին սոցիալական հակասությունները և ծանր հետևանք ունեցան ողջ հանրապետության, այդ թվում նաև Շիրակի բնակչության համար:

Խորհրդային տարիներին ընտանիքի բարեկեցությունը որոշվում էր նրա անդամների՝ հասարակական արտադրության գործընթացում ունեցած մասնակցությամբ և շատ քիչ էր կախված տնային տնտեսության մեջ նրանց ներդրումից: Ներկա փուլում, անշուշտ, դրությունը նկատելիորեն փոխվում է: Հարմարվելով նոր պայմաններին, տնային տնտեսությունները ստիպված ակտիվացնում են իրենց գործունեությունը, ինտենսիֆիկացնելով իրենց աշխատանքային և տնտեսական գործառույթները:

Ժամանակակից ազգաբանական և էթնոսոցիոլոգիական հետազոտությունները (Մ. Գաբրիելյան, 2001; □. □□□□□□□□□, 1997) ցույց են տալիս, որ անցումային շրջանում նշանակալիորեն մեծանում է տնային տնտեսությունների ինքնապահովող գործառույթի կամ բնատնտեսական նշանակությունը: Եթե տնտեսության զարգացման տեսանկյունից ամբողջությամբ վերցրած այն բացասական նշանակություն ունի և անհամեմատ նվազ արդյունավետ է, քան հասարակական արտադրությունը, ապա գոյապահպանության իրավիճակում այն հնարավորություն է տալիս ապահովել ընտանիքի կենսականապահանջների նվազագույն մակարդակը: Շուկայական հարաբերությունների պայմաններում նման տնտեսական գործունեությունը կրում է թե՛ բնամթերային ապրանքափոխանակության, և թե՛ ապրանքադրամային բնույթ:

Վերջին տարիներին կատարված վերոհիշյալ փոփոխությունները ստիպեցին Շիրակի բնակչությանը ինչ-որ չափով վերադառնալու դեպի ավանդական

տնտեսաձևերը՝ անհատական տնտեսավարմանը, տնայնագործությանը, օժանդակ տնտեսական զբաղմունքներին և տնտեսության յուրացնող ձևերին:

Շիրակի բնակչության արդի տնտեսական զբաղմունքները որոշակի փոփոխություններ են կրել ավանդականից դեպի ժամանակակիցն անցումային փուլում: Հարափոփոխ սոցիալ-տնտեսական ու քաղաքական շրջափուլերն էապես ազդել են այդ զբաղմունքների այլաձևումների և նոր որակների առաջացման վրա: Մեծացել է օժանդակ տնտեսական զբաղմունքների այն խմբերի նշանակությունը, որոնք ուղղակի առնչվում են կենսապահովման մշակույթի հետ՝ հանդիսանալով սննդի հայթայթման լրացուցիչ միջոց: Այս առումով առանձնապես կարևորվում են թոչնաբուծությունը, ձկնորսությունը և մեղվաբուծությունը:

Անցումային շրջանում ուրույն դեր և նշանակություն են ստանում տնտեսության յուրացնող ձևերը՝ հատկապես հավաքչությունը, պայմանավորված ուտեստի համակարգում դրա արդյունքների գրաված տեղով: Բուսահավաքչության արդյունքում ձեռք բերված վայրի աճող բույսերն ու արմտիքները Շիրակի բնակչության կենսապահովման մշակույթի կարևորագույն բաղկացուցիչներ են կազմում, միաժամանակ դառնալով շատ ընտանիքների համար լրացուցիչ եկամուտի աղբյուր:

Վերոհիշյալ տնտեսական գործընթացներում ընդգրկված է ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակչության մեծ մասը: Ընդ որում, ձկնորսությամբ և մեղվաբուծությամբ զբաղվում են գերազանցապես տղամարդիկ, իսկ թոչնաբուծությամբ և հավաքչությամբ՝ առավելապես կանայք՝ առանց տարիքային սահմանափակության:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ժամանակակից փուլում ավանդական տնտեսաձևերից շատերը ոչ միայն կենսունակ գտնվեցին, այլև կատարեցին սոցիալական և տնտեսական ճգնաժամը մեղմացնող կարևոր գործոնի դեր:

ԱՐՏԱՇԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ (ՇՀՀԿ)

ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ XX դ. ՎԵՐՋԵՐԻՆ

(ըստ էթնոժողովրդագրական հետազոտության նյութերի)

Վերջին տարիներին Հայաստանի,մասնավորապես Գյումրու բնակչության աշխատանքային տեղաշարժերի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալներն ամբողջական չեն և հակասական բնույթ ունեն:

Մեր կողմից կատարված էթնոժողովրդագրական հետազոտությունից պարզվել է, որ XX դ. վերջերին Գյումրիում բնակչության աշխատանքային տեղաշարժերը կարելի է բաժանել հիմնականում երեք խմբերի.

1. միջպետական.

2. ներհանրապետական.

3. տնտեսությունում՝միջճյուղային աշխատանքային տեղաշարժեր:

Ելնելով միջպետական նշանակության աշխատանքային տեղաշարժերի առանձնահատկություններից, այն բաժանել ենք երկու փուլի՝ առաջինն ընդգրկում է 1988-91թթ., երկրորդը՝ 1992թ. մինչև մեր օրերը: Այս երկու փուլերն իրարից տարբերվում են բնակչության աշխատանքային տեղաշարժերի թվի մեծությամբ և ուղղություններով: Հանրապետությունում միջպետական աշխատանքային տեղաշարժերն կտրուկ ակտիվացան 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո, երբ խնդիր դրվեց, Խորհրդային միության հանրապետությունների աշխատունակ բնակչության օժանդակությամբ կարճ ժամանակահատվածում վերականգնել աղետի գոտին: ԽՍՀՄ-ի լուծարումով տասնյակ հազարավոր աշխատողներ վերականգնման գոտուց վերադարձան իրենց հայրենիք:Նորանկախ Հայաստանում սոցիալ-տնտեսական ձևափոխումները խթանեցին հարյուր հազարավոր բնակչության արտագնա աշխատանքի մեկնումը: 1992թ. Գյումրիում սկիզբ առած միջպետական աշխատանքային տեղաշարժերից առանձնացրել ենք երկու տեսակ.

ա. Մեզոնային արտագնա աշխատանքի մեկնածներ, որ աշխատանքային գործունեությունը ծավալվում են հիմնականում ԱՊՀ-ում և Եվրոպական երկրներում: Աշխատանքային գործունեությունը կարող է տևել մի քանի ամսից մինչև տասնյակ տարիներ.

բ. Ճոճանակային աշխատանքային տեղաշարժ: Այս տեսակի գործունեությամբ զբաղվում են հիմնականում առևտրական-վերավաճառողները, որոնք Բագրատաշենի մաքսակետից, Սադախլոյից գյուղատնտեսական մթերքներ, թեթև արդյունաբերական ապրանքներ ու սննդամթերք են ներկրում, որն իրացվում է ոչ միայն Գյումրիում, այլև Շիրակի մարզում:

Անցումը նոր տնտեսական հարաբերությունների Հայաստանում էական ազդեցություն թողեց ներհանրապետական տնտեսության, մասնավորապես, արդյունաբերության ոլորտում միջճյուղային և ներճյուղային աշխատանքային տեղաշարժերի վրա: Մեր հետազոտությունից պարզվել է, որ Գյումրիում ներհանրապետական տեղաշարժերը տեղի են ունենում քաղաք-գյուղ, գյուղ-քաղաք և քաղաք-քաղաք ուղղություններով: Մոտավոր հաշվարկներով հինգ հազարից ավելի գյումրեցիներ մեկնում են գյուղական բնակավայրեր՝ փոխանակելով կենցաղային և թեթև արդյունաբերական ապրանքները գյուղատնտեսական մթերքների հետ՝ հետագայում շուկայում իրացնելու նպատակով: Քիչ չեն նաև նրանք, ովքեր տրանսպորտային միջոցներով Արարատյան դաշտի բերքը իրացնելով Շիրակի մարզում, ձեռք են բերում հացահատիկային մշակաբույսեր և կարտոֆիլ, որը պահեստավորելով աշնանը և ձմռանը վաճառելով ապահովում են շահույթ: 1990-ական թվականների տնտեսական կառուցվածքային փոփոխությունները մասնավորապես արդյունաբերության համակարգում հանգեցրին նրան, որ մոտավոր հաշվարկով 50-60 հազար բանվործառայողների մի մասը մեկնեց արտասահմանյան երկրներ արտագնա աշխատանքի, հատկապես ԱՊՀ հանրապետություններ, իսկ մի մասն էլ հիմնականում դարձավ վերավաճառող:

Այսպիսով, 1990-ական թվականներին Գյումրիում բնակչության աշխատանքային տեղաշարժերի կտրուկ ակտիվացումը պայմանավորված է եղել սոցիալ տնտեսական և քաղաքական գործոններով:Այն ունեցավ ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքներ: Արտագնա աշխատանքի մեկ-

նածների կողմից իրենց հարազատներին ուղարկվող դրամական միջոցները էապես թուլացրել են սոցիալական լարվածությունը: Քանի որ արտագաղթողների ճնշող մեծամասնությունը ամուսնական տարիքի երիտասարդներն են, ապա դա բացասաբար է անդրադարձել բնակչության կայուն վերարտադրությունը ապահովելու վրա: Արտագնա աշխատանքի մեկնածների հարազատներին մեր կողմից արված հարցումներից պարզվել է, որ մեկնածների 60%-ից ավելին ցանկություն չունեն վերադառնալու, դեռ ավելին, պատրաստ են համապատասխան պայմանների դեպքում գնալ-միանալու «զրուում» աշխատող իրենց հարազատներին:

И□□□□ □□□□□□□□ (ИАЭ)

СОЦИАЛЬНЫЙ СТАТУС РУССКИХ АРМЕНИИ
(по материалам переписи 1989г.)

В основу сообщения положен анализ социальных характеристик русских Армении по данным переписи населения республики 1989г.

Объективными условиями и предпосылками формирования определенного статуса этнической группы являются языковые характеристики. На протяжении последних десятилетий среди русских Армении стала ярко проявляться тенденция к расширению двуязычия, и к началу 1990-х гг. доля русских со знанием армянского языка достигла 32,2%. Языковая компетенция в виде двуязычия, расширяющая профессиональную, культурную и общественную деятельность человека, способствует росту уровня его образования, создает условия для его социально-профессиональной мобильности, повышая в итоге его социальный статус.

Одной из важнейших характеристик социального статуса этнической общности является присущий ей уровень образования, который играет существенную роль в совершенствовании социальной структуры населения, усилении ее однородности, росте культурного потенциала и служит одним из важнейших показателей социально-экономического развития народа. Статистические материалы свидетельствуют, что образовательный уровень русских был одним из самых высоких в Армении. По этому показателю они опережали не только другие национальные меньшинства, но и коренной этнос.

Высокий уровень образования русских Армении определяется различными факторами. Среди них-особенности формирования русского городского населения, основу которого составили высококвалифицированные инженеры, техники и рабочие, направленные на промышленные предприятия Армении в 1950-60-е гг. В известной мере высокий уровень образования был связан с преобладанием среди русских городского населения (85%). Среди факторов,влияющих на уровень образования этнических групп, можно назвать и высокий образовательный уровень титульного этноса.

Уровень образования определял степень участия этнической группы в общественном производстве и его социально- профессиональную струк-

туру. Уровень занятости русских достигал 44,4%, а доля русских в занятом населении составляла 1,8%, что несколько превышало их долю во всем населении республики (1,6%). Характер трудовой деятельности русского населения был разнообразным: промышленность, сельское хозяйство, сфера управления, просвещение, строительство, здравоохранение, наука, культура и искусство и т. д. Динамика социально – профессионального состава русских Армении имела тенденцию увеличения численности работников интеллектуальной сферы, людей, занятых квалифицированным трудом. Для русских была характерна относительно высокая занятость в индустрии,в отдельных отраслях которой они занимали определенные позициии.

Анализ социально-значимых характеристик свидетельствует, что к началу 1990-х гг. русские являлись одной из наиболее социально –продвинутых этнических групп. После обретения Арменией государственной независимости русские вступили в непростой период своего национального развития. Радикальные преобразования в политической, социальной и экономической жизни вызвали существенные изменения реального статуса этой национальной группы. По приблизительным оценкам к настоящему времени русское население Армении сократилось до 10 тысяч человек. Столь резкое уменьшение численности русской диаспоры является показателем начавшегося процесса нарушения целостности и самостоятельности группы.

ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ (ՀԱԻ)

ՀԵՏԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ «ՏՎՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԵՐՑՆՈՂՆԵՐԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համաձայն Մարսել Մոսի «տվողների և վերցնողների» հայտնի տեսության (տե՛ս □.□□□□,1996.) յուրաքանչյուր հասարակության երաշխիքներից է երեք պարտավորությունների օրենքը՝ պարտավորություն տալու, վերցնելու և փոխհատուցելու: Ազգաբանության մեջ այս համատեքստում է ընդունված քննարկել բարիքների հասարակական վերաբաժանման բազմաթիվ համակարգերը (ընդհուպ կանանց փոխանակում, տե՛ս Կ. Լևի – Ստրոս, 1983): Բարիքների վերաբաժանումը, բացի առևտրական ապրանքափոխանակությունից, հաճախ նվիրատվության կամ փոխօգնության ձևով է կատարվում: Իսկ քիչ թե շատ զարգացած հասարակություններում չքավորին օգնելու հոգսը հիմնականում ստանձնում են պետության հասարակական ապահովության ծառայությունները: Այսպիսով, օգնություն տվողը կարող են լինել և՛ պետությունը, և՛ տարբեր պաշտոնական կառույցները (ոչ պետական), հասարակությունը՝ ընտանիքը, ազգականները, բարեկամները, հարևանները և այլն:

«Ում՝ ժաշք, ում՝ հրաշք». Հայաստանում «օգնություն» բառը իր այսօրվա ընկալմամբ շրջանառության մեջ դրվեց 1988թ. երկրաշարժից հետո: Մինչ այդ սոցիալական ապահովության նախարարության նպաստներն ու թոշակները դիտվում էին որպես պետական պարտավորություն իր քաղաքացիների կատա-

րած («փոխհատուցում»՝ ծերության թոշակների դեպքում) կամ սպասվելիք աշխատանքի դիմաց (երեխաների նպաստների դեպքում): Իսկ առավել խոցելի խմբերի առանձնացումն ըստ «կատեգորիաների»,ոչ թե «օգնություն» էր ենթադրում,այլ՝«արտոնություն» (հաշմանդամներ,բազմազավակ ընտանիքներ):

Աղետի հետևանքները մեղմելու պետական կարգը, որը «փոխհատուցում» էր սահմանում՝ ըստ կրած զրկանքների (նույն սկզբունքը որդեգրեցին գրեթե բոլոր «զոնոր» կազմակերպությունները), փոխեց օգնություն ստացողների վերաբերմունքը. «օգնությունը» դիտվեց իբրև «տալու» պարտավորություն: Ավանդական փոխօգնության հասարակական համերաշխության սկզբունքը՝«տալիս եմ, որ ստանամ» (do ut des), այստեղ վերաիմաստավորվեց «կորցրել (տվել) եմ՝ ուրեմն պիտի ստանամ» բանաձևի: Երկրաշարժից տուժածների «խմբավորման» դաժան չափանիշների արդյունքում, օր. Գյումրիում ստեղծվեցին քաղամասեր, որտեղ նախ հաշմանդամներ էին բնակարան ստանում: Աղետի գոտում «աղքատ» լինելն առաջին հերթին կապվում է տուն չունենալու հետ: Մամուլում բազմիցս անդրադարձել են աղետի գոտում URBANO ինստիտուտի միջնորդությամբ իրականացվող՝ աղետյալներին բնակարաններով ապահովելու ծրագրին: Սակայն արդեն այսօր ակնհայտ է բնակարանի սերտիֆիկատի՝ավիատոմսի «փոխակերպվելու» միտումը:

«Մեգապոլիսից Մետապոլիս ճանապարհին կորած քաղաք».

Երկրաշարժից անմիջապես հետո շատ էին խոսում ազատ տնտեսական գոտու մասին, որի կենտրոնը պիտի դառնար «օգնություն» տրամադրած պետությունների կողմից համատեղ կառուցած Մեգապոլիս քաղաքը (դրա գաղափարը յուրօրինակ շարունակություն գտավ գյումրեցի նկարիչ Վազգեն Թադևոսյան-Պահլավունու «Մետապոլիս» մետաֆիզիկ գործում): Այդ բացառիկ գաղափարը բախվեց խորհրդային իրողության հետ, և «համաշխարհային» քաղաքի փոխարեն հապճեպ «շահագործման հանձնվեց» Գորբաչովի «երկու տարում կառուցելու խոստումը հաստատող «խորհրդային պետության մանրակերտը»: Սակայն «կենտրոնը դառնալու» գաղափարը իր սիմվոլիկ շարունակությունն է գտել Գյումրիում պարբերաբար անցկացվող «Բիենալե» արվեստի միջազգային փառատոնում:

«Չկա չարիք առանց բարիք». Չմոռանանք, որ միջազգային օգնության շնորհիվ Հայաստան ներթափանցեցին մի շարք եվրոպական նորմեր և նորույթներ, հատկապես բժշկական բնագավառում, հիշենք նաև, որ Հայաստանում Ամերիկյան համալսարան բացելու պատմությունը ևս կապված էր հետերկրաշարժյան միջոցառումների հետ:

«Մեկ ազգ՝մեկ մշակույթ». «Օգնության» ձեռք են յուրովի մեկնում նաև այսօրվա բազմաթիվ աղանդները, որոնց համար ամեն մի ճգնաժամ իրենց ուսմունքը տարածելու հարմար միջավայր է: Հայ առաքելական եկեղեցու «օգնությունը» կրում էր ավելի պասիվ բնույթ. եկեղեցին պարզապես միջնորդի դեր էր խաղում՝ վերաբաշխելով սփյուռքից ստացած օգնությունը: Ընդհանրապես, որպես «զրսի օգնության» հիմնական աղբյուր, սկզբում հանդես եկավ սփյուռքահայությունը, ինչպես ընդհանուր համայնքների և հիմնադրամների (օր. ՀՕՖ), այնպես էլ առանձին բարերարների (հմմտ. «Շաղի լույսը») միջոցով:

«Մի տնով՝մի հալով». Եթե պետության օգնության ծրագրերի նպատակն էր մեղմել աղքատների վիճակը, ապա նրանց գոյատևման հիմնական միջոցն էր

դարձել հասարակական (ընտանեկան, ազգակցական, բարեկամական և դրացիական) օգնությունը: Սակայն ճգնաժամի պարագայում գործող նշված երեք պարտավորությունների օրենքը, յուրովի ազդելով օգնության համակարգի վրա (հմմտ՝. «վավության տակից դուրս գալու» ներքին պարտավորվածությունը), ձևավորում է հասարակական կերպարների նոր ընկալում (հմմտ. «վավ հարևան, վատ բարեկամ», «վավ քույր, վատ եղբայր» և այլն):

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ (ՀԱԻ)

ՏՈՆԵՐԸ ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

(էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն)

• XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին գյումրեցիներն առանձնանում էին ավանդական վարքագծով, որի դրսևորումներից էր կենցաղում համազգային բնույթ ունեցող տոների տարածվածությունը:

Գյումրեցիների կենցաղում առավել տարածված էին քրիստոնեական տոնացույցի հենքը կազմող, սակայն մինչքրիստոնեական ակունքներ ունեցող համաժողովրդական հետևյալ տոները՝ Նոր տարի, Քրիստոսի Ծնունդ, Սուրբ Սարգիս, Տեառնընդառաջ (Տերընդեզ), Բարեկենդան (Բարիկենդանք), Մեծ պաս (Վենձ պաս), Միջինք (Միջունք), Ծաղկազարդ (Ծառզարդար), Զատիկ, Համբարձում, Վարդավառ (Վարթևոր), Սուրբ Աստվածածին (Խաղողօրհնեք), Սուրբ Խաչ (Ուլ կախոց): Տարածված էին նաև «Օխտն անվանը», Գրիգոր Լուսավորչին, Սուրբ Կարապետին, Սուրբ Հակոբին նվիրված տոներն ու պասերը:

• Գյումրին այն յուրօրինակ բնակավայրերից էր, որն ուներ արդեն ձևավորված քաղաքային ավանդույթներ: Վերջինիս դրսևորումներից էր ոչ միայն վերը նշած տոների տարածվածությունը բնակչության կենցաղում, այլև մշակութային այդ ֆենոմենի առկայությունը համքարական կառույցներում:

• Խորհրդային կարգերի հաստատմամբ հայոց տոնական համակարգը մտավ զարգացման նոր փուլ: Այն իր ազդեցությունը թողեց նաև գյումրեցիների տոնական վարքագծում, որն արտահայտվեց կենցաղում ավանդութային-կրոնական հին տոների աստիճանական մոռացման և դրան զուգահեռ խորհրդային նոր տոների տարածման գործընթացով:

• 1980 թ-ին ողջ հանրապետությունում, այդ թվում նաև Շիրակի մարզում և Գյումրի քաղաքում անցկացրած էթնոսոցիոլոգիական հետազոտությունները հնարավորություն տվեցին բացահայտելու այդ տարիներին բնակչության կենցաղում պահպանված տոների տարածվածության ամբողջական պատկերը: Այդ ժամանակաշրջանում ավանդութային-կրոնական տոներից գյումրեցիների կենցաղում դեռևս նշվում էին Քրիստոսի ծնունդը (25%), Զատիկը (25%), Տեառնընդառաջը (25%),Վարդավառը (25%), Ս. Խաչը (22%) և Ս. Աստվածածինը (17%), որոնք ունեին համաչափ տարածվածություն: Տոնական այդ համալիրում սակայն ամենից տարածվածը շարունակում էր մնալ Նոր տարին: Այն, որոշակի փոփոխություններով և համալրումներով հանդերձ, դեռևս մեծ չափով պահպանում էր ավանդական Ամանորի հետ առնչվող հնագույն ծեսերն ու սովորույթները:

1980-ական թթ.-ին խորհրդային նոր տոներից ամենից շատ նշվում էին Կանանց միջազգային օրվան («Մարտի 8»՝ 95%),Հաղթանակին («Մայիսի 9»՝ 87%) և Աշխատավորներին («Մայիսի 1»՝ 84%) նվիրված տոները, որոնք մուտք գործելով գյումրեցիների կենցաղ՝ արդեն ձեռք էին բերել ավանդության որոշակի նորմեր:

• XXդ. վերջերին տեղի ունեցած մի շարք նշանակալից իրադարձություններ (դեկտեմբերյան երկրաշարժ, ղարաբաղյան համազգային շարժում, խորհրդային համակարգի վերացում, հայկական նորանկախ պետության ստեղծում), իրենց արտացոլումը գտան գյումրեցիների տոնական վարքագծում:

Դարավերջին գյումրեցիների շրջանում տեղի ունեցած տոնական վարքագծային փոփոխությունները ընդհանուր առմամբ դրսևորվեցին նախկին խորհրդային տոների անկման և ավանդութային-կրոնական տոների տարածման համընթաց միտումներով: Այսպես, 1992թ. կատարած էթնոսոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում գյումրեցիների տոնական վարքագծում կատարված փոփոխություններն ունեին այս պատկերը՝ Զատիկ՝ 85%, Վարդավառ՝ 57%, Տեառնընդառաջ՝ 34%, Ս.Խաչ՝ 37%, «Մարտի 8»՝ 34%, «Մայիսի 9»՝ 15%, «Մայիսի 1»՝ 4% և այլն: Տոնական ընդհանուր համալիրում կատարված փոփոխություններն, ըստ էության, ոչ թե խորքային էին, այլ առավելապես կրում էին էթնիկական. հոգեբանական, կրոնական և քաղաքական բնույթ: Այստեղ առանձնակի դեր խաղաց Ազգային զարթոնքի գործոնը:

• XX դ. վերջին հայոց պետական տոնացույցը համալրվեց ևս մեկով՝ 1988 թ.-ի դեկտեմբերյան երկրաշարժի զոհերի հիշատակման օրով («Դեկտեմբերի 7»): Այն Մեծ եղեռնի (Ապրիլի 24) սգո օրվա հետ բավական ամրապնդվել է գյումրեցիների կենցաղում:

Հայոց պատմական անցյալի իրադարձությունների արժեքավորման համատեքստում դեկտեմբերյան այս աղետը, որը խլեց հազարավոր գյումրեցիների կյանք, նրանց ինքնագիտակցության մեջ զբաղեցնում է ամենակենտրոնական տեղը:

• Ընդհանուր առմամբ գյումրեցիների տոնածիսական ակտիվ վարքագիծը մեծ չափով պայմանավորված է նրանց էթնոժողովրդագրական կառուցվածքով, որտեղ գերակայողը արևմտահայ շերտն է: Իսկ վերջինս ոչ միայն գյումրեցիների, այլ ընդհանրապես հայ էթնոսի ողջ ենթակառուցվածքում առանձնանում է ավանդապահ բնութագրով, ինչը և ցույց տվեցին ազգագրական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները:

ՌՈԶԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ (ՇՀՀԿ,ԿԱԹ)

ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ

Շիրակի արդի բանահյուսությունը՝ որպես էթնոհոգեբանական մշակույթ, ընդհանուր համակարգման չի ենթարկվել: Հասարակական արհավիրքները, սոցիալական պայթյունները օրինաչափորեն ուղեկցվում են ցնցումներով, որոնք արտահայտություն են գտնում ազգահոգեբանական մտածողության և պատկերացումների մեջ:

Տարիների ընթացքում՝ տակավին աղետից առաջ, գրառել ենք բազմաժանր նյութ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել և կազմել Շիրակի հարուստ բանահյուսության ժողովածու, որը կներկայացներ էթնիկ շրջանի բանահյուսական հանգամանալի պատկերը:

Ուսումնասիրության մեջ բանահյուսական և ազգագրական նյութերը ներկայացրել ենք նախապատերազմյան և ետպատերազմյան ժամանակային կտրվածքներով, տարբերակային դրսևորումների քննությունը կատարել ենք համեմատական մեթոդի կիրառմամբ՝ ընդգծելով նյութի կրած տարաբնույթ փոփոխությունները ազգային հոգեբանության հայեցակարգով:

Նյութի համակարգման ընթացքում հաշվառել ենք այն կրողների անհատական-տիպաբանական առանձնահատկությունները, հոգեվիճակը, արժեքային կողմնորոշումները, պատմամշակութային զարգացվածության մակարդակը և այլ չափորոշիչներ:

Հավաքված նյութերի բազմաժանրության պատկերը ամբողջական է դառնում շնորհիվ կայուն սկզբունքի, որն է՝ կորստից փրկել բոլոր ժանրերի ստեղծագործությունները: Նյութերը քննելիս պարզել ենք, որ առկա է ժանրերի քանակային անհամամասնություն: Վերջինս բխում է բանահյուսական որոշ տեսակների՝ առած-ասացվածքի, դարձվածքների, բանաձևային բանահյուսության նմուշների առավել կենսունակ կամ կենցաղավարող բնույթով:

Շիրակի արդի բանահյուսության համակարգման ուրվապատկերը ըստ ժանրային առանձնահատկությունների այսպիսին է.

1. *Վիպական բանահյուսություն (ավանդույթներ, ավանդական և տեղական զրույցներ, հեքիաթներ):*
2. *Քնարական բանահյուսություն (ժողովրդական խաղիկներ, բանաձևային բանահյուսության նմուշներ, քաղաքային երգեր, սոցիալական խմբերի երգեր, գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրություններ, առածաբանություն և դարձվածաբանություն):*
3. *Ծիսական բանահյուսություն, ընտանեկան ծիսական երգեր, նմուշներ.*

- *հարսանիք, հարսանեկան արարողության հիմնական պահեր, յուրաքանչյուր պահի համար կատարվող բանահյուսական ստեղծագործություններ, բարեմաղթության բանաձևեր,*
- *թաղման արարողություններ, ողբեր և ողբերգեր, սգերգերի տիպեր, հորինվածքներ, հանպատրաստից հորինումներ, արտածիսական երգեր,*
- *հասարակական կենցաղին առնչվող բանահյուսական նմուշներ, ժողովրդական տոների կապը տարեշրջանի ծիսախորհրդի և կենցաղի հետ:*

Շիրակի արդի բանահյուսությունը, ավանդական առանձնահատկություններով հանդերձ, ապրում է ներքին ինտենսիվ շերտավորման գործընթաց, որն ընթանում է տարածքային փոփոխակների փոխներգործությամբ: Արդի բանահյուսության մեջ առկա է ավանդական կայուն մոդել, շերտավորումն ընթանում է նոր մոտիվի հավելումով կամ տեղայնացման ճանապարհով, այսինքն՝ ձևավորվում է բանահյուսական նմուշի նոր որակ՝ պահպանելով ավանդականի հատկանիշները:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀԱՍԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ (ՀԱՒ)

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ - ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

1. Տասնամյակներ տևած հայրենադարձության բոլոր փուլերում Շիրակն իր ոստանով ներգաղթող հայերի բնակության հիմնական վայրերից էր:

Հայտնի է, որ հայրենադարձությունը կազմակերպվեց ու իրականացվեց երեք փուլով. առաջին փուլն ընդգրկում էր 1921-1936թթ., երկրորդը՝ 1946-1949թթ., երրորդը՝1962-1982թթ: Երկրորդ փուլում ներգաղթն իր ծավալներով նախադեպը չուներ և ընդունված է անվանել «Մեծ հայրենադարձություն»: Ուշտի և կարևոր է նշել, որ այդ ժամանակահատվածում ավելի շատ հայեր ներգաղթեցին (գրեթե 90 հազ.մարդ), քան մյուս երկու փուլում միասին վերցրած (շուրջ 80հազ. մարդ):Հայրենադարձները տեղաբաշխվում էին ըստ նախօրոք մշակված ծրագրի:

Լենինականը, որպես հանրապետության երկրորդ քաղաք, Երևանին գրեթե հավասար, կիսում էր ներգաղթողների տեղաբաշխման ծանրաբեռնվածությունը, քանի որ 1946-1949թթ. հայրենադարձների գերակշռող մեծամասնությունը, լինելով քաղաքաբնակ, հրաժարվում էր մեկնել գյուղական շրջաններ ու ամեն կերպ ձգտում էր տեղավորվել մեծ քաղաքներում:

2. Կազմակերպված ներգաղթը սկիզբ առավ 1921թ. Խորհրդային Հայաստանի կառավարության ջանքերով: Սակայն նախքան Հայաստանի կառավարության կողմից հայրենադարձության փուլային ծրագրերին անցնելը, բազմաթիվ հայ ընտանիքներ արդեն բռնել էին ներգաղթի ուղին՝ 1914թ. վերջերին Կարսից Ալեքսանդրապոլ ու Շիրակի գյուղեր գաղթեց 100 ընտանիք կամ 587 մարդ: Քաղաքում հաստատվեցին նաև Սարիղամիշից, Կաղզվանից, Արդահանից, Արզվինից, Բաքումից գաղթած հայեր: Ընդհանուր առմամբ, 1914թ. վերջերին Ալեքսանդրապոլում ապրում էր շուրջ 3000 գաղթական, որից 2400-ը՝ հայ, իսկ 600-ը՝ հույն:

1915թ. սկզբներին Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից քաղաքում հաստատվեց 360 հայ, իսկ 1916-1919թթ. Ալեքսանդրապոլի գավառում տեղավորվել էր ավելի քան 34 հազ.հայ: Այդ տարիներին արևմտահայերի ներգաղթն Արևելահայաստան, ըստ էության գաղթ էր, քանի որ կոտորածից խուսափելով՝ նահանջող ռուսական բանակի հետ, կամովին լքում էին իրենց բնօրրանը կամ հիմնականում բռնի տեղահանության էին ենթարկվում: 1921թ-ից գաղթական արևմտահայերին միացան նաև Կ.Պոլսից, Բալկանյան և Մերձավոր Արևելքի

երկրներից հայրենադարձվածները, որոնց տեղաբաշխման ու տեղավորման խնդիրները գրեթե անլուծելի էին Հայաստանի սոցիալ-տնտեսական սուղ հնարավորությունների պայմաններում:

1921թ. վերջերին Մերձավոր Արևելքի երկրներից գաղթած 3000 հայերի մի զգալի մասը բնակեցվեց Ալեքսանդրապոլում, իսկ 1924-1925թթ.Կ. Պոլսից, Մերձավոր Արևելքից և Հունաստանից գաղթած 3 հազարից ավելի հայեր հաստատվեցին Երևան և Լենինական քաղաքներում: Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից 1926-1927թթ. Շիրակում հաստատվեց շուրջ 13810 հայրենադարձ: Մինչև Երկրորդ աշխարհամարտը, ներգաղթը շարունակվում էր, սակայն այն չուներ նախորդ շրջանի ներհոսքի տեմպերը և դադարեց պատերազմի տարիներին: Այն նոր թափ ստացավ պատերազմից անմիջապես հետո:

3.1946-1948թթ. Մերձավոր Արևելքից, Եվրոպայից, ԱՄՆ-ից, մասամբ նաև Չինաստանից և այլ երկրներից (թվով 15 երկիր), Հայաստան ներգաղթեց շուրջ 100 հազ. մարդ, որոնք տեղաբաշխվեցին հանրապետության քաղաքներում ու գյուղերում: Այս շրջանում գաղթականների համար կառուցվեց 3700 տուն:

1946թ. օգոստոսին ռումինահայերի առաջին քարավանը՝ թվով 1742 մարդ, հաստատվեց Երևան և Լենինական քաղաքներում: Նույն թվականին Բուլղարիայից ժամանած 4383 գաղթականների մի մասը ևս հանգրվանեց Լենինականում: Ներգաղթը շարունակվեց մինչև 20-րդ դ. 80-ականները: Հետաքրքիր է, որ հայրենադարձության երրորդ փուլում, միայն Լենինական քաղաքում հաստատվեց 1278 ընտանիք կամ 5935 մարդ:

4. Հայրենադարձների մի մասը որակյալ արհեստավորներ ու մտավորականներ էին, որոնք տեղավորվեցին քաղաքի կենտրոնում, իսկ արվարձաններում հաստատվեց Միրիայից, Իրանից, Իրաքից գաղթած գյուղական բնակչությունը, որտեղ հնարավորություն կար զբաղվելու երկրագործությամբ:

Հայրենադարձների զգալի մասը (81,6%) բնակեցվել է հանրապետության քսան՝ գլխավորապես մեծ քաղաքներում: Ամենից շատ տեղավորվել են Լենինականում՝ հայրենադարձների ընդհանուր թվի գրեթե 20 տոկոսը:

5. Հայրենադարձների տեղաբաշխման, տեղավորման, անհրաժեշտ պայմանների ապահովման, հարմարվողականության (ադապտացիա) և սոցիալական ու տնտեսական այլ հիմնախնդիրների լուծման ընթացքում կային զգալի դժվարություններ: Դրանք առաջին հերթին առնչվում էին Լենինականում տեղաբաշխված հայրենադարձների և տեղացիների, ինչպես նաև տարբեր ժամանակներում այստեղ հաստատված բնակչության ներէթնիկ փոխհարաբերությունների որոշակի առանձնահատկությունների հետ: Հստակորեն տարբերակվում էին գաղթական (Արևմտահայաստանից), ներգաղթած (արտերկրից) և տեղացի հայեր, որոնք ձևավորել էին համապատասխան ներէթնիկ խմբեր:

Սրանց կենցաղա-մշակութային փոխներթափանցմանը խոչընդոտում էին լեզվական (հիմնականում՝ բարբառային),սուբէթնիկ-հոգեբանական,ինչպես նաև մտածելակերպի և վարքագծի տարբերություններն ու անհամատեղելիությունը:

ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (ՀԱԻ)

ՉՀԻՇԵԼ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ
(հուշարձանամարտի ազ□ա□ությունը)

Հուշարձանը տեսակայնացված հիշողության թանձրուկ է մեր մոռացության աշխարհում: Այն կոչված է հաստատելու հանգուցային իրադարձությունները ու հերոսներին, նույն թվում՝ և օտարամուտ, որոնք բռնատիրության պայմաններում կոչված են պարտադրված հիշողություն ու արժեքներ նշանաբանելու: Պատահական չէ, որ հուշարձանի տեղադրումը կամ տապալումը հաճախ կարող է պատմական փոփոխությունների առաջին (երբեմն միակ) տեսանելի նշանը հանդիսանալ (օրինակ, հնագիտական հուշարձաններում): Ուշագրավ է, որ 1988թ. ավերիչ երկրաշարժի երկրորդ օրը ես մի ասեկոս գրանցեցի, որի համաձայն Լենինականի Լենինի արձանն իբրև թե վայր է ընկել պատվանդանից ստորերկրյա ցնցումների հետևանքով, սակայն այն իբրև թե շուտափույթ վերադարձրել էին «գահին», որպեսզի ոչ ոք չհասցներ նկատել խորհրդային կայսրության գլխավոր խորհրդանիշի տապալումը: Իսկ երբ շուտով արձանը ներփակվեց ժամանակավոր շինությամբ, տեղացիները սրամտում էին, թե Լենինին «արտահերթ դոմիկ» տրամադրեցին:

Ներկա զեկուցումում քննարկվելու է հուշարձանի տապալման ազգագրությունը խորհրդային իշխանության փլուզման պայմաններում՝ Հայաստանի օրինակով, սակայն ավելի ընդարձակ՝ ետխորհրդային տարածքի և որոշ միջազգային պատմական զուգահեռների համատեքստում: Դիտարկվելու են հետևյալ հարցերը.

- *Հակասամբողջատիրական և հակագաղութատիրական պայքար հուշարձանների դեմ:*
- *Հուշարձանամարտը որպես վիշապամարտ. Լենինի բրոնզե արձանը «միջնադարյան» խարույկ է բարձրանում (Թբիլիսի, 1990թ.): Ձերժինսկու հուշարձանը միանում է օգոստոսյան խռովարարներին (Մոսկվա, 1991թ.):*
- *Կառուցվածքային հուշարձանամարտ. ազգային թանգարանները «հաղթում են» Լենինի արձանին (Երևան, 1991թ.):*
- *Հուշարձանամարտի ծիսակարգը՝ միտումնավոր (Կիև, 1988թ.), հանպատրաստից գիտակցված (Ուլան- Բաթոր, 1960-ականների սկիզբ) և չգիտակցված (Երևան, 1991թ.):*
- *Միանվագ քաղաքական հուշարձանամարտը և պարբերական ավանդական ծիսական խրտվիլակամարտը:*
- *Հուշարձանամարտը որպես հակոտնյայի յուրացում. քրիստոնեական և մուսուլմանական հուշարձանների այլակրոն նախաձևերը:*
- *Հուշարձանի «էվոլյուցիան». Լենինի արձանի փոխակերպումը գաղափարախոսական առաջնորդից՝ ազգակից նախնու, նախագահի հպատակի և Բուդդայի երկրպագուի (Էլիստա, 1998թ.)*

- *Հուշարձանամարտի գեղաբանական առումները. Վազգեն Թադևոսյան-Պահլավունու գեղաբանահիմաստասիրական «Մետապոլիսը» և Փրկչի եկեղեցու վերակառուցման «վիրտուալ» նախագիծը (Գյումրի):*
- *Հուշարձանամարտի խրատական առումները. Վ. Կոմարի և Ա. Մելամիդի՝ Լենինի դամբարանի գաղափարախոսական-կոնցեպտուալ ձևափոխման նախագծերը, Կ.Վոդիչկոյի՝ հուշարձանների «խմբագրումը» էկրանավորման միջոցով:*
- *Տապալված արձանների ճակատագիրը. ամբողջատիրության արձանագարդ թանգարանի գաղափարը և իրագործված տարբերակները:*
- *Հիշել դավաճաններին. պատմության դասը հուշարձանի լեզվով (Հանչժոու, 12-րդ. դ.):*
- *Անարձան պատվանդանի առասպելաբանությունը. Լենինի արձանի ենթադրյալ փոխարինողները (Երևան), անպատվանդան դարաբաղցի Տատիկն ու Պապիկը, Միջին Ասիան նվաճող գեներալ Կաուֆմանից դեպի Կարլ Մարքսը և Թամերլանը (Ֆրունզե, 1913-1933թթ.), խորհրդային ժողովուրդների հորը փոխարինած Մայր Հայաստանը:*
- *Հուշարձանի մահարձանային ակունքները. նախնադարյան նախահուշարձան- մահարձանից մինչև Եղեռնի հուշահամալիրը:*
- *Հուշարձանը որպես վերածննդի գաղափար. «ծիլ տվող» նախազոհը, «ծաղկած» խաչքարը և Եղեռնի հուշահամալիրը:*

ԼԻԼՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԹԱՄԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ (ՀԱԻ)

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

(ըստ 2002թ. սոցիոլոգիական հարցումների)

1. Վերջին տարիներին, Հայաստանի հասարակական-քաղաքական վերափոխումները, տնտեսական նոր հարաբերությունների ձևավորումը, ինչպես նաև սոցիալական շերտավորման հետագա խորացումն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում բնակչության գերակշռող մեծամասնության կենսապահովման նվազագույն պահանջմունքների բավարարման վրա: Աշխատավարձերի, թոշակների և նպաստների չնչին չափերը դրդել են բնակչությանը, որպեսզի նա իր հիմնական ուշադրությունն ու ժամանակն ուղղի օրվա սննդի հայթայթման խնդրին:

2002թ. փետրվար-մարտ ամիսներին Գյումրի քաղաքում անց է կացվել սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել բնակչության առողջական վիճակը, մատուցվող առողջապահական ծառայությունների քանակն ու որակը, դրանց մատչելիությունը և գնահատման չափանիշները: Նկատի ունենալով ներկայացված խնդրի ուսումնասիրման կարևորությունը, հաշվի ենք առել նաև հարցվողների սննդի, դեղորայքի, ջրի, բնակարանային և սանիտարահիգենիկ պայմանների նկատմամբ ունեցած բավարարվածության չափը:

2. Այսօր Գյումրի քաղաքի բնակչության մեծ մասի ցածր կենսամակարդակը, սննդամթերքի անհրաժեշտ տեսականու ոչ բավարար ապահովվածութ-

յունը, սանիտարահիգենիկ նվազագույն նորմերին չհամապատասխանող կենցաղային պայմանները, բարոյահոգեբանական լարվածությունը և այլ ազդակներ, իրենց անմիջական ազդեցությունն են թողել հիվանդների քանակի ավելացման վրա: Հարցվողների 86,1%-ը նշել է, որ առողջական վիճակի վատթարացման ժամանակ ընտանիքի անդամները բժշկի չեն դիմել, իսկ որպես պատճառ նշել են տնտեսական ծանր պայմանները, անհրաժեշտ ֆինանսների բացակայությունը և սպասարկման բարձր գները: Նույնիսկ պետական անվճար բուժսպասարկման դեպքում հիվանդը պարտադրված է որոշակի վճարումներ կատարել բուժման համար:

Ըստ հարցման արդյունքների, բժշկական ծառայություններից օգտվելու բնակչության հնարավորությունները կապված են ընտանիքի սոցիալական պաշտպանվածության աստիճանից:Հարցվողների գերակշռող մեծամասնությունը (շուրջ 67,3%) հիվանդանալու դեպքում դիմում է ծանոթ բժիշկներին կամ ժողովրդական բժշկության հմտություններին, օգնություն է ակնկալում Հայաստանում և արտերկրում ապրող բարեկամ-ազգականներից, հումանիտար, բարեգործական և հասարակական կազմակերպություններից: Իսկ առողջության պահպանման պետական և մասնավոր ծառայություններից օգտվողների քանակը բավականին ցածր է (35,8%):

3. Բնակչության առողջության պահպանման առաջնային գործոններից են սննդի, ջրի, բնակարանային և սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմանների առկայությունը: Հարցվողների զգալի մասը(89%), ընդհանուր առմամբ, բավարարված չէ կամ մասամբ է բավարարված իրենց ընտանիքում օգտագործած սննդամթերքի քանակից, որակից, տեսականուց և առանձնապես դժգոհ է գնից՝ անվճարունակության պատճառով(96,8%): Նման ընտանիքների համար համեմատաբար ծանր են մանկական սննդի ձեռք բերման հնարավորությունները (97,4%):

Հիվանդությունների աճին նպաստող գործոններից են նաև սանիտարահիգենիկ նվազագույն նորմերին չհամապատասխանող բնակարանների ընդհանուր և կենցաղային վատթար պայմանները, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի բնակչության կողմից օգտագործվող խմելու ջրի քանակը և որակը: Հարցվողների 78,7%-ը բավարարված չէ ջրի մատակարարումից, որի քանակն ու որակը չի ապահովում նրանց անձնական և կենցաղային հիգիենայի տարրական կանոնների պահպանումը, ինչը առողջական և սանիտարահիգենիկ լուրջ խնդիրների պատճառ է հանդիսանում:

Բնակարանային պայմաններից մասամբ են բավարարված հարցվողների 39,1%-ը, իսկ բավարարված չեն՝ 47%-ը (հարցվողների 16,2%-ը ապրում է տնակային պայմաններում): Բնակարանների մեծ մասը ենթակա է վերանորոգման, ճմռան ամիսներին տաքացնելու և սանիտարահիգենիկ պայմանների բարելավման հետ կապված լուրջ դժվարություններ կան:

4. Կատարված հետազոտության արդյունքների համադրումն ու վերլուծությունը հաստատում է, որ հարցվողների մեծ մասը ֆինանսական սուղ միջոցների պատճառով բժշկական ծառայություններից օգտվելու սահմանափակ հնարավորություններ ունեն(69,1%):

Ներկայացված հիմնախնդիրները պետական, հասարակական ներդրման և բարոյական աջակցության մեծ կարիք ունեն: Այստեղ կարևորվում է

նաև սոցիալական և առողջության պահպանման ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների դերի հետագա ընդլայնումը, իսկ համագործակցությունը հասարակության խոցելի խմբերի հիմնահարցերով զբաղվող պետական կառույցների հետ կարող է դիտարկվել որպես սոցիալական լարվածության մեղմացման տարբերակ:

ԱՆԱՀԻՏ ՎԱԼԵՍՅԱՆ (ԳՊՍԻ)

ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Տարածաշրջանում երկրի բնակչության կենսամակարդակի շուրջ պատկերացում են ստեղծում կյանքի որակի ցուցանիշները:

Կյանքի որակը հասարակության բարեկեցիկությունն է բնական, տնտեսական, սոցիալական-քաղաքական ոլորտներում: Այն սինթեզված ցուցանիշ է և պահանջվում է ուշադրություն դարձնել հետևյալ բնութագրիչների վրա:

- Սոց – տնտեսական բաղադրիչ. *մեկ շնչին բաժին ընկնող նյութական բարիքներ, բնակելի տարածության, աշխատանքային ռեսուրսների բաժին և այլն:*
- Քաղաքական բաղադրիչ. *ապահովվածությունը տեղեկատվության աղբյուրներով, իրավապահական մարմիններում աշխատողների թիվը, հանցագործության մակարդակը, մեկ շնչի հաշվով կառավարական ծախսերը և այլն:*
- Առողջապահական բաղադրիչ. *բժիշկների թիվ, հիվանդանոցային մահճակալների քանակը, հիվանդացության աստիճանը, բուժսպասարկմանը տրամադրվող ծախսերը և այլն:*
- Կրթամշակութային բաղադրիչ. *մշակութային օբյեկտներով ապահովվածությունը, հաճախումների մակարդակը, կրթությանը տրամադրված ծախսերը, մեկ շնչի հաշվով դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը, բաժինը և այլն:*
- Էկոլոգիական բաղադրիչ. *կլիմայական պայմանների հարմարավետության աստիճանը, եղանակային պայմանները՝ օդային, ջրային ավազանների վիճակը, էնդեմիկ հիվանդությունների տարածման հնարավորությունները:*

Վերը նշվածներից անդրադառնանք միայն առողջապահության բաղադրիչին:

Գյումրու բնակչությունը լիարժեք առողջ չէ, այսինքն՝ չի դիտվում մարդու ֆիզիկական, հոգեկան ու սոցիալական վիճակների բարեկեցիկություն: Դրա պատճառները բազմաթիվ են. վերլուծենք դրանցից մի քանիսը:

Շիրակի մարզում բժիշկների թիվը 589 է, միայն Գյումրիում՝ 409: 1999թ. համեմատությամբ բժիշկների թիվը նվազել է 41-ով, իսկ 10.000 բնակչի հաշվով այդ ցուցանիշը կազմում է 16,3, որը երկու անգամ փոքր է հանրապետական միջինից: Միջին բուժանձնակազմի թիվը 2001թ. 1860 է 1999թ.՝ 2222-ի փոխարեն:

Պետության կողմից 1 անձի բուժսպասարկման համար տրամադրվում է 1376 դրամ, այն դեպքում, երբ խորհրդատվությունը բժիշկի մոտ 400-600 դրամ է, իսկ գերձայնային հետազոտությունների արժեքը 4000 դրամից պակաս չէ:

Բնակչության առողջական բարվոք վիճակի մասին խաբուսիկ տպավորություն է ստեղծում հիվանդացության աստիճանը: 1996թ. համեմատությամբ հաճախումների թիվը 2000թ. կրճատվել է մոտավորապես 2 անգամ (40.959 մարդ 1996թ. և 21.266 մարդ 2000թ.): Բայց դա ուրախանալու տեղիք չի կարող տալ, քանի որ պայմանավորված է բնակչության վճարունակ չլինելով: Մարդիկ բժշկի դիմում են արդեն ծայրահեղ վիճակում, երբ հիվանդությունը առավել խորացել ու բարդ բնույթ է կրում:

Կա նաև անվճար բուժսպասարկման տարբերակը, բայց դրանից կարող են օգտվել միայն խիստ անապահով սոցիալական խմբերը:

Բնակչության առողջական վիճակի վրա ազդող սոցիալ- տնտեսական առաջնային գործոններից են՝ բնակչության մեծ գործազրկությունը (աշխատանքային տարիքի 26.800 մարդ), ընտանեկան փոքրիկ զամբյուղը, հոգեբանական ոչ առույգ վիճակը, այսինքն՝ ծանր ստրեսները, ինչպես նաև առօրյա ստրեսները, որ մարդն ապրում է՝ սնունդ չլինելու, միջոցներ չունենալու պատճառով:

Բժշկաաշխարհագրական վերլուծությունից պարզվում է, որ քաղաքում 2002թ. տիրապետող են դարձել սիրտ-անոթային՝ (4.162), ուռուցքային՝ (1.720), նյարդային համակարգի և այլ հիվանդություններ:

Մեծացել է մահացությունների թիվը սրտի իշեմիկ հիվանդություններից. 1985թ. համեմատությամբ մահացության տոկոսը մեծացել է 2 անգամ (4.2%--ից 9.78%):

Մտահոգվելու տեղիք են տալիս վարակիչ մանկաբուծական հիվանդությունների աճը, որը գերազանցապես բնորոշ է թույլ զարգացած երկրներին:

ՆԱԶԵԼԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ (ՀՊՄՀ)

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ 1988-1998թթ.

Բնակչության թվաքանակի շարժընթացի առանձնահատկությունների վերլուծության աղբյուրները բազմազան են, սակայն առավել լիարժեք են համարվում պաշտոնական վիճակագրական տվյալները:

1. 2001թ. մարդահամարի արդյունքների բացակայության պայմաններում Աղետի գոտու բնակչության թվաքանակն ու դրա կառուցվածքը ներկայացնող ամբողջական տվյալները վերաբերում են 1989թ., երբ անցկացվեց ԽՍՀՄ վերջին մարդահամարը:

Չնայած առկա բարդություններին, հրապարակի վրա եղած տվյալները, մասնավորապես, Ազգային վիճակագրական ծառայության կողմից պարբերաբար հրատարակվող վիճակագրական տարաբնույթ ժողովածուները հնարավորություն են ընձեռում արձանագրել, որ Աղետի գոտու բնակչության թվաքանակը կրել է որոշակի փոփոխություններ, որոնցում արտացոլվել են նաև 1988թ. «Սպիտակի» երկրաշարժի հետևանքով Աղետի գոտու բնակչու-

բյան թվաքանակի անկումը և վերջինիս ազդեցությունը հետագա տարիներին բնակչության թվաքանակի փոփոխության վրա:

1989թ. հունվարի 1-ի դրությամբ Աղետի գոտու բնակչության թվաքանակը կազմել է 906.700 մարդ, այդ թվում՝ Շիրակի մարզում 329200, Լոռու մարզում՝ 359000, Արագածոտնի մարզում 73700 (առանց Աշտարակի շրջանի), Տավուշի մարզում՝ 144800 մարդ: Նախորդ տարվա համեմատությամբ այն նվազել է 5.37%-ով կամ 51500 մարդով, ինչը պայմանավորված է երկրաշարժի անմիջական հետևանքներով և դրանից ածանցվող միգրացիաներով:

1990թ. Աղետի գոտու բնակչության թվաքանակը սկսել է աճել և նախաերկրաշարժյան ցուցանիշին մոտեցել է 1992թ. (953400 մարդ): Աճը շարունակվել է նաև հետագա տարիներին: 1998թ. բնակչության թիվը հասել է 999300 մարդու: Այդ տարիներին բնակչության միջին բացարձակ հավելաճը կազմել է 9700 մարդ, աճի միջին տեմպը՝ 1.04:

2. Աղետի գոտում բնակչության թվաքանակի շարժընթացը կապված է եղել ինչպես հանրապետական գործոնների, այնպես էլ երկրաշարժի էպիկենտրոնային շրջանից ունեցած հեռավորության և բնակավայրերի ավերվածության աստիճանի հետ: 1989թ. Աղետի գոտում բնակչության թվաքանակի մեծ անկում արձանագրվել է Շիրակի մարզում, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 35100 մարդով կամ 9.63%-ով, (Գյումրի քաղաքում՝ 28600 մարդով կամ 12.4%-ով) և Լոռու մարզում՝ 24500 մարդով կամ 6.4%-ով (Սպիտակի շրջանում՝ 11600 մարդով կամ 24.7%-ով): Նախորդ տարվա համեմատ 1989թ. բնակչության թվաքանակի աճ նկատվել է Արագածոտնի և Տավուշի մարզերում:

1989-1998թթ. Աղետի գոտու առանձին վարչական միավորների բնակչության բացարձակ հավելաճը եղել է հետևյալը. Շիրակի մարզ՝ 31600 մարդ կամ 9.6%, Լոռու մարզ՝ 34800 մարդ կամ 9.7%, Արագածոտնի մարզ՝ 14900 մարդ կամ 20.2%, Տավուշի մարզ՝ 11300 մարդ կամ 7.8 %: Բնակչության միջին բացարձակ հավելաճը համապատասխանաբար կազմել է 3500, 3900, 1700, 1300 մարդ:

3. Բնակչության թվաքանակի շարժընթացը արտացոլում է բնական և մեխանիկական աճի առանձնահատկությունները: Աղետի գոտում 1988թ բնակչության բացարձակ բնական աճը կազմել է 812 մարդ: 1988-1991թթ Աղետի գոտու բացարձակ բնական աճի ցուցանիշն աճում է, 1991թ. հասնելով 15837 մարդու, որը պայմանավորված էր բարձր ծնելիությամբ: Այս տարիներին Աղետի գոտում դիտվում էր երկրաշարժի պատճառած մարդկային կորուստները վերականգնելու միտումը: 1991թ-ից Աղետի գոտու բնակչության բացարձակ բնական աճը նվազում է և 1997թ հասնում է 5207 մարդու՝ կազմելով 1991թ. համապատասխան ցուցանիշի 32.88%-ը: 1991-1997թթ. բնակչության բացարձակ բնական աճի նվազման հիմնական պատճառը ծնելիության նվազումն է, 1997թ. ծնվածների թիվը (11787) կազմել է 1991թ. ծնվածների (22141) 53.24%-ը: 1991-1997թթ. մահացության ցուցանիշի շարժընթացն ունեցել է հետևյալ պատկերը. 1991-1993 թթ. այն աճում է 994-ով կամ 15.77 %-ով: 1994թ. մահացությունը նվազում է: 1995-1996թթ կրկին աճում է՝ 1994թ. համապատասխան ցուցանիշը գերազանցելով 11.09 %-ով:

Այսպիսով՝ «Սպիտակի» երկրաշարժը, տարածաշրջանային բախումները, քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները և բազմաթիվ այլ գործոններ, որոնց դիտարկումը մեկ հրապարակման շրջանակներում հնարավոր չէ, իրենց կնիքն են դրել Աղետի գոտու բնակչության թվաքանակի շարժընթացի, վերարտադրության ցուցանիշների փոփոխության վրա: Դրանց համալիր գիտական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի Աղետի գոտու սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափությունների բացահայտման տեսանկյունից:

ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ (ՇՀՀԿ)

ԺԱՄԱՆԱԿԻ ԳԻԾԸ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԱՀԻՆ

Մարդու հոգեկարգավորման գործընթացն ապահովող կարևոր գործոններից է ժամանակը: Այս ոլորտում անձի հոգեբանական ժամանակն ունի երեք չափում՝ անցյալ, ներկա և ապագա ուղղվածությամբ: Ժամանակը մենք քննում ենք այն ընկալողի հոգեբանական առանձնահատկությունների հայեցակետով, տվյալ դեպքում՝ ժամանակի ընկալումը աղետի պահին, այսինքն՝ աղետն իբրև ժամանակային սահմանագիծ ինչպես է ընկալվում անձի կողմից: Սահմանային իրավիճակներում մարդու կյանքի ընթացքը, բեկված մեծ աղետով, պայմանավորում է ժամանակի հոգեբանական ընկալման երկփեղկվածություն:

Հոգեկարգավորման գործընթացում ժամանակի գիծ հասկացությունը դիտարկում ենք նախաաղետյան և ետաղետյան չափումներով:

Ստրեսների պահին ժամանակի ընկալումը դրսևորվում է որոշակի մասնահատկություններով: Ժողովրդագրական հարցումներից և բնակչության՝ աղետի մասին ստացած տպավորություններից ու վերապատմումներից պարզվում է, որ անձը բուն աղետի պահը զգում է ժամանակային լայն ընդգրկման մեջ՝ անցյալի, ներկայի և ապագայի չափումների խախտումով: Ստրեսի մասին շարունակական վերապատմումները թույլ են տալիս ենթադրել, որ աֆեկտիվ հոգեվիճակում ժամանակի գիծը անվերջանալի է թվում: Ճգնաժամի պահին այն կարծես կանգ է առնում ենթագիտակցական մակարդակում, անձը սևեռվում է ստրեսogեն ժամանակային փուլի վրա: Վերբալ հաղորդակցման ընթացքում նա շարունակաբար անդրադառնում է իր կյանքի այդ ժամանակահատվածին՝ հաճախ դրսևորելով ժամանակի ընկալման հոգեբանական նահանջ (ռեգրեսիա): Երբեմն էլ անսովոր ուժի ստրեսները կարող են մարդու մտապատկերների դաշտում ժամանակի ընկալումը հանգեցնել առասպելականացման:

Ստրեսների պահին հաճախ տեղի է ունենում հոգևոր ուժերի համակենտրոնացում: Մարդը նախապատրաստվում է հարմարվողական վիճակի՝ աշխատելով ժխտել իրական ժամանակը:

Ժամանակի գիծը մտովի տանելով դեպի անցյալ՝ հետահայացությամբ (ռետրո սպեկցիայի միջոցով) անձը ենթագիտակցությունից արտամղում է անցանկալի ժամանակը: Արտամղված տպավորություններն իրականում չեն մոռացվում: Բոլոր դեպքերում մարդու հուզազգացմունքային վիճակը, տարիքային, տիպաբանական առանձնահատկությունները կարող են ազդել ժամա-

նակի գնահատման վրա: Կարևորն այն է, թե ինչպես մարդուն դուրս բերել տվյալ ժամանակին սևեռված մնալու զգացողությունից, ինչպես մոդելավորել այն իրադրությունները, որոնցում կառաջանան տիպական զգայություններ և անձին բավարարվածություն պատճառող վիճակներ:

Հոգեկարգավորման գործընթացում կարևորվում է մարդու ապրած կյանքի բովանդակության, մանրամասների ու էական պահերի վերլուծումը, որը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում ունենալ նրա հոգեկան աշխարհի մասին: Մարդու կյանքի ամբողջականությունը և ապրած ժամանակի անընդհատականությունը օգնում են առաջադրելու հաղորդակցման այնպիսի մոդելներ, որոնք նրան դուրս են բերում անտարբերության և անհանգստության ոլորտից:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրահանգել, որ մեր նպատակամիտումն է հոգեկարգավորման գործընթացում աղետյալ մարդուն դուրս բերել գերճնշված իրավիճակից՝ առաջադրելով նոր և դրական մոտիվներ:

Ժամանակը ճիշտ գնահատելու ընդունակությունը նպաստում է մարդու վարքի ինքնակարգավորման ու արդյունավետության խթանմանը:

ՋԵՄՄԱ ԲԱՌՆԱՍՅԱՆ (ԼԻ)

ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անտեսանելի, անշոշափելի, բայց մեր կամքից անկախ գոյություն ունեցող ԺԱՄԱՆԱԿԸ մարդու կողմից ճանաչողության օբյեկտ է դարձել դեռ վաղնջական ժամանակներում: Այն չափելը, միանգամայն գործնական նկատառումներով նրա տարբեր հատվածներին անուններ տալը ճանաչողական հսկայական արժեք է ձեռք բերել և դարձել մեր ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության յուրատեսակ ցուցանիշ:

Հայերենի բարբառներում կան քերականական միջոցներ ժամանակի հետ կապ չունեցող երևույթներից անգամ ժամանականիշ բառեր ու կապակցություններ ձևավորելու համար: Բառակազմական մակարդակում դրանց բնորոշ է ածանցումներով, բառաբարդմամբ, քարացած քերականական ձևերով հանդես գալը: Մեր զեկուցման սահմաններում ներկայացնելով Կարնո բարբառի տարբեր խոսվածքներում առկա համապատասխան օրինակները՝ ժողովրդի լեզվամտածողության մեջ ժամանակն ամրակայելու ձևերն ու միջոցները քննության ենք առել հետևյալ կարգով.

1. Ժամանակի ամրակայումը՝ ըստ պատմական դեպքերի ու դեմքերի:

Ժամանակն առավել հաճախ ճանաչելի ու չափելի է դառնում ժողովրդի հիշողության մեջ անջնջելի հետք թողած նշանակալից իրադարձությունների, պատմական դեպքերի հետ կապելով: Մեր ժողովրդի պատմական ճակատագրի բերումով ճանաչելի, հասկանալի ժամանակահատված են մատնանշում

մեծ աղետների՝ կոտորածների, գաղթերի, տեղահանությունների հետ կապվող բառաձևերը: 1915թ. հայերի զանգվածային ջարդերն ու տեղահանությունները նոր ժամանականիշների գործառության առիթ դարձան, ինչպես՝ կոդորումին, փախէփախին, գախտին *և այլն: Չնայած 60-ամյա վաղեմությանը՝ մեր ժողովրդի համար դեռ թարմ է Երկրորդ աշխարհամարտի հուշը, որի մասին խոսելիս լրացուցիչ պարզաբանումների կարիք չկա, կարելի է ուղղակի ասել* պատէրազմին, կլոռվի տարին *և այլն: Ժողովրդի հիշողության մեջ անջնջելիորեն դրոշմված 1937 թվականը ներկայիս Շիրակի մարզի գյուղերի խոսվածքներում հիշատակվում է իբրև* բըռնէբըռնէի տարի՝ *այդ ինքնատիպ բառակապակցությամբ նկարագրական եղանակով բնորոշելով տվյալ ժամանակաշրջանը: Ժողովրդի մեջ ժամանականիշի արժեքով հիմա էլ կիրառելի են* Նիկօլի վախտվա, Նիկօլի թըվի *և նմանատիպ ձևերը՝ ցանկանալով ընդգծել որևէ բանի հին, հնաոճ լինելը: Բնականաբար, խոսքի նյութը կապվում է ռուսական վերջին կայսր Նիկոլայ II-ի անվան և ապրած ժամանակի հետ:*

2. Ժամանակի ամրակայում՝ ըստ բնական աղետների հիշատակության: *Բազմաթիվ տարերային աղետներ տեսած հայ ժողովրդի այս կամ այն հատվածի համար բավական երկար ժամանակ կարող է ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց ծառայել մեծ ավերածությունների պատճառ դարձած և մարդկային մի քանի սերնդի հիշողության մեջ անջնջելի հետք թողած ավերիչ երկրաշարժերի հիշատակությունը:Շիրակի գոտու բնակիչների խոսքում հատկապես զգալի է 1988թ. երկրաշարժի հետ ամեն երևույթ զուգորդելը՝* ժաշկին, ժաշկից հառաճ, ժաշկէն հէդէվ*: Հետաքրքիր է, որ մինչ այդ ավերիչ երկրաշարժը հիշյալ տարածքում համանման արտահայտությամբ միանգամայն այլ ժամանակաշրջանի՝ 20-րդ դարի սկզբի հետ էր կապվում խոսքը:*

Ժողովրդի հիշողության մեջ կարող են ամրակայվել մահաբեր այլ աղետներ, որոնց հիշատակությունը կարող է կոնկրետ թվական չհիշեցնել, այլ միայն՝ մոտավոր ճշտությամբ ժամանակահատված: Ինչպես հայտնի տարբեր բարբառներում, անպես էլ Շիրակի տարածքի գյուղերի խոսվածքներում կարգըտի տարի, սէլավի տարի, սօվի տարի, հածի նէղ տարի *և նմանատիպ այլ արտահայտություններ ժամանակային առումով կողմնորոշիչ դեր ունեն սահմանափակ տարածքի մարդկանց հաղորդակցության ընթացքում:*

3. Ժամանակի ամրակայում՝ ըստ երկրագործական աշխատանքների: *Ժամանակի ընթացքայնության մեջ որոշակիություն մտցնելիս ժողովրդի լեզվամտածողության մեջ առանցքային հենակետերի դեր է կատարում գյուղատնտեսական աշխատանքների պարբերականությունը: Վաղ մանկական հասակից մասնակից լինելով արկրագործական աշխատանքներին՝ գյուղացին գիտե, թե տարվա ո՞ր ժամանակահատվածը ո՞ր աշխատանքի հետ է առնչվում: Տվյալ տարածքին բնորոշ կենցաղակարգի, առտնին գործերի, դաշտավարական և անասնապահական աշխատանքների իրականացման ժամանակահատվածը ամրակայվում է ժողովրդի հիշողության մեջ և ժամանականիշ բառերի ու բառակապակցությունների արժեք ստանում, ինչպես՝* վարուցանքին, հացքաղին, կալօցին, կալուկուղին և *այլն: Մարդկանց ծնունդը, մեկնելու ժամանակը, մահը և նման այլ իրադարձությունների ժամանակը հիշվում է գյուղական աշխատանքների իրականացման ժամանակաշրջանի հետ զուգորդելով:*

4. Ժամանակի ամրակայում՝ ըստ առօրյա կենցաղակարգի: Ամենօրյա առտնին գործերը գրեթե միշտ նույն ժամին կատարելով՝ վաղնջական ժամանակներից ի վեր մարդիկ դրանց միջոցով կոպիտ մոտավորությամբ կարողացել են ժամանակի մեջ կողմնորոշվել:

Ժամանականիշ բառերն իրենց խորքում պարունակում են բառագիտական, ծագումնաբանական, իմաստաբանական, հնչյունաբանական տեղեկություններ, որոնցով բարբառագիտական փաստերից կարող են վերածել ազգագրության, հոգեբեզվաբանության, լեզվի պատմության և այլ գիտակարգերի համար էական փաստերի:

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ԼԻ)

«ՄԱՅՐ» ԵՎ «ՀԱՅՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԻՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Ազգակցական հարաբերություններ արտահայտող իմաստային թեմատիկ խումբը լեզվի այն գործում հատվածն է, որը ոչ թե կորցրել է իր ընդունակությունը, այլ, ընդհակառակը, հազարամյակների ընթացքում համալրվել ու հարստացել է նոր բառերով, Այս իմաստային թեմատիկ խմբում առանցքային տեղ են գրավում հայր *և* մայր *հասկացությունները: Բուն արյունակցական ազգակցական տերմիններից* հայր *և* մայր *հասկացությունները բավականաչափ բարդ ու խայտաբղետ պատկեր են ներկայացնում: Բացի հնդեվրոպական արմատներից, այստեղ հանդիպում են բառեր, որոնք մեր ժողովուրդը փոխառել է իր հարևան ժողովուրդների լեզուներից (պարսկերեն, վրացերեն, թուրքերեն, քրդերեն, ասորերեն, հունարեն և այլն): Որոշ բառերի ստուգաբանությունն առ այսօր չի մեկնված:*

Այս առումով հատկապես բարբառային նյութը մեզ հրամցնում է այնպիսի բառաձևեր, որոնք հին գրական հայերենում փաստված չեն, այնինչ բարբառներում անաղարտորեն պահպանել են հնդեվրոպական արմատական ձևերը:

ա) Կարնո բարբառում, որն ընդգրկում է ողջ Շիրակի դաշտը, Ջավախքը, տարբեր մարզերի որոշ բնակավայրեր, մայր *հասկացությունն ունի* մէր, ադե, անա, աբա (ապա), մարի, մար, մամ, *նաև բառային համապատասխանությունները:*

1. Մեր գրավոր հուշարձաններում պահպանված և առ այսօր գործածական հնդեվրոպական արմատը մայր*-ն է, որ Կարնո բարբառում գործառում է* մէր *(այ >է),մար (այ>ա) մարի (մայրիկ >այ >ա, կ-ի անկումով) տարբերակներով:*

Գյումրու, Բասենի, Կարսի խոսվածքներում առկա է մէր *հնչյունական տարբերակը, իսկ Ջավախքում (Ախալքալաք, Բոգդանովկա) ավելի գործածական է ուրիշ հնչյունական տարբերակը: Կոչականի ձևերն են՝*մարիկ, մարի, մամա, մա, մայրիգ*:*

2. Ապա *(աբա)՝ «*հայր*» իմաստով, Գ. Ջահուկյանը համարում է մանկական-փաղաքշական բնույթի հնաբանություն:*

*Կարծում ենք՝*աբա*-ն,* մայր *իմաստով ևս, նույն հնդեվրոպական արմատն է, պարզապես տեղի է ունեցել իմաստային տեղաշարժ, որ հաճախ է տեղի*

ունենում լեզվում, հատկապես «ծնող» իմաստով բառերի դեպքում: Աբա*-ն* մայր *հասկացության իմաստով գործածական է Ջավախքի խոսվածքներում (Ախալքալաքի Կարծախ, Ալաստան, Բեժանո գյուղեր), Ծալկայի շրջանի Ղզլքիլիսա գյուղում (ապա), ինչպես նաև Կարսի շրջանում (գ. Նախիջևան՝ աբէ, գ. Փալդրվան՝ աբա):*

3. Ադէ*. Ոմանք (Հ. Ասմանգուլյան) այն համարում են քրդական փոխառություն: Գ. Ջահուկյանը* ադէ*-ն համարում է բարբառային հնաբանություն՝ կապելով* *atta *հնդեվրոպական արմատի հետ: Շիրակի դաշտավայրում Մուշից և Ալաշկերտից գաղթածներ էլ կան. չի բացառվում, որ* ադէ*-ն այդ տարածքի բառը լինի, որը հետագայում գործածվել է նաև Կարնո բարբառով խոսող հանրույթներում:* Ադէ *բառաձևը փաստված է Կարսի Ծպնի, Բուլանուխ, Փալդրվան, Նախիջևան գյուղերում և, իհարկե, այն գյուղերում, որոնց բնակիչները նախկին մշեցիներ կամ ալաշկերտցիներ են (օրինակ՝ Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղ, Արթիկի Փանիկ, Փոքր Մանթաշ, Նոր Կյանք գյուղեր):*

4. Անա*. Այս բառաձևը* մայր *հասկացության բառային դրսևորում է գրանցվել Բասենի խոսվածքներում (Տադվերան, Գոմաձոր):*

բ) Կարնո բարբառում հայր *հասկացության բառազուգաբանություններն են* հայրիկ, հէր, ամի, պաբա, ափօ (ապօ), ապէր, ադա, տացու, պաբ, տադա *բառաձևերը:*

1. Կարնո բարբառի գրեթե բոլոր խոսվածքներում հայր *հասկացության դիմաց առկա է* հայր *բառաձևը, որը հանդիպում է* հար, հէր, հայրիգ, հարիգ *տարբերակներով:*

2. Պապ *բառը բարբառներում գործառում է երկու իմաստով:* Պապ *-ը «մեծ* հայր*» իմաստով Հր. Աճառյանը փոխառված է համարում հունարենից:* Պաբա *հնչյունական տարբերակով առկա է Գյումրիում, Ախալցխայում, Ծղալթիբայում և այլն, իսկ* պապա *հնչյունական տարբերակով գործածական է Ախալքալաքում (Բեժանո), Ախուրյանում (Գետք):*

3. Ապօ (ափօ) *և* ապէր *բառաձևերը ոմանք (Հր. Աճառյան, Հ. Ասմանգուլյան) բխեցնում են* եղբայր *բառից: Մենք կարծում ենք, որ* ապէր*-ը առնչություն ունի* եղբայր *բառի հետ, մինչդեռ* ապօ*-ն (ապա ձևից), ինչպես վերևում նշել ենք հնդեվրոպական բնաձայնական- փաղաքշական բնույթի բառ է համարվում: Այս տարածքում հազվադեպ գործածվող բառաձև է (Ախալքալաքի Կարծախ գ., Անիի Սառնաղբյուր (վերջիններս Ալաշկերտից գաղթածներ են)):*

4. Հայր *հասկացության բառազուգաբանություն է դիտվել* տացու *բառաձևը, որը* տիրացու *բառի մաշված տարբերակն է:*

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ (ԵՊՀ)

«ԳԵՏԱՐԳԵԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ՊԱՐԱԿԱՆՈՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Հայ միջնադարյան գրականությունը հարուստ է բազմաթիվ և բազմաբնույթ լեգենդներով, հրաշապատումներով, պարականոններով: «Գետարգել Ս. Նշանի պատմութիւն» երգը Անիական շրջանում (XI դ. վերջ-XII դ.սկիզբ) Անի շիրակյան մշակութային միջավայրում ստեղծված հուշարձան է: Այդ

բանահյուսական երկը մեզ է հասել գրավոր ավանդմամբ: Պահպանվել են պարականոնի երկու՝ համառոտ և ընդարձակ տարբերակները: Առաջին գրավոր հիշատակությունը և թերևս առաջին գրառումը կատարել է XII դարի պատմիչ Մ. Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ:

Ըստ այդ տարբերակի՝ 1021 թ. բյուզանդական Վասիլ II կայսրն արշավում է Հայաստանի և Վրաստանի վրա: Հայոց Հովհաննես Սմբատ արքայից նա պահանջում է հանձնել Անին, և այդ պատճառով Տրապիզոն է մեկնում կաթողիկոս Պետրոսը:

Արքան հրահանգել էր Անին կտակով հանձնել բյուզանդացիներին: Այդ պատճառով էլ Վասիլը մեծ պատիվների է արժանացնում հայերին, և Պետրոսը կատարում է Ջրօրհնեքի արարողությունը: Մյուռոնը ջուրը լցնելուց և խաչը ջրին հպելուց հետո լույսի սյուն է կանգնում ջրի վրա, գետի ընթացքը դադարում է: Զարհուրած կայսրը և հույն մետրոպոլիտները ծնկի են իջնում և համբուրում տեր Պետրոսի Խաչը: Վասիլը դառնում է միաբնակ և ավելի ուշ Սև լեռան հայկական վանքերից մեկում խոստովանում:

Նիկողայոս Մառը խոսում է հիշյալ համառոտ տարբերակի մասին և չափազանց հետաքրքիր քննություն կատարում: Ձեռագրական աղբյուրներում «Գետարգել Ս. Նշանի պատմութիւն»-ը ընդարձակ երկ է: Այն ներառում է Խաչափայտի Առաջին և Երկրորդ Գյուտերը, Քրիստոնեության ընդունման համառոտ պատմությունը և տրապիզոնյան հրաշքի դրվագը: Նրանում առաջադրված է ջրարգելության ընդարձակ մի այլ տարբերակ: Հռոմոսի վանքի վանական տեր Ատոմը փոխում է Ախուրյանի հունը (Ս.նշանով): Այդուհետև հրաշագործ նշանը պահվում է Կոտայքի գավառի Ձագավանքում:

ԱԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (ՀՊՄՀ)

ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարի վերջերից ֆրանսիական խորհրդապաշտությունը թափանցեց հայոց բանաստեղծություն: Նորագույն հոսանքի հմայքն անչափ մեծ էր: Թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ բանաստեղծությունը կրեց խորհրդապաշտական դպրոցի ազդեցությունը և ունեցավ իր հետևորդները՝ (Դ.Վարուժան, Միամանթո, Տիրան Չրաքյան (Ինտրա), Վ. Թեքեյան, Վ. Տերյան, Սվ. Իսահակյան, Եղ. Չարենց):

Գրականության մեջ կան կարծիքներ, թե Իսահակյանը չի հարել խորհրդապաշտական դպրոցին (Էդ. Ջրբաշյան, «Հորս գագաթ»):

Սակայն 90-ական թվականների վերջերից Իսահակյանն ընտրում էր խորհրդանիշ-պատկերներ՝ անապատ, մենություն, անտառ, լռություն, արևապաշտություն, որոնք բնորոշ էին խորհրդապաշտական բանաստեղծության ոգուն ու տրամադրություններին:

«Անապատային լռության», մենության, արևի սիմվոլիկ պատկերներին ավելի վաղ դիմել է խորհրդապաշտ բանաստեղծներից հանճարեղ Արթյուր Ռեմբոն. «Ես սիրեցի անապատը, այրված այգեստանները, գունաթափ կրպակները, գաղջ ըմպելիքները: Ես թափառում էի գարշահոտ նրբանցքներով, և աչքերս փակ՝ տրվում էի արևին՝ կրակի աստծուն» (Արթյուր Ռեմբո «Զառանցանքներ»):

Իսահակյանն էլ խելահեղ ինքնախոստովանանքով դարասկզբին իր բանաստեղծություններում և հետո՝ ավելի ուշ «Արու-Լալա Մահարի» պոեմում փարվում է արևին՝ վերանվաճելով «արևորդու» մեր նախնական վիճակը:

Խորհրդապաշտական դպրոցի դրսևորումներից մեկն այն էր, որ հիշողության միջոցով կենդանացվում էին անցյալի քաղաքակրթությունները, և այստեղ անվիճելի է խորհրդապաշտության ազդեցությունը Իսահակյանի պոեզիայի վրա: Իսահակյանի արևի խորհրդանիշը, արևային պաշտամունքը, արևին փարվելը, ձուլվելը հայ ժողովրդի հեթանոսական արևապաշտության արգասիքն է, մեր «ցեղական ոգու» արտահայտությունը (Ռ. Զարդարյան «Ցայգալույս» 1959):

Խորհրդապաշտները տենդագին որոնումների մեջ փնտրում էին իրենց կերպը՝ մինչև անհյութացումը, բացարձակ հոգիացումը: «Անրջանա՜լ, անհյութանա՜լ, վսեմ, վեհ (… Ու համոզվել, որ հոս Իդեալը չկա: Ռ. Սևակ, «Երթալ»):

Որքան համահունչ են այս տողերը Իսահակյանի 1900-ական թվականների տրամադրություններին: Թողնել այս նողկալի իրականությունը, ուր Գեղեցիկն է կործանվում, հեռանալ, սուրալ դեպի տիեզերքի անհուն խորքերը, արևներ խլել՝ «մի ազա՛ռ, պայծա՛ռ, մի նորոգ կյանքի»:

Մարդկային գոյության այս արատավոր ընթացքի հետ բանաստեղծը հաշտության ոչ մի եզր չի գտնում: Եվ այսպես է բացատրում անհաշտության այս վիճակը. «Ես ատում եմ նրանց, որովհետև սիրում եմ…»:

Իսահակյանի անհաշտ ատելությունը մարդկային ցեղի հանդեպ գրականագիտության մեջ բացատրվում է նաև Նիցշեի ազդեցությամբ: 1938թ. մարտի 30-ին նա խոստովանում է Արամ Ինճիկյանին. «Ինձ ոգևորում էր Նիցշեի բողոքող, ընդվզող ոգին… Նիցշեի ցանկացած աշխարհը հզորների աշխարհն է»: Սակայն նիցշեական գերմարդու մարդատյաց քարոզները, ուժի և իշխանության փառաբանությունը խորթ էին Իսահակյանի հումանիզմին:

Պառնասական Բոդլերից սկսած՝ մինչև Ռեմբոն, Վերլենը, Բրյուսովը, Բլոկը, մինչև Ինտրան (Տիրան Չրաքյան), Ռ. Սևակը, Վ. Թեքեյանը, Վ. Տերյանը և Ավ. Իսահակյանը մերժեցին այն աշխարհը, ուր տիրում էին բռնությունն ու կեղծիքը, ուր կործանվում էին ազատ միտքն ու արարման երջանկությունը: Նրանք փնտրեցին մենության երազի հանգրվաններ, կատարելության այլ եզերքներ: Խորհրդապաշտների Գեղեցիկի ըմբռնումը «մենամարտեց» խավարի ու իմաստականության հետ և մերժեց մարդկային ցեղը, սակայն անդունդը երբեք չնայեց նրանց մեջ:

Իր արիական ցեղերի արյունով ու ոգեղենությամբ ներշնչված մարգարե բանաստեղծի խորունկ հոգին համամարդկային ցավի դրոշմն էր կրում, ուր երբեք մենությունն ու անապատային լռությունը չդարձան գաղափար: Նա որ հավատում էր ոգու անմահությանը, հոգիացմանը, առասպելական Բուդդան թոչունի նման փոխակերպվելով հավերժագո էության, սիրեց կատարյալ և

իմաստուն լույսը՝ «հասնելու համար բացարձակ երանության՝ Նիրվանային» (Ավ. Իսահակյան «Ծանոթ և անծանոթ էջեր»):

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ԾՀՀԿ)

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԱԺՇՏԱՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՋ

Հայ ազգային երաժշտությունը հնդեվրոպական դարավոր մշակույթի արժեքավոր մասն է, և որպես այդպիսին՝ հանդիսանում է պատմամշակութային ուսումնասիրության մեծածավալ ասպարեզ՝ համապատասխան աղբյուրների համակարգով: Թեև հայ երաժշտական պատմագիտությունը հասել է նշանակալի ձեռքբերումների, այդուհանդերձ հատուկ աղբյուրագիտական հետազոտություններն այս բնագավառում բացակայում են: Դրանց հիշյալ մեթոդաբանական մոտեցումը կարևորվում է հայ երաժշտարվեստի պատմության բոլոր նշանավոր հետազոտողների աշխատություններում (Ք. Քուշնարյան, Ռ. Աբայան, Ալ Շահվերդյան, Ն. Թահմիզյան):

Իբրև հնագույն մշակութային արժեքների կրող, հայ երաժշտության հնագույն որոշ շերտեր այսօր պահպանվել են վերապրուկի տեսքով: Այս պայմաններում երաժշտական մշակույթի պատմությունը վեր հանելու կարևոր աղբյուր է դառնում նաև միջնադարյան հայ մատենագրությունը՝ մասնավորապես հայ պատմիչների գործերը: Սրանց մեջ երաժշտությանը վերաբերող հիշատակությունների հնարավորին չափ ամբողջական հավաքագրումն ու դրանց համատեքստի իմաստավորումը կնպաստի ազգային երաժշտության ուսումնասիրության համար կարևոր մի աղբյուրի ճանաչողական արժեքի բացահայտմանը:

Պատմագրական հիշատակությունների բնորոշիչներից մեկը բովանդակության բազմազանությունն է, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում անդրադարձը՝ երաժշտապատմական հիմնական ոլորտներին. միջնադարում երաժշտության հասարակական գործառնությանը, մասնակցությանը ծիսական սիմվոլիկայում, նվագարանային արվեստին, ժանրային համակարգին, անհատ երաժիշտներին, երաժշտության տեսությանն առնչվող խնդիրներին և այլն:

Պատմագրական հիշատակությունների բնույթը միանշանակ չէ: Դրանց մեջ հաճախ տրվում է հստակ և ամփոփ տեղեկատվություն: Որոշ դեպքերում այդ տեղեկատվությունը անուղղակի է և ենթակա տարբեր մոտեցումների: Այսօր էլ դրանցից շատերը վիճարկվում են ու, թեև մեկնությունները հաճախ իրարամերժ են, սակայն բխում են աղբյուրներում պարունակված վկայությունների բովանդակությունից: Այս պարագայում վճռորոշ նշանակություն է ձեռք բերում նաև այլ աղբյուրների հատ համադրումը: Բացառիկ են այն հիշատակությունները, որոնցում առկա է եզակի փաստական նյութ:

Ընդհանրացնելով ասվածը՝ գալիս ենք այն համոզման, որ պատմագրական աղբյուրներում ամփոփված նյութերի համալիր ուսումնասիրումը մեծապես կնպաստի հայ երաժշտապատմական գործընթացի հետագա ամբողջականացմանն ու համամասնականության ձեռք բերմանը:

ԿԱՐԻՆԵ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԱԻ)

ՇԻՐԱԿԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԸ (վերականգնման նախնական փորձ)

Շիրակի ավանդական հարսանիք՝ բազմաբնույթ, խորհրդաստ արարողություններով հարուստ ամբակուռ ծիսակարգ, որը հայտնի է նաև իր երգ-երաժշտությամբ: Վերջինս՝ շիրակյան հարսանյաց ծեսի անքակտելի և կարևորագույն բաղադրամասը, գրեթե չի ուսումնասիրված, ինչը զգալիորեն թերացնում է եղած պատկերացումները ծեսի վերաբերյալ: Ավելին, բացը խորանում է նոր ժամանակների «հովերի» ներքո ավանդական հարսանիքի խաթարման պատճառով, երբ մոռացության են տրվում հարսանեկան որոշ արարողություններ և դրանց շրջանակում՝ նաև երաժշտությունը:

Մեր նպատակն է վերականգնել շիրակյան ավանդական հարսանյաց ծիսակարգի երաժշտական նկարագիրը: Առաջին քայլը, այն է՝ երաժշտության ծավալի և տարատեսակների պարզաբանումը ծիսակարգում, փորձել ենք կատարել՝ հիմք ընդունելով Ա.Մխիթարյանցի «Փշրանքներ Շիրակի ամբարներից» հայտնի մեծարժեք դասական հետազոտության «Ընտանեկան բարք և սովորույթք» գլխի «Հարսանիք» բաժինը (Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 238-253), որտեղ հեղինակը ծիսական այլևայլ մանրամասները նկարագրելիս բազմիցս հիշատակում է նաև դրանց ուղեկցող երգն ու նվագը: Մեր եզրակացությունները հետևյալն են.

1. *Շիրակի ավանդական հարսանիքի 44 մեծ ու փոքր արարողությունների գերակշռող մասը (27) բնորոշվում է երգ երաժշտության կայուն առկայությամբ:*
2. *Վերջինս կազմում են ծիսական և ոչ ծիսական բազմաթիվ երգեր (մեծ մասամբ առանց գործիքային նվագակցության, նաև նվագակցությամբ) և գործիքային նվագարաններ,որոնք արտացոլում են հայ ավանդական (մոնոդիկ) երաժշտության ժանրային ողջ տեսականին. (վոկալ, վոկալ-գործիքային, գործիքային):*
3. *Թե՛ երգը, թե՛ գործիքային նվագը հավասարապես հատուկ են ծիսակարգին. 27 «երաժշտական» արարողություններում գրանցել ենք 13 երգային և 14 գործիքային նմուշներ:*
4. *Ծիսակարգին հատուկ է նաև երգային նմուշների բազմազանությունը. ժողովրդական, աշուղական (մի քանիսը նաև տաճկերեն լեզվով), եկեղեցական:*
5. *Գործիքային նվագարանները նույնպես միատարր չեն. սազանդարային արվեստ, անսամբլային երաժշտություն (դավուլ, զուռնա):*

Այս հատկանիշները փորձել ենք նաև «շարադրել» աղյուսակի միջոցով, որը մտադիր ենք ցուցադրել գիտաժողովին, մեր զեկուցման ընթացքում:

ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ (ԵՊԿ)

ՇԻՐԱԿՈՒՄ ՁԱՅՆԱԳՐՎԱԾ ԱՎԵՏԻՍՆԵՐ

1. Ավետիսների պահպանվածության խնդիրն առաջացել է, թերևս, 20-րդ դ. երկրորդ կեսին: Կոմիտասը հիշատակում է «անթիվ-անհամար» ավետիսների գոյությունը տարբեր ազգագրական շրջաններում: Սակայն մեզ հայտնի չեն 20-րդ դ. սկզբին Շիրակում ձայնագրված ավետիսներ:
2. Ա.Մխիթարյանցը հիշատակվում է Ծննդյան Ճրագալույցի երեկոյան «տիրացուների» և «կարդացուոր» տղաների ավետիս ման գալը, մինչդեռ փոքր և անգրագետ երեխաներն անում էին «մընջ» (լռելյայն) ալելուիա: Բացի այդ, Մխիթարյանցը մեջբերում է «Հրէս էկաւ մի ձիաւոր» տողով սկսվող ավետիսի մի հատված:
3. Մեզ ծանոթ Շիրակի 5 ավետիսներն էլ ձայնագրված են մերօրյա բանահավաքների՝ Մ. Բրուտյանի, Ա. Սահակյանի, Հ. Ափինյանի կողմից: Բանասացները ծագումով մշեցի կամ բասենցի են:
4. Տվյալ երգերից ոչ մեկում չկա «Հրես էկավ» տեքստային բաղադրատարրերը: Հինգ նմուշներից մեկը պատկանում է այսպես կոչված «գեղջկական» ավետիսի տեսակին, մեկը կազմված է երկու տարբեր ավետիսներից, որոնցից մեկը թերի «աստեղային» է, մյուսը՝ «գեղջկական»: Մնացյալ երեք նմուշները պատկանում են ավետիսի «աստեղային» տիպին: Մեղեդիներից միայն մեկը թեթևակի հիշեցնում է Վասպուրականի ավետիսի տիպական մեղեդին: Մյուսները միանգամայն ինքնուրույն մեղեդիներ են:
5. Առկա տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ այս ավետիսները «ներգաղթել են» իրենց կրողների հետ:

ՀԱՍՄԻԿ ԱՓԻՆՅԱՆ,
ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)

ՆՎԱԳԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

XIXդ. երկրորդ կեսի Ալեքսանդրապոլ-Գյումրու ավանդական երաժշտական մշակույթի ինքնօրինակ ճյուղերից մեկը նվագարանաշինությունն էր: Վերջինս՝ պայմանավորված նեղ կիրառական գործառույթով, զարգացել էր զուտ կատարողական արվեստին առընթեր: Սրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ ճանաչված երաժիշտ կատարողների ընտանիքներում ընդունված էր նվագարաններ նորոգելու, ապա՝ նաև պատրաստելու ավանդույթը: Նշենք Թառջյանների (Թառջոնք), Ղոջյանների (Ղոջոնք), Սնդոյանների (Սնդոյենք) գերդաստանները:

Նվագարանաշինությունն իր բնույթով թեև մոտ է արհեստագործությունը, սակայն առայսօր ընդգրկված չէ Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում և կարոտ է ուսումնասիրման և լուսաբանման:

Ներկա հաղորդման մեջ նվագարանաշինությունը դիտարկում ենք երկու տեսանկյունից.

ա) ֆոլկլորագիտական՝ կենցաղավարող նվագարանների տեսականիի և գործառույթի խնդիրներ:

բ) Սոցիո-նորմատիվ՝ նվագարանների կիրառման հասարակական և սոցիալական նշանակությանն առնչվող խնդիրներ:

Խորհրդային շրջանում նվագարանաշինության ավանդույթները ենթարկվեցին ժամանակի ոգուց բխող փոփոխությունների: Նվագարանների զանգվածային-գործարանային արտադրությունը նվազեցրեց անհատ վարպետի հասարակական նշանակությունը և ձեռակերտ նվագարանների գործածումը դարձավ վարպետ-կատարողների մենաշնորհ: Չնայած այս հանգամանքին, Գյումրուն բնորոշ քաղաքային ժողովրդական արվեստում այսօր էլ պահպանվել է նվագարանաշինության նկատմամբ անհատականացված մոտեցումը: Այսօրվա նվագարանագործները վարպետորեն համակցում են ավանդական նվագարանաշինության սկզբունքները ժամանակակից տեխնիկական միջոցների հետ:

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՄԵԼԻՔՅԱՆ (ԵՊԿԳՄ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Ալեքսանդրապոլը նշանավոր էր ոչ միայն իր շինություններով, այլև արհեստավորների, վաճառականների, արվեստը սիրող ու գնահատող սրամիտ մարդկանց, իր ինքնատիպ միջավայրով:

Հայ աշուղական երգարվեստը վաղուց արժանացել է ոչ միայն արվեստասեր հասարակության բարձր գնահատանքին, այլև անվանի երգիչ -կատարողների, պատմաբանների, երաժշտության տեսաբանների, բանահավաքների և հրատարակիչների ուշադրությանը:

1852թ. հայ մշակույթի մեծ երախտավոր Գ. Հախվերդյանը, դասակարգելով քաղաքային և գյուղական միջավայրի երգերը, գտավ, որ XIX դարում ոճական բազմազանություններով առանձնացող ամենահարուստ ուղղությունը աշուղական երգարվեստն է, որը սերտ առնչություններ ունի գեղջկական երգի հետ: Այս տեսակետից միանգամայն իրավացի են նրանք, որոնց գնահատմամբ Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը իր ժամանակին դարձավ մեր ազգային ինքնագիտակցության զարթոնքի և ազնիվ ձգտումների արտահայտությունը:

Ալեքսանդրապոլի աշուղների երաժշտական ժառանգության արժեքավոր մի մասի փրկության և պահպանման հայրենանվեր գործում մեծ էր նշանավոր բանահավաք Ա. Բրուտյանի դերը: Նա Հ. Լիմոնջյանի ձայնանիշերով գրի առավ ոչ միայն Ջիվանու, այլև ժամանակի մի շարք աշուղների մեղեդիները:

Ուշագրավ է նաև Կոմիտասի վերաբերմունքը հայ աշուղական և, մասնավորապես, Շիրակի ժողովրդական երգարվեստի նկատմամբ: Դա ցայտուն դրսևորվեց 1904թ., երբ Կոմիտասը զբաղված էր Հ.Թումանյանի «Անուշ» պոեմի հիման վրա օպերա ստեղծելու խնդրով, և այդ նպատակով որոշել էր օգտագործել նաև աշուղ Ջիվանու «Քո փափագով», «Քույրերիս մեջ» և աշուղ Շիրինի «Այգեպան» երգերի մեղեդիները: Ավելի ուշ,Փարիզում կարդացած մի դասախոսության ընթացքում Կոմիտասը անձամբ է երգել Շերամի «Ալ ու ալվան ես հագել»-ը:

Հայ, մասնավորապես, Ալեքսանդրապոլի աշուղական երգարվեստի լավագույն կտորները հետագայում մեծ հաջողությամբ հնչեցին տարբեր համերգային բեմահարթակներից Թաքուլ Ալթունյանի երգի ու պարի պետական անսամբլի և այլ համույթների կողմից:

Ա. Բրուտյանի վերջերս լույս տեսած «Ռամկական մրմունջներ» ժողովածուի II հատորի նյութը ուղղակիորեն առնչվում է Ալեքսանդրապոլի հայ աշուղների երգերին, մեկ ու կես դար առաջ ստեղծված երգեր, որոնք հնչել են մեր ազգային ինքնագիտակցության զարթոնքի օրերին և այսօր էլ, մեր պետականության կայացման պահին նույնքան արդիական են, որքան առաջ:

Այս հավատամքով էլ ձեռնամուխ ենք եղել Ալեքսանդրապոլի XIX դ. երկրորդ կեսի հայ աշուղական երգային ժառանգության նյութերը իմի բերելու, համադրելու և արժեքավորելու գործին:

ՀԱՍՄԻԿ ԱՓԻՆՅԱՆ (ՇՀՀԿ)

ՕՐՈՐՈՅԱՅԻՆ ԵՐԳԻ ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայտնի է, որ ժողովրդական երգը խոսքային և մեղեդային բաղադրիչների միասնություն է, և նրա երաժշտաբանաստեղծական կառուցվածքի ուսումնասիրությունը տարվում է համակողմանի հետազոտության ճանապարհով;

Արդի երաժշտական ֆոլկլորագիտության մեջ որոշակի շեշտադրությամբ կարևորվող ժողովրդական երգի տաղաչափության ուսումնասիրման հարցը, որ դեռևս Կոմիտասի աշխատություններում էր բարձրացվում, այսօր քննության լուրջ առարկա է հայ երաժշտագետներից շատերի համար (Կ. Խուդաբաշյան, Ա.Բաղդասարյան, Զ. Թագակչյան և այլն): Իբրև խնդրի լուծման լավագույն եղանակ, գործադրվում է վանկաչափական վերլուծության սկզբունքը: Այս մեթոդի կիրառումը ժողովրդական երգի հետազոտման այլ շերտերին վերաբերող դիտարկումների մեջ, անշուշտ, լայն հնարավորություններ է ընձեռում նաև ժանրային, տիպաբանական, կառուցվածքային և այլ ոլորտների բնորոշ հատկանիշները երևան բերելու հարցում:

Օրորը հայ ժողովրդական ստեղծագործության այն ժանրն է, որում փայլուն ներդաշնակությամբ է արտացոլվել հայոց լեզվի հնչյունական և երգային ելևէջի միասնությունը:

Հայ օրորների տաղաչափությանը նվիրված որևէ ամբողջական ուսումնասիրություն մեր տեսադաշտում առայժմ չկա:

Դիտարկումների համար հիմք է ծառայել մեր կողմից կազմած «Շիրակի նանիկներ»-ի ձեռագիր ժողովածուն, որում տեղ են գտել հայ երաժշտագետների՝ Սպ. Մելիքյանի, Մ. Բրուտյանի, Ա. Փահլևանյանի, Մ. Մանուկյանի, Ա. Բաղդասարյանի տարբեր տարիների գրառումները: Առաջին նմուշի գրանցումը վերաբերում է 1914 թ-ին, վերջինը՝ 2000 թ-ին: Երգասացները հիմնականում տարիքային տարբեր խմբերի կանայք են՝ խիստ անհատական և ինքնատիպ երաժշտալեզվական մտածողությամբ, արտահայտչամիջոցների յուրատիպ ընտրությամբ:

Երգերում արծարծվող թեմաները բնորոշվում են բովանդակության բազմազանությամբ, հուզազգացողության նրբերանգների առատությամբ: Օրորներում քիչ չեն ժանրային ներթափանցումներն ու այլևայլ զուգորդումները: Հաճախադեպ են պատմականի և օրորի համադրման օրինակները:

Կայունը և պարտադիր կատարվող հավելումը կրկնակը կամ կրկներգն է, որն ավելանում է երգի յուրաքանչյուր տանը, կամ յուրաքանչյուր տողին՝ ստեղծելով պարբերական շարժման պատրանք, ապահովելով երգի գործառական նշանակությունը:

Օրորոցային երգերում տաղաչափական համակարգը բարդ և բազմակերպ դրսևորումներով է արտահայտված:

Վանկաչափական վերլուծության արդյունքում պարզվել է.

- *Օրորոցային երգերը հիմնականում բաղկացած են երկտող, եռատող, մեծամասամբ քառատող, հնգատող հանգավորված կրկնակներով կամ ավելի հաճախ կրկներգերով հավելված բանաստեղծական տողերից:*
- *Դիտարկվում են հանգավորման բազմազան տեսակներ և տարատեսակներ:*
- *Առավել բնորոշ են 7,8,10, 11 վանկանի տողերը, որոնք արտահայտված են եղանակավորման տարբեր ձևերի մեջ՝ վանկական (սիլաբիկ), չափական (տոնիկական), նաև խառը՝վանկաչափական տարբերակներով:*

Օրորներում, ինչպես և հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության այլ տեսակներում, տողը կազմված է չափական տարբեր ոտքերի հաջորդականություններից, առավել հաճախ հանդիպում են մեծասար-մեծավերջ, IV պեռն-քողաբորբ, ավարտեղ-վերջատանջ, մեծավերջ-ներգև, անգայթ-ներգև և այլ ոտքեր:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱ - ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
ԱԻ - ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
ԳՊՄԻ - Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ
ԵՃՇԻ - Երևանի ճարտարապետա - շինարարական ինստիտուտ
ԵՊԿ - Երևանի պետական կոնսերվատորիա
ԵՊԿԳՄ - Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ԼԻ - ԳԱԱ Լեզվի ինստիտուտ
ԿԱԹ - Գյումրու «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան
ՀԱԻ (ИАЭ) - ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀԱՊԹ - Հայաստանի ազգագրության պետական թանգարան
ՀՊՄՀ - Հայկական պետական մանկավարժական համալսարան
ՃԱԹԻ - Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ
ԺԻ - ԳԱԱ Պատմության ինստիտուտ
ՇԵԹ - Շիրակի երկրագիտական թանգարան
ՇՀՀԿ - ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ (ՀԱԻ)
ՀԱՌԻՃԻ ՎԱՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1989-1991թթ.)…… 3
ԼԱՐԻՍԱ ԵԳԱՆՅԱՆ (ՇԵԹ, ՇՀՀԿ)
ՍԱՐԱՏԱԿԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ……...4
ЖОРЕС ХАЧАТРЯН, АСМИК МАРКАРЯН (ИАЭ)
ЭРЕБУНИЙСКИЙ КЛАД РИТОНОВ……5
ФЕЛИКС ТЕР-МАРТИРОСОВ
О ЗЕМЛЕТРЯСЕНИИ III В. ДО Н. Э. В АРМЕНИИ……..7
ՀԱՄԱԶԱՍՊ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՇԵԹ, ՇՀՀԿ)
ԲԵՆԻԱՄԻՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ 2002 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ……8
ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ (ՀԱԻ)
ՍԱՍԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ……..10
ԱՐՄԵՆ ՆԱԽՇՔԱՐՅԱՆ (ՇՇՀԿ, ՀԱԻ)
ԹՌՉՆԱՋԱՐԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՆԱՋԱՐԴ ԽԵՅԵՂԵՆՈՒՄ……11
ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ (ՀԱԻ)
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍՊԱՍՔԻ ԵՋԱԿԻ ՆՄՈՒՇ ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԻՑ……...12
ՄԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՀԱԻ)
ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՄԲԵՐԴԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ……..13
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (ԳՊՄԻ)
ԿՈՒՄԱՅՐԻ-ԳՅՈՒՄՐԻՆ ԳՅՈՒ՞Ղ, ԹԵ՞ ՔԱՂԱՔ……..15
ՆԱՏԱԼՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԹՈՐՈՄ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԴԵՐԸ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ……16
ՄՈՒՐԱԴ ՀԱՄԲԱԹՅԱՆ (ԱԻ)
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊ ԳՅՈՒՂԻ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ……18
ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՃԱԹԻ)
ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԻԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔՈՒՄ……...19
ՔՐԻՍՏԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ (ԱԻ)
ՀԱՌԻՃԱՎԱՆՔԻ ԹՌՉՆԱԿԵՐՊ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ……...……21
ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՀԱԻ)
ՀԱՅՈՑ ԱՆԳԵՂ ԱՍՏՎԱԾԸ……22
ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ (ՀԱԻ)
ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԱՆ ԵՎ ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ……24
ԼՈՒՍԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՇՀՀԿ)
ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ «ՔԱՋԵՐԸ»……..26

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՇՀՀԿ)
ՄՈՒՇԵՂ ԱՆՎԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ……28
ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ (ԵՊՀ)
ԱՐԵՎԱՅԻՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԽՅԱԼ ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ……..30
ԳՐԻԳՈՐ ԱՂԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)
ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՎՍ ՀԱՅ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ……32
ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ (ՀԱԻ)
ԳՅՈՒՄՐՈՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ……...33
ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ (ՀԱԻ, ՀԱՊԹ)
ՆԵՐՔՆԱԶԳԵՍՏԸ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ……34
ԿԱՌԼ ՍԵՂՐՈՍՅԱՆ (ՀԱԻ)
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՇԻՐԱԿԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԵՎ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ (19-րդ. դ. - 20-րդ. դ. 70- ական թթ.)……..36
ԺԵՆՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՀԱԻ)
ՏԵԱՌԼԲՆԴԱՌԱՋ – ՏԸՐԲԸՆԴԵՋԻ ՇԻՐԱԿՅԱՆ ՄԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՇՈՒՐՋ……..38
ԿԱՐԻՆԵ ԲԱՋԵՅԱՆ (ՇՀՀԿ)
ՇԻՐԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ ՎԵՐՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ……38
ԱՐՏԱՇԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ (ՇՀՀԿ)
ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ XX դ. ՎԵՐՋԵՐԻՆ (ըստ էթնոժողովրդագրական հետազոտության նյութերի)……...40
ИРИНА ДОЛЖЕНКО (ИАЭ)
СОЦИАЛЬНЫЙ СТАТУС РУССКИХ АРМЕНИИ
(по материалам переписи 1989г.)……...41
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ (ՀԱԻ)
ՀԵՏԵՐԿԱՇԱՐԺՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ «ՏՎՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԵՐՑՆՈՂՆԵՐԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ……42
ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ (ՀԱԻ)
ՏՈՆԵՐԸ ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ (էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն)……...44
ՌՈԶԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ (ՇՀՀԿ)
ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ……46
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ (ՀԱԻ)
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ - ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ……47
ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (ՀԱԻ)
ՉՀԻՇԵԼ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ (հուշարձանամարտի ազգագրություն)……49
ԼԻԼՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԹԱՄԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ (ՀԱԻ)
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ըստ 2002թ. սոցիոլոգիական հարցումների)……50
ԱՆԱՀԻՏ ՎԱԼԵՍՅԱՆ (ԳՊՄԻ)
ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ……..52
ՆԱԶԵԼԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ (ՀՊՄՀ)
ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ 1988-1998թթ. 53

ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ (ՇՀՀԿ)
ԺԱՄԱՆԱԿԻ ԳԻԾԸ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԱՀԻՆ……...54
ՋԵՄՍԱ ԲԱՌՆԱՍՅԱՆ (ԼԻ)
ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ՋԵՎԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԼԵՋՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ……...56
ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ԼԻ)
«ՄԱՅՐ» ԵՎ «ՀԱՅՐ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԻՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ……...57
ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ (ԵՊՀ)
«ԳԵՏԱՐԳԵԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ՊԱՐԱԿԱՆՈՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ……59
ԱԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (ՀՊՄՀ)
ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ……...60
ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԱԺՇՏԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՋ……...61
ԿԱՐԻՆԵ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (ԱԻ)
ՇԻՐԱԿԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԸ (վերականգնման նախնական փորձ)……...62
ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ (ԵՊԿ)
ՇԻՐԱԿՈՒՄ ՁԱՅՆԱԳՐՎԱԾ ԱՎԵՏԻՄՆԵՐԸ……63
ՀԱՍՄԻԿ ԱՓԻՆՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՇՀՀԿ)
ՆՎԱԳԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ……63
ԼՅՈՒԴՄԻԼԱ ՄԵԼԻՔՅԱՆ (ԵՊԿԳՄ)
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ……...64
ՀԱՍՄԻԿ ԱՓԻՆՅԱՆ (ՇՀՀԿ)
ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԻ ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ……...……65
Հապավումների ցանկ ……...……...……66
Բովանդակություն ……... ..67